ՕՐԱԳՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԷՏԱՏԻՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1860

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՑՔ.

ԱՄՍԱԳԻՐՔ 2.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Քաղքերն Սպանիական թագաւորի
ՀԱՅՏԱՏԱՄԻՏ ԱՐՔԱՑԱԶԸ. Թարգմ. Ս. Նալբանդ . . 83—127

Հայոց ազգի լուսաւորութեան, կամ
ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԴԱՐԸ. գրչ Ս. Նալբանդ 128—164

ԹՈՄՍԿԱՅ

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

1860.

ՓԵՏՐՎԱՐ 1860 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

ՔԱԼԳԵԴՈՆ

ՍՊԱՆԻԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ

ՀԱՍՏԱՏԱՄՈՒՏ ԸՐՐԱՅԱԼՔ.[1])

ՀԱՆԴԻՍԱՑՈՑՑ ԱՆՁԻՆՔ.

ԳՕՆ ՖԵՐՆԱՆԴՕ } Պօրտուգալիայի արքայազունք.
ԴՕՆ ԷՆՐԻԿ }
ԴՕՆ ԺՈՒԱՆ ԿՈՒՏԻՆՀՕ.
ԱԼՖՕՆՋՕ, *թագաւոր Պօրտուգալիայի.*
ԲՐԻՏՕ, *Պօրտուգալիայի գինուոր.*
ԹԱԳԱՒՈՐԸ ՖԵՑԻ.
ՄՈՒԼԷՑ, *Նորա զօրապետը.*
ՍԵԼԻՄ, *պալատնական փեսի թագաւորի.*
ՓԻՆԻՓՕՍ, *արքայազն օրիորդ.*
ՐՕԶԱ } *Նորա ազախինքը.*
ԶԱՐԱ }

ԶԻՆՈՒՈՐՆԵՐ, ՔՐԻՍՏՈՆԵԱՅՑ ԾԱՌԱՅՔ ԵՒ ՈՒՂԵԿԻՑ ՄԱՐԴԻԿ.

[1]) *Եթէ որ և իցէ մասնաւոր պարտ պատճառ ստիպանվի լսել Ձարտարուեստից արքարանի բուն ներքուստը, ապա դա է «Հաստատամուտ արքայազն» քալդերոնի պատճառ, բանաստեղծական Ձարտարուեստիւնը այս տեղ իւր գմայլեցուցիչ գեղեցկու-*

I.

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ·

ՏԵՍԱՐԱՆ 4·

(Լուռնային անտառասահման.)

ԹԱԳԱՒՈՐԸ· ՖԵՐՆԱՆԴՈ· ՄՈՒԼԻՑ· ԴՕՆ ՋՈՒԱՆ· *Հետոյ* ԴՕՆ ԷՆՐԻԿ·

ԴՕՆ ՋՈՒԱՆ (դուրս երևելով)·

Ա՛հ սպատիս տէր, մօտ արի ծովեզրին,
Եւ դու կը տեսանես ամենասիրաւոր գործը
Որով մարդկային ճարտարութիւնը
Երբ և իցէ պայծառակերպել է բնութիւնը,
Մի քրիստոնեայ ազգի թիակավար նաւ
Ծովի արձակավայրից դարձուցանում իւր ընթացքը
Դէպ ի նաւահանգիստը, թէպէտ մնայլադէմ բոլորովին
Եւ սև, բայց այնպէս գեղեցիկ,

թիւնքը ամենառատ լինութեամբ, և իւր բոլոր գործութիւնքը միաւորել է յատակ ջնելու մի անզուգական, անհասանելի կատարելութեամբ ճարտարապետական գործ. այլև այս գործի վերայ ծայրե ծայր թագաւորում է ջերմառնդութիւն և հաւատ որպես մի հանդիսաւոր երկնքի ձայն, և տալիս է նորան մի աստուածային նուիրանք որի մէջ այս երկրաւոր կեանքս ասնանմոռանում իւր ամենավերին պայծառակերպութիւնը, իսկ ցաւ ու ողբը վոխվում մի խանդակաթ ցնծութիւն, որպես երգը մեռանող մարտիրոսի շրթունքի վերայ: Հաստատամիտ աբբայազը, այս զարմանալի ողբերգութիւնը, բոլոր ժամանակների համար, արձանացած է որպես ամենավերին գործը, որ սխրագործել է քրիստոնեական բանաստեղծութիւնը: Աւելորդ է դատողութիւնը Շաբքի· Տե՛ս նորա Geschichte der dramatischen Literatur und Kunst in Spanien, Հատ. 3· երես 115: Ընդդէմ այս դատողութեանը կարելի էր շատ փոքր բան յառաջ բերել. միայն թե պետոյ է լաւ ուշադիր լինել «քրիստոնէական բանաստեղծութիւն» յաւելուածին, և ընդունել դորան պատշաճաւոր մեկնով: Գլխաւոր իրողութիւնքը գործողութեան մինչև այն տեղ, ուր բանաստեղծը յառաջ է տանում նորան և հաւատացնում մինչև վերջը, են սոքա. Պորտուգալիայի արքայազն Ֆերնանդօն, պատերազմը Ափռեան կարվի, իւր եղբօր Էնրիկի հետ միասին և գերբով հասնում Ափրիկայի ցամաքահողին: Մի մարդաբերութիւն, թէ այս պատերազմական նաւարկութիւնը պետոյ է ինաւակար լինէր Պորտուգալիային, և ուրիշ ձախորդ նա-

Որ հիանում մարդ, երբ որ տեսանում
Թէ ինչպէս տրտմութիւնը կարող էր լինել այդպէս ուրախ.
Պօրտուգալիայի վահաններով պսակած է նորա կատարը.
Պատճառ, որովհետև նորա արքայազն երիտասարդը գերի է ընկած,
Տրտմութեան քօղերով վերարկել են նորա ծառայութիւնը,
Եւ նորա եկել են աղատելու նորան,
Լուրեանց ցաւը այդպէս քարոզելով։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Ա՛խ, իմ բարեկամ Դօն Ջուան, ինչպէս կարող էր
Այս լինել տրտմութեան պատճառը.
Նեմե գալիս էին, ինձ ազատելու համար,
Պատ, հաւատալի կացուցանելով ազատութիւնը,
Լինելու էին և նշանները ուրախ ու ղուարճ։

(Դօն Ենրիկ տրտմութեան մէջ, մի քանի նամակ ձեռքին. նորա ընկերքը.)

ԵՆՐԻԿ.

Ծոյլ տուեցէք, վանմապատիւ տէր, գրկախառնել ձեղ։

խոպուշակութիւնը ըմռցել էին զօրքի սիրտը երկիւղալից ակնկալութիւններով. բայց Ֆերնանդօն ցուցանում խակոյն իւր բարձր, դեպ ի Աստուած բողբոջվին լցուած հոգին, պատրաստում իւրայինքը դեպ ի պատերազմ անհաւատների հետ և գերի է տանում թշնամական զօրապետ Մուլէյին։ Մուլէյը տեսանելով իւր յաղթողի ազնուական վարեցողութիւնը, քաջալերվում դարձ թափելու իւր սիրտը նորա առաջև, և պատմում թէ նա սիրուհի Մարոքքոյի թագաւորի դուստրը, գեղեցիկ Փիւնիքսը, և երկիւղ ունէր, մի գուցե այս աղջիկը իւր նշանածի գերութեան պատճառով տխրվի իւր հօրից, հարթանալ մի այլ վեսայի։ Այս պատմութիւնը լսելով Ֆերնանդօն, խակոյն ազատում իւր գերին։ Բայց այս միջոցիս անհաւատները աւելի զօրացած բազմութեամբ յառաջ են խաղում, և քրիստոնէական զօրքը յաղթվում բոլորովին։ Ֆերնանդօն քաջութեամբ ընդդիմանալով թշնամուն, հարկադրվում անձնատուր լինել և գերի է տարվում դեպ ի Ֆես, և թագաւորը յայտնում թէ կամէր արձակել նորան գերութենից այն պայմանով, որ Պօրտուգալացիք յետ տային Ճէյտա ամրոցաշէնքը, և Ենրիկին ուղարկում դեպ ի Պորտուգալիա միջնորդութիւն լինելու այս մասին։ Ֆերնանդօն խակոյն յայտնում, որ նա չկամէր այս փոխանակով ազատութիւն ստանալ, և այնուհետև գալիս են գերի արքայազնի վերայ ծանր փորձութիւններ շատ, բայց սկզբումն դեռ ևս վարվում նորա հետ թագաւորը մեծարանքով։ Եբանոտագարութեամբ կապված Մուլէյը, որի սէրը դեպ ի Փիւնիքս արքայազն աղջիկը ևս առաւել հիւանդում գործողութեան հետ, ամենայն հնար գործ է դնում փրկելու Ֆերնանդօյին, բայց ի զուր։ Վերջապես Դօն Ենրիկը սեղ է հաստատում որպէս լիակարող գործակալ սերութեան, տալիս է Ճէյտան անհաւատների ձեռքը և ազատում արքայազնին։

ԹԱԳԱՒՈՐԸ.

Ձեր արքայապատիւ մեծութեանը սիրալից ողջոյն։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Ո՜հ, դուն ջուան, դա մահաբեր է ինձ։

ԹԱԳԱՒՈՐԸ.

Ո՜հ, Մուլէյ, դա ըերում ինձ փառք և մեծութիւն։

ԷՆՐԻԿ.

Որովհետև ձեր կերպարանքը
Հրատարակում ինձ ձեր բարեկեցութիւնը,
Ա՛ստմապատիւ տէր, շնորհեցէք ինձ
Դրկախառնել իմ եղբայրը.
Ո՜հ Ֆերնանդո. (նոքա գրկախառնումն իրեար.)

ՖԵՐՆԱՆԴՈ.

Իմ Էնրիկ,
Այդ ինչ հագուստ է. բայց կացիր.
Երդէն բաւական շատ բան ասում ինձ քո աչքը.
Ծո՛ղ այդ բանը խօսքով լսեմ քեզանից.
Մի լացիր. պատճառ, եթէ դա ասելու էր ինձ,
Թէ յաւիտեան լինելու էի այս տեղ ծառայ,
Այս է այն բանը որին ես ցանկանում եմ.
Կամէի, որ դու շնորհաւորէիր միայն իմ դրութիւնը,
Եւ փոխանակ ցաւի ու տրտմութեան, տոներ
Կատարէիր ուրախութեամբ, մեծագին հագուստներով։
Այս, ինչպէս է ապրում իմ տէրը և եղբայրը.
Միայն թէ ողջ և առողջ է թագաւորը,
Այլ ոչինչ բան կարող չէր տրտմեցնել ինձ.
Բայց դու դեռ ես լո՞ւռ ես.

ԷՆՐԻԿ.

Որովհետև կրկնագարձ հարուածը
Կրկնակի զգում մարդս, և ես կամէի,
Մի անգամ տալ քեզ զգալ։—
Բայց լսիր դու, վսեմապատիւ տէր.
Թէև մի սարի բարձրութիւնք
Չին այս տեղ մի շինական պալատ միայն, այս տեղ
Խնդրում քեզանից շնորհել ինձ ուշադրութիւն,
Ձմերժել մի պատերազմական գերու ազատութիւն,
Յարգութիւն ցուցանել իմ յայտարարութեանս։

Պարձաւ դեպ ի հայրենիք նաւերի բազմութիւնը
Որ սորանից յառաջ ունայն մեծութեամբ
Եղած էր միայն ալիքների համար լեռն,
Ուր թագաւորի որդիներից մինը
Յետ թողնելով այս տեղ գերութեան մէջ.
Ասաւ Լիսբոա, կիսակործան.
Այն ժամից, երբ որ այսպիսի
Տրտում անցքի լուրը լսեց Էդուարդոսը,
Տրտմութեամբ այնպէս խաւարվեցաւ նորա սիրտը,
Որ, շուտով հալ ու մաշ լինելով սրտի ցաւից
Արեաւ, սուտ հանելով այն խօսքը, որ ասած ևն,
Թէ սրտի ցաւը մեռուցիչ չէ։
Էդուարդոսը մեռաւ, Աստուած վարձատրէ նորան։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Վայ ինձ. բանտարկութիւնս այդպէս
Թանգ նստեց նորան։

ԹԱԳԱՒՈՐԸ.

Աղէտը գիտէ,
Թէ ինչպէս ցաւելի է ինձ այդ պատահարը։
Յառաջ տար խօսքդ։

ԷՆՐԻԿ.

Կտակի մէջ
Պատուէր տուեց իմ տէր ու թագաւորը,
Որ իսկոյն արքայազնի փոխանակ
Ատուցանեն Ջէյտա քաղաքը։
Եւ այսպէս եկած եմ ես լիակատար իշխանութեամբ
Ընծաղջից, որին թագաւորեցուցին —
Որովհետև մի այդպիսի առաւօտեան աստղ
Կարող էր մեղմել արեգակի շինչումը —
Որ քաղաքը թող տամ պահանջողին,
Եւ այսուհետև —

ՖԵՐՆԱՆԴՕ.

Ընելի խօսք հարկաւոր չէ. լուռ կաց,
Ընդիկ. պատճառ, դոքա այնպիսի խօսքեր ևն,
Որ հնչումեն շատ անարժան
Ոչ թէ պօրտուգալիայի թագաժառանգ արքայազնին,
Որ և քրիստոսեան կարգի դասապետութեամբ մեծարված է.
Ոչ. դոքա արժանի են մի վայրենաբարոյ մարդու,

Որին նրբէք լուսաւորած էր փրկչական հաւատը։
Նթէ իմ եղբայրը, որ այժմ երկնքումն է,
Նր կտակի մէջ յատկապէս պայմանադրել է այս բանը,
Նորա խորհուրդը եղած չէ, որ դորա հիման վերայ
Ս. ճուահատվէրը գործը, այլ միայն վկայութիւն տար,
Որ նորան ցանկալի էր ազատել ինձ։
Նր այս բանը Թող աշխատեն յառաջ տանել
Նյլ ճանապարհներով և հնարներով,
Նմն մեղմ և Թէ Թշնամական։ Պատճառ,
Նթէ նա հրամայել է, որ Յէյտա քաղաքը դուրս տան,
Նորա խորհուրդը այն է միայն. Թէ ամենայն կերպով
Ջանայիր եղիք պահպանել նորան։
Պատճառ, ինչպէս կարելի էր նկարագրել մեքով,
Նմն մի բուն կաթոլիկ Թագաւոր կամէր
Նմեղ տալ մի Մաւրիտանացու այնպիսի քաղաք
Որի համար Թափվել էր իւր արիւնը, որովհետև
Նրաջինն էր նա որ նորա պարիսպների պատկը,
Պաշտպանած միայն մաշկեղէն վահաններով և նիզակներով,
Նարդարից ինքն այն հինգ փոքրիկ վահաններով։[1])
Նյս գետ ևս մի ամենաչքնին բան է.
Նայց մի քաղաք, որ Աստուած, արարիչը
Նստատվանուամբ կաթոլիկեան ուղղափառութեամբ,
Որ եկեղեցիներով զարդարած է,
Որ սէր ու երկրպագութիւն
Նացել է նորա պաշտօնի համար.
Նյնեղմն էր դա մի կաթոլիկական ընծայք,
Նյնեղմն էր դա երկիւղածութեան նախանձաւորութիւն,
Նյնեղմն էր դա քրիստոնեայ սրտի գթութիւն,
Նյնեղմն էր դա Պորտուգալիայի պարծանք,
Նթէ այն նուիրական կամարների սիւները
Նյն տաճարները Ամենաբարձրելու համար,
Փոխանակ այն ոսկի աշտանակների
Որ այժմ կարմրափայլ շողշողեցնում արևը,
Տեսանէին Ցաճկական մայլ ստուերներ,
Նյ, եկեղեցու գայթակղութեան համար,
Նոյա լուսիններըը համարձակվէին ծնեալմիթել
Խաւարագործութեան տխուր հանդէսներ,

[1]) Պորտուգալական պետութեան նշանքը։

Այ՛ թէ բարի էր լինելու, որ այն տեղ խորաններըը
Պղծելով յեղափոխէին ախտաններ
Եւ նոցա մէջ եղած սեղանները մնուրներ,
Նթէ դոքա յարմարաւոր չէին գառնալու մկկիմներ.
Այս տեղ թուլանումէ ձայնս,
Այս տեղ վերջանումէ շունչս,
Այս տեղ մահանման խեղդումէ ինձ ցաւը.
Պատճառ, երբ որ մոռծումեմ միայն,
Այնպէս է ինձ, որպէս թէ կամէր պատառվիլ սիրտս.
Փուշ փուշ են լինում մազերս գլխիս վերայ,
Եւ դողումէ բոլոր մարմինս.
Արդարև ախտների և մնուրների մէջ, շատ անգամ արդէն
Ընակել է Աստուած որպէս հիւր. բայց գառնալով մկկիմներ,—
Պիտոյ է դոքա որպէս հիշատակի արձանագրութիւնք,
Մեր մշանջենաւոր ամօթու համար — բարբառէին այսպէս.
Այս տեղ օթևան ունէր Աստուած, և այժմ քրիստոնեայք
Չկամին տալ նորան այդ օթևանը, այն խորհրդով.
Որ օթևան տային չարին և ամբարշտին.[1])
Այ՛ չլսած բան է, թող խօսեմ մարդկօրէն,
Որ, մի մարդ անպատուելու համար,
Չ'ներս մտանէինք նորա տունը. արդեօք արժան էր,
Որ, Աստուած արհամարհելու համար,
Չ'ներս մտանէ նորա տան մէջ արատը,
Եւ մեք առաջնորդէինք նորան դէպ ի այդ գործը.
Այնչև որ մեք ինքներս լինէինք նորա դռնապանքը
Եւ դորան այս տեղ պահպանելու համար,
Չալածական առնէինք Աստուած, դուրս ձգէինք նորան;
Կաթոլիկեանքը որ այն տեղ բնակումեն
Իւրեանց գերդաստաններով և կալուածներով
Ընշտութեամբ կը խախտվէին իւրեանց հաւատից,
Այնայն թէ չըլկվէին իւրեանց ղաւակից ու ստացուածից:
Չժանի՛ գործ էր մեր կողմից
Այսպիսի մեղքի ճանապարհ տալ պատճէ դիպուածով.
Չժանի՛ էր արդեօք, որ քրիստոնեաներին մանուկ որդիքը
Առաքրիստոնացոց ձեռքով սովորելով նոցա բարք ու վարքին,

[1]) Ինչպէս յայտնի է, Պալանիայիք և Պօրտուգալացիք, իւրեանց կաթոլիկ հաւատաւորութեան մէջ համարումէին Իսլամի (մահմետականութեան) դաւանողքը, յատկապէս հեթանոսք և սատանայապաշտք:

Ահա ծծկին իւրհանդ մէջ մի սուտ ուսումն.
Այ՛ թէ արժան էր թշուառ ծառայութեան մէջ
Անուշանալ այն տեղ այնքան մարդերի կեանք, մի մարդու
Կեանք, որ ոչինչ կշիռ չունի, ազատելու համար,
Ա՛վ եմ ես, մի՛ թէ աւելի քան թէ մարդ.
Այ՛ թէ դոցա թիւը պիտոյ է յուշանվէր
Այ արքայազն իշխանի կեանքով. ոչ, մի գերի եմ ես այժմ,
Վաճառահմտութեան ընդունակ չէ մի ծառայ.
Ես պղպէս եմ, և սխալվելու էր այն մարդը
Որ կամէր ինձ թագաւորազն անուանել.
Ես եթէ չեմ թագաւորազն, ոմ ապա կարող էր հրամայել,
Որ մի ծառայի կեանք արժէր պղպիսի ծանր գին.
Անուանելով հասկացվումէ, կորուսանել գոյութիւնը.
Ես կարող էի կորուսանել զորան կռուի աղմուկի մէջ.
Կորուսանելով գոյութիւնը, մեռած էի.
Անուած. ուրեմն այսուհետև մի տխմար գործ էր,
Այ մեռածի համար պղքան կեանք մեռուցանել.
Ես պղպէս պիտոյ է այն ունայն հրամանաթուղթը
Ընծեղին պատառ պատառ քակտվի այժմ,
Այնպէս որպէս փոշի արևի մէջ,
Այնպէս որպէս կայծեր կրակի մէջ ցանուցիր լինի.

(Նա պատառումէ հրամանաթուղթը.)

Հայդ ոչ. ես կուլ կը տամ նորան,
Որ ոչ մի տառ չմնայ, որ հրատարակէր աշխարհին,
Թէ Լուսիտանիայի քաջալնական մեծութիւնը
Երբ և իցէ կամեցել է մի այսպիսի բան.—Ես քո ծառան եմ,
Իմ ազատութեան վերայ, ով թագաւոր,
Իշխան ես դու. ես չկամիմ նորան,
Նա չէ կարող ինձ և պատկանել այսուհետև.
Ես դու, Ենրիկ, դարձիր դէպ ի տուն և ասա,
Թէ Ափրիկան դարձել է ինձ գերեզմանի փոս.
Պատճառ, ես կամիմ ստիպել իմ կեանքս,
Որ դա երևի մահ, քրիստոնեայք, ձեր համար մեռած է ֆերնանդոն.
Աւրիտանացիք, ձեզ որպէս ծառայ պատկանումեմ ես,
Այ քրիստոնեայ ծառայ, մի ընկերակից
Անակից է այսօր ձեր վշտերին.
Երկինք դու, քո սուրը հեղեղելքը,
Այ մարդու ձեռքով վերստին բացվումեն քեզ.

Ո՜ւռ դու, մի Հշուառական իւր արտասուքով
Լ՚այնացնումէ քո ջրերի տարաճումիւնը.
Այրեր, մի տրտում անձն բնակումէ ձեր մէջ
Որպէս վայրի անասունքը ձեր անապատի մէջ։
Ո՛ղջեր, մի անբաղդ ոք ծանրարևնումէ
Ձեր սահմանը իւր հառաչանքներով.
Ե՛րկիր, մի գիակ այսօր փորումէ
Իւր գերեզմանը քո վիրապների մէջ.
Նահապետ, եղբայր, Պաբիտանացիք և Քրիստոնեայք,
Ընդհակն, լուսին և աստեղազարդ երկնակամար,
Երկինք, երկիր, ծով և հողմեր,
Ընտաւ ու սար, դուք ամենքդ լսեցէք.
Մի հաստատամիտ արքայազն, տառապանքի
Նւ ցաւերի մէջ կնքումէ այսօր կաթոլիկեան հաւատը.
Պատուեցէք Ամենաբարձրեալ օրէնքը։
Ա՚ան պէս, եթէ չլինէր մի այլ պատճառ,
Վրան թէ այն, որ Ցէյտա քաղաքը զարդարվեցաւ
Մի եկեղեցու նուիրանքով յանուն սուրբ և աստուածային յղութեան,
Ը՚ստ Թագուհու և Տիրուհու,
Որ Թագաղարդեց երկիր ու երկինք.
Յօժար էի ես, այնպէս ճշմարիտ, ինչպէս նա կենդանի է,
Ո՛ազարաւոր կեանք դորա համար ցած դնել։

ԹԱԳԱՒՈՐԸ.

Դո՛ւ, ապերախտ և անզգայ
Գէպ ի փառքը և մեծութիւնը
Իմ թագաւորութեան. ինչպէս կարող ես դու
Ը՚ղգքան նախանձողապէս յետ պահել ինձանից
Ը՚ստ բանը որ առաւելապէս ցանկալին է ինձ.
Նահապետ այժմ, երբ որ իմ թագաւորութիւնը
Պատկանումէ քեզ աւելի, քան թէ քո սեփականը,
Կարող ես հնշտ միսիթարվիլ քո ծառայութեան վերայ.
Նայց որովհետև դու ինքդ խոստովանումես քո անձը
Ո՜ստայ և երդուումես, ապա որպէս ծառայ կը պահեմ քեզ.
Նւ թող քո աղքը և եղբայրը տեսանեն,
Նահ ինչպէս դու այժմ համբուրումես իմ ոտքը,
Ո՛նազանդելով որպէս ծառայ։

ԷՆՐԻԿ.

Ո՛րպիսի անբաղդութիւն

ՄՈՒԼԷՑ.

Ա՛րպիսի ցաւ։

ԷՆՐԻԿ.

Ա՛րպիսի ճակատագիր։

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Ա՛րպիսի տառապանք։

ԹԱԳԱՒՈՐ.

Իմ ծառան ես դու,

ՖԵՐՆԱՆԴՕ.

Վո՛ւ ծառան եմ, բայց այս բանը
Շա՛տ փոքր ձեռնտու պիտի լինի քո վրէժխնդրութեանը.
Ես մարդս, մի ուղեւորութիւն կատարելու համար,
Նաժանվել է իւր մայրական հողի արգանդից,
Դորա խորհուրդը այն է, որ նա մի քանի ժամանակ թափառելով,
Կրկին վերադառնայ դէպ ի նորա ծոցը.
Շնորհակալ պարտ եմ լինել քեզ առաւել,
Վրան թէ հայհոյել քեզ. պատճառ, դու բացումես
Ինձ ոտք կոխելու տեղեր, որոնց վերայ աւելի շուտով
Կարող եմ ես ժամանել (հասանել) իմ նպատակիս։

ԹԱԳԱՒՈՐ.

Եթէ ծառայ ես դու, կարող չեն ոչ պատուանուններ
Եւ ոչ կալուածների ակամուտք պատկանել քեզ.
Չէյտան քո կարողութեան տակ է.
Եթէ դու խոստովանումես ինձ քո տէր և թագաւոր,
Եւ քեզ իմ հնազանդ ծառայ,
Ընդէր ապա չկամիս ինձ բանալ նորա դուռները։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Որովհետև դա պատկանում Աստուծուն և ոչ ինձ։

ԹԱԳԱՒՈՐ.

Եթէ օրէնքը հրամայում չէ քեզ քո սրտի մէջ,
Թէ պիտոյ էր հնազանդել իւր տիրոջը,
Ապա ես հրամայումեմ քեզ յատկապէս.
Տուր իմ ձեռքս Չէյտանու։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Ինչ որ իրաւ է,
Պատուիրում երկինքը, որ դորա մէջ

Ընաղանդի ծառան իւր տիրոջը.
Եայց եթէ տէրը հրամայէ
Իւր ծառային չար բան առնել,
Ընդհուպհետև պարտական չէր նա
Ընաղանդել. որովհետև, եթէ տէրը
Պահանջումէր մէ չար բան, չարագործ է։

ԹԱԳԱՒՈՐ.

Ծոդ լինի քո բաժինը մահ.

ՖԵՐՆԱՆԴՕ.

Դա կեանք է ինձ։

ԹԱԳԱՒՈՐ.

Որպէս պի դու չհասանես քո բաղձանքին,
Պարիր մեռանելով։ Ես կարող եմ կատարել.

ԹԱԳԱՒՈՐ.

Ե՛ս ես կարող եմ սովորել համբերելու։

ԹԱԳԱՒՈՐ.

Ծոդ այդպէս լինի. բայց դու աղատվելու չէս։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Ե՛ս ցնծալի դուռները չեն բացուելու քեզ։

ԹԱԳԱՒՈՐ.

Նկէք, ծառայք։

ՍԵԼԻՄ (գալով).

Ընհաւասիկ եմ, տէր։

ԹԱԳԱՒՈՐ.

Ծոդ այս ծառան
Խոկոյն հաւասարվի բոլոր միւսերին.
Պատեցէք նորա պարանոցը շղթաներով,
Ձ՛նշեցէք նորա ոտերի կոճերը կապանքով.
Ծոդ սպասաւորէ նա ախոռների մէջ,
Ե՛ս այգիների ու գաւիթների մէջ.
Ինչպէս բոլոր միւսերը, նոյնպէս վատ Ծոդ պահվի նա.
Ընդհուպհետև Ծոդ չկրէ նա մեծաքսակ զգեստներ,
Ընդ էքաւոր, կոպիտ հանդերձներէնք.
Ծոդ սև հացով կերակրվի նա,
Ե՛ս որպէս ըմպելի ստանայ աղաջուր,
Ծոդ քնէ նա պիջնի ու մուխ ծակերի մէջ.

Ինչպէս ևս լինելու էր դատաւճիռը
Նորա սպասաւորների և ստորադրեալների մասին,
Հեռացուցէք նորանից բոլորը։

ԷՆՐԻԿ։

Որպիսի անբաղդութիւն։

ՄՈՒԼԷՑ։

Որպիսի աղետ։

ԴՕՆ ՋՈՒԱՆ։

Որպիսի հարուածք։

ԹԱԳԱՒՈՐ։

Ես կամիմ տեսանել, բարբարոս դու, կամիմ տեսանել
Երդնօք քո համբերութիւնը աւելի՞ բան կարող էր,
Քան թէ իմ կատաղութիւնը։

ՖԵՐՆԱՆԴՕ։

Այո, այդ բանը կը տեսանես դու.
Իմ համբերութիւնը սպառվելու չէ։

(Հեռացնում են նորան.)

ԹԱԳԱՒՈՐ։

Թող, Էնրիկ, հաւատարիմ մնալով իմ խօսքիս,
Պայ եմ տալիս վերադառնալ դեպ ի Լիսբօա,
Աֆրիկայի սարերից։
Ձեր արքայաղն իշխանը, ձեր ավետեան գաստապետը —
Ասացէք ձեր հայրենակիցներին —
Թէ սպասաւորում իմ ձիերին,
Մինչև նոքա գան ազատելու նորան։

ԷՆՐԻԿ։

Այո, կը գան նոքա. պատճառ, Լիմէ ես
Պաղումեմ նորան իւր տրտում վշտի մէջ,
Չիմէ կարող եմ ես սիրտ բռնել հեռանալ նորանից
Եւ թողուլ նորան անմխիթար միայնութեան մէջ,
Դորա խորհուրդը այն է, որ կամիմ վերստին գալ
Աւելի զօրութեամբ և կարողութեամբ, ազատելու նորան։

ԹԱԳԱՒՈՐ.

Լաւ կ'առնես, միայն թէ կարող էիր։

ՄՈՒԼԷՑ (Ինքը իւր մէջ).

Այժմ տեղիք կայ
Յայտնի կացուցանելու թէ ինչ կարող էր հաւատարմութիւնը.

Իմ կեանքս պարտական եմ Ֆերնանդոյին,
Իմ պարտքս կամիմ վճարել նորան։

2.

ԱՅԳԻ. ՍԵԼԻՄ և ՖԵՐՆԱՆԴՈ (Ծառայական հագուստով և կապանքի մէջ).

ՍԵԼԻՄ.

Վրէժ հրամայումէ Թագաւորի կամքը
Այս այգու մէջ լցուցանել պատուիրած գործը
Եւ ոչինչ ընդդիմութեամբ պարտաւոր գտանվիլ։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Ըլլի քան թէ նորա կատաղութիւնը, մեծ է իմ համբերութիւնը.

(Մուտնումն քրիստոնեայ ծառայք և նոցանից միմը երգումէ, և այդ միջոցին միւսերը փորումն այգու մէջ.)

ԱՌԱՋԻՆ քրիստոնեայ ծառան.

Տանգրը քաղաքին տիրապետելու,
Ընդդէմ ֆեցի բռնակալին,
Ուղարկեց այս տեղ Թագաւորը
Իւր եղբայր, արքայազն Ֆերնանդոն։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Այ թէ ամենայն ժամ ձախորդութեան չիշատակը
Պիտոյ է ծորտել իմ սիրտս.
Այէջքս ծալվել է, հոգսերի մէջ Թաղած եմ։

ԵՐԿՐՈՐԴ քրիստոնեայ ծառան.

Ինչ էք այդպէս կանգնած հոգսերի մէջ ընկղմած.
Այ լաւէք, մխիթարվեցէք, պարոն Գաստապիտը,
Ասել է մեզ, թէ շուտով կը վերադառնանք
Դէպ ի հայրենիք և կը լինինք ազատ, ինչպէս կամիմք։
Ոչ միմը մնալու չէր այս աշխարհումն։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Որպիսի կարճ միջոցում չքանալու էր ձեր մխիթարութիւնը։

ԵՐՐՈՐԴ քրիստոնեայ ծառան.

Այ նեղացէք այդքան, օգնեցէք ինձ

Ա՛յս ծաղիկները ջրելու. առէք այն տեղից կուժերը,
Եւ գնացէք ջուր բերելու այն ջրկղտից։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Պատրաստ եմ, ինչպէս հրամայած է ինձ.
Ահ ես ջուր կրէլ ձեր հաւմար,
Այդ բանը լաւ էք մտածել դուք. պատճառ իմ գանգատը
Վշտեր սերմանելով, ցաւեր վար ու ցանք առնելով,
Ծախուած իմ աչքերից արտասուքի հեղեղներ։

ՄԻԻՍ քրիստոնեայ ծառան.

Եւ աւելի գերիք բերեցին այս տունս։

(Դօն Ջուանը մի այլ քրիստոնեայ ծառայի հետ դուրս է երևում.)

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Ծո՛ղ նկատենք ուշադրութեամբ
Արդեօք սոքա՞ են այն այգիքը, ուր եկաւ նա.
Արդեօք այս օտարականքը լսած չէին.
Պատճառ, այդպէս աւելի փոքրանալու էին
Հաւերը և տառապանքները նորա շրջակայքում.
Եւ աւելի մխիթարական կը լինէր նորա դրութիւնը։
Իմ բարեկամ, Աստուած պահպանէ քեզ, ասա ինձ,
Տեսած չես դասապետ Դօն Ֆերնանդօն, երբ որ նա
Արշաւութիւն էր առնում այս այգումը։

ԵՐԿՐՈՐԴ քրիստոնեայ ծառան.

Ոչ՝ որան տեսած չեմ.

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Դուրը բացվեցաւ, ասում եմ ես,
Հներեցին մեզ նոր ընկերակիցներ։

(Ֆերնանդօն յետ է գալիս երկու լցած կուժերով.)

ՖԵՐՆԱՆԴՕ.

Արի ղարմացէք դուք, մարդկային հոգիք,
Տեսանելով, որ մի թագաւորալն, մի դասապետ
Ընարգութեան մէջ այսպէս շշուառաբար տանջվում էր,
Պատճառ, խաղեր են սոքա, որ ժամանակը կատարում։

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Արի այդպիսի դրութեան մէջ,
Տեսանել ձեր արքայական վսեմութիւնը.
Ուր կապերը պատառել կամի ցաւից
Իմ նեղացած կուրծքս։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Ըստուած Թողութիւն տայ քեզ, դու շատ վերաւորեցիր սիրտս,
Ով Դօն Ջուան, յայտնելով իմ ապգատոհմս։
Ես կամէի իմ անձս ծածկել և Թագուցանել
Իմ ժողովրդի աչքից, և պատրաստվել
Դէպ ի Թշուառ, չքաւոր սպասաւորութիւն։

ԵՐՐՈՐԴ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԾԱՌԱՆ.

Ոհ, տէր, շատ ու շատ խնդրումեմ ձեղանից, ներել ինձ քաղցրու Թեամբ,
Որ այդպէս կուրօրէն բեռնաւորեցի ձեզ աշխատու Թեամբ։

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԾԱՌԱՆ.

Ձոյլ տուր մեզ, տէր, ծուներ խոնարհեցնել քո առաջև։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Ա՛ր կացիր, իմ բարեկամ, այսուհետև ոչինչ այդպիսի յարդանք։

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Չեր արքայական վեհմու Թիւնը —

ՖԵՐՆԱՆԴՈ.

Ինչ արքայական վեհմու Թիւն կարող է ունել նա,
Որ ապրումէ այսպիսի անարգու Թեան մէջ Թաղած.
Ներեցէք իմ վերայ որպէս ձեր ընկերակից ծառայի վերայ,
Որ տուել էր իւր անձը մի աննշան կեանքի։
Ով որ կամէր դէմքը դարձուցանել դէպ ի ինձ,
Ձոյլ վարվէր իմ հետ որպէս իւր հաւասարի հետ։

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Ինչո՛ւ երկինքը ուղարկում չէ
Ոչինչ կայծակն, ինձ սպաննելու։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Դօն Ջուան, պէտք չէ ազնիւ մարդուն
Ընդպէս տրտնջալ տառապանքի մէջ.
Ձո՛ղ մեր յոյսը դնենք երկնքի վերայ.
Վրաջաղերու Թիւնը, խմաստու Թիւնը, համարձակ անձնավստահու Թիւնը
Պիտոյ է այժմ երևելի կացուցանէ իւր անձը։

(Զարան դալիս է մի փոքրիկ կողով ձեռքին.)

ԶԱՐԱ.

Իմ մանուկ Թագուհին կամենումէ զբօսնուլ այգու մէջ,
Ուր նա հրամայումէ փառաւոր դունագոյն ծաղիկներով
Պսակազարդել այս կողովը,

ՖԵՐՆԱՆԴՈ.

Ես յոյս ունիմ նորա կամեցածը բերել նորան,
Պատճառ, ամենայն պաշտօն հնչտ է ինձ լցուցանել իսկոյն։

ԵՐԿՐՈՐԴ ՔՐԻՍՏՈՆեԱՅ ԾառԱՆ.

Խարի է, թէև կատարենք այդ գործը։

ԶԱՐԱ.

Ես կամիմ, մինչև գուք կը ժողովէիք, սպասել այս տեղ կանգնած։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Մի ցուցէք ինձ ոչինչ յարգութիւնք,
Որովհետև հաւասար վշտերով բնռնաւորած էք դուք և ես.
Ես որովհետև մեր վիճակը,
Նմէ ոչ այսօր, գոնէ էգուց կը հաւասարէ մահը,
Այսպա բարի էր նորան,
Ով որ այսօր ոչինչ չէ թողել առնելու վաղուեան օրին։

(Ֆերնանդօն հեռանում քրիստոնեայ ծառաների հետ միասին. փիլիքսը դուրս է երեսում րօզայի հետ.)

ՓԻԼԻՆԻՔՍ.

Պատուիրել ես դու, որ բերեն ինձ
Այս տեղ ծաղիկներ։

ԶԱՐԱ.

Վո հրամանը կատարվել է։

ՓԻԼԻՆԻՔՍ.

Կամի նորա գոյները տեսանել,
Իմ սրտի պղտորութիւնը հալածելու համար։

ՐՕԶԱ.

Այդ ինչպես բան է, թագուհի, քեզ միայն,
Երեակայական ցնորներից խաբված,
Փառաւորումն տխրամիտ երկեր։

ԶԱՐԱ.

Այո, թէ ինչ է պատահել քեզ։

ՓԻԼԻՆԻՔՍ.

Ձէ, երազ չէր, ինչ որ տեսայ ես,
Երբ որ իմ վատաբաղդութիւնը երևեցաւ ինձ.
Նմէ թշուառականի սիրտը
Նրազելով ունեցած է մի գանձ,
Այնուհետև, Զարա, կարելի է խմաստասիրել,

Որ դա մի երաշխան բարութիւն էր.
Այց, երբ որ երաշը յայտնուէ նորան,
Արինչ նորա սուտ բաղդաւորութիւնը չքանուէ,
Թէ ինչ տխուր ճակատագիր պաշարուէր նորան,
Այնուհետև տեսանուէ սորան իւր յստուկ աչքով,
Ըստ որում, ինչ կշիռ ևս ունենար նորա երաշը,
Ծարթնելով գտանուէ նա մի յաւելի բան.
Շատ հաւաստի է — վայ ինձ —
Ինչ որ գուշակութիւնքը սպառնուէին իմ մէջ։

ԶԱՐԱ.

Ապա ինչ արտասուք պիտէին այն մեռածի համար,
Եթէ դու այդպէս տրտում ես քո վերայ։

ՓԻՒՆԻՔՍ.

Երդէն, իմ վատաբաղդութիւնս երևուէ ինձ
Այի մեռածի դին. ինչպէս հեռացել է ինձանից
Ամենայն ուրախութիւն. ինչ բան աշխարհիս վերայ
Կարող էր հաւասարվիլ Թշուառ կնամարդու ցաւի.
Այի Թէ մի մեռածի շնորհ պիտի լինէր իմ ունեցածը.
Այվ է այդ մեռածը։

(Ֆերնանդօն յետ է գալիս բերելով ծաղիկներ.)

ՖԵՐՆԱՆԴՕ

Ես։

ՓԻՒՆԻՔՍ.

Երկնայի՜ն պետութիւնք, ինչ եմ տեսանում ես։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Այսպէս պլանդակվածծ։

ՓԻՒՆԻՔՍ.

Դոյնքան ևս պլանդակվում իմ միտքը
Տեսանելով քեզ և լսելով քո ձայնը։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Ուանց երդման կամիմ հաւատալ քեզ.
Ես, ջանադիր սպասաւորելու քեզ,
Որպես իմ տիկին փ'ենիքսին, բերում եմ այս տեղ
Ծաղիկներ — մի խորհրդաւոր ակնարկութիւն
Իմ դրութեանս վերայ. պատճառ, դորա,
Այվ Թագուհի, ծնած են արևադարձի հետ
Եւ մեռած են օրամուտի հետ։

ՓԻՆԻՔՍ.

Այնու ամենայնիւ հրաշածաղիկը կրումէ
Այս անունը իւր պարծանքի համար։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Այլ թէ հրաշք է ամենայն ծաղիկ,
Ուր ևս, որպէս քո սպասաւոր, բնրած եմ քեզ։

ՓԻՆԻՔՍ.

Ո՛շմարիտ է այդ. ով է պատճառը
Այդ յեղափոխութեան։

ՖԵՐՆԱՆԴՕ։

Իմ ճակատագիրը։

ՓԻՆԻՔՍ.

Նոաճեր հարուածով կատարվեցաւ դա։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Կոշտ հարուածով։

ՓԻՆԻՔՍ.

Վո դրութիւնը ցաւեցուցիչ է։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Թոդ չզարհուրեցնէ քեզ։

ՓԻՆԻՔՍ.

Ինչո՞ւ։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Որովհետև մարդս յղանում
Հաղթի և մահու արգանդի մէջ։

ՓԻՆԻՔՍ.

Դու ֆերնանդօն չես։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Այ՞ո։

ՓԻՆԻՔՍ.

Ինչ խորհուրդ ունի այդ հագուստը։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Այդպես հնազանդումեմ ես
Օրէնքին։

ՓԻՆԻՔՍ.

Ով տուեց այդ օրէնքը։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Թագաւորը։

ՓԻՆԻՔՍ.

Ինչ պատճառով։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Մի թէ ես նորա սեփականը չեմ։

ՓԻՆԻՔՍ.

Մի թէ դու մտ չէիր նորան գնա ես այսօր.

ՖԵՐՆԱՆԴՕ.

Այսօր իսկ բաժանված եմ նորանից։

ՓԻՆԻՔՍ.

Մի թէ մի օրի մէջ չքացաւ խաղաղութիւնը
Երկու լուսազարդ աստղերի մէջ.

ՖԵՐՆԱՆԴՕ.

Թող ծաղիկները պատմեն քեզ այն բանը,
Ինչ որ վճռահատել է Թագաւորի կամքը.
Այս ծաղիկները որ, երբ առաւօտը բարձրանում,
Օ՛արթնելով տօնախմբումն մի ուրախութեան հանդէս,
Երեկոյին անձնատուր են մի ունայն տրտմութեան,
Երբ որ ցուրտ գիշերը գրկախառնումեր քնածները։
Այս գոյների բազմօրինակութիւնը որ երկնքի հետ վիճումէ,
Որ ծիրանին, ոսկին և ձիւնը հիւսումեն օրպէս ծիածան,
Լինում զգուշացուցիչ օրինակ մարդկային կեանքիս.
Այսքան է, ինչ որ մի օրի միջոցում ծաղկումէ և թառամումէ.
Ծաղկելու համար, առաւօտուն վաղ ղարթել են վարդերը.
Ծերանալու համար թափել են իւրեանց ծաղիկը,
Ւսանձարուրը և գերեզման գտանելով մի կոկոնի մէջ։
Այսպէս ևս եղել է մարդերի վիճակը,
Մի օրի մէջ նկել ու չքացել են.
Հարիւրաւոր տարիներ անցել են որպէս լոկ ժամեր։

ՓԻՆԻՔՍ.

Ինչպէս քո խօսուածքը ինձ ուսուցանում,
Պիտոյ է աչ ու դող խառնակեն իմ սիրտը.
Ես չեմամիմ ոչ տեսանել քեզ և ոչ լսել քո ձայնը.
Եղեր դու առաջինը, որ մի վշտակիր էր,
Որից փախչումէր մի այլ վշտակիր։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Եւ այն ծաղիկները —

ՓԻՆԻՔՍ.

Երէ՛կ նոցա մէջ
Երևումն խորհրդաւոր ակնարկութիւնք դէպ ի քեզ,
Ապա իմ տհաճութիւնս ոչնչացնում նորանց,

ՖԵՐՆԱՆԴՈ.

Ինչ է ծաղիկների մեղքը.

ՓԻՆԻՔՍ.

Որ նոքա աստղերի օրինակ են,

ՖԵՐՆԱՆԴՈ.

Մի՛ թէ դու մերժումես նորանց.

ՓԻՆԻՔՍ.

Նոցա բոլոր փառահեղութիւնը տգեղացած է իմ համար,

ՖԵՐՆԱՆԴՈ.

Ինչպէս,

ՓԻՆԻՔՍ.

Կին մարդը գալիս է աշխարհ
Ամօթն և բաղդին ստորադրված.
Եւ այս աստղի գաւաճանութեան մէջ
Տեսայ ես պայծառակերպած իմ կեանքը,

ՖԵՐՆԱՆԴՈ.

Մի՛ թէ աստղը և ծաղիկները հաւասար են միմեանց.

ՓԻՆԻՔՍ.

Այո՛,

ՖԵՐՆԱՆԴՈ.

Այդ ես կարող չեմ բացայայտ կացուցանել,
Թէպէտ գանգատաւոր եմ նոցա թշնամական աղտոտութեանից,

ՓԻՆԻՔՍ.

Լսի՛ր, քեզ արժան է իմանալ այդ բանը.

ՖԵՐՆԱՆԴՈ.

Լսում եմ.

ՓԻՆԻՔՍ.

Այն պայծառ կայծերը որ Հայեցողի համար,
Որ մեռած էր արեգակից դուրս ցայտած ճառագայթներով,
Երևի մայր մտանելուց յետոյ փոխարինումն լուսի աեսութիւնը,

Դոքա, այդ կայծերը, ապրումն միայն ծաղիկների պէս տրտմու թեամբ։
Դիշերային ծաղիկներ են դոքա. հիւանդ սարսափի մէջ
Ծուլանում շուտով այն փայլողու թիւնը որով վառվում էին նոքա.
Պատճառ, լեռ է օր է ծաղիկների հասակը,
Ոչ և է գիշեր աստղերի կեանքի տևողու թիւնը։
Այս գարուններուի շուտով թառամած փառահեղու թեան պէս,
Պիտոյ է գունաւորվէր մեր ուրախու թիւնը և մեր ցաւը,
Մէ արևը մայր էր մտանում և մէ ծագումէր։
Ո՛նչ բան կարող էր մարդս տևողապէս ձեռք բերել,
Ո՛նչ անյեղափոխելի բան ստանալ աստղերից,
Որ ամենայն գիշեր ծնանումեն ու մեռանումեն։

Յ.

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ։

(Սրահը պալատի մէջ.)

ԹԱԳԱՒՈՐԸ և ՄՈՒԼԻՑԸ դուրս են գալիս։

ՄՈՒԼԻՑ (ինքն իւր հետ խոսելով)։

Որովհետև ես Դօն Ֆերնանդոյին կարող չեմ,
Թագաւորի պահապանների երեսից,
Օգնական լինել. ապա Թող գործ գնեմ
Իմ կարողու թեան բոլոր կշիռը, նորան օգտելու համար,
Ո՛նչպէս հաւատարիմ բարեկամի պարտականու թիւն է։
(բարձրաձայն) Որովհետև ցամաքի ու ծովի վերայ, քեզ,
Ով տէր, ծառայել եմ ջերմեռանդու թեամբ.
Եթէ այսպիսի ցաւի մէջ արժան եմ կացուցել իմ անձը
Տեղ գտանելու քո քաղցր շնորհի մէջ,
Ապա լսիր ինձ ուշադրու թեամբ։

ԹԱԳԱՒՈՐ.

Խօսիր ապա։

ՄՈՒԼԻՑ.

Դօն Ֆերնանդօ —

ԹԱԳԻԱՈՐ.

Ընդքանը բաւական էր։

ՄՈՒԼԻՑ.

Ինչպէս, մի թէ չկամիս լսել ինձ յառաջուց։

ԹԱԳԱՒՈՐ.

Որովհետև, փերնանդոյի անունը տալով,
Համարձակվումես դու վիրաւորել ինձ։

ՄՈՒԼԻՑ.

Ինչպէս։

ԹԱԳԱՒՈՐ.

Այսպէս ահա, որ դու ինձ անկարող ես կայուցանում
Կատարել քո խնդիրը,
Ըստ որում կամէիր դու բարեխօս լինել նորա համար։

ՄՈՒԼԻՑ.

Մի թէ որպէս նորա պահապան
Պարտական չեմ ծանուցարար լինել քեզ։

ԹԱԳԱՒՈՐ.

Խօսիր, բայց այդ բոլորը անօգուտ է նորան։

ՄՈՒԼԻՑ.

Գոն Ֆերնանդօն, որ վաղուց արդէն յանձնառու է
Ընծուխոս հաստատութեամբ համրերել իւր դառն բաղդին,
Ու այդպէս վատաւորվումէ որպէս մի հրաշալի մարտիրոս,
Աշխարհի ըմբանումը։ Որովհետև նա, ով տէր, քո ամոռի
Կիսատ պատպարտութիւնը, կամ թէ ուղիղ ևս ասել, կարողութիւնը
Ծանրացուցել է իւր վերայ, այսպէս նորա վստահութիւնը
Զգել է նորան այնպիսի թշուառութեան մէջ,
Որ նա մի այնպիսի տեղում հալումաշ է լինում,
Որ անարժան ու արհամարհելի է,
Այնպէս, որ դա պիտոյ է անպատուէր քո լսելիքը.
Ընդքատ ու հիւանդ, անդամալոյծ,
Պարձել է նա դեռած տուրքի կարօտ մարդ։
Պատճառ, որովհետև դու խստիւ հրամանն արեցիր,
Որ նա օթևանէ բանտի մէջ,
Որ նորան ոտիկն դէպ ի մշակութիւն այգու մէջ,
Միւս ծառաների հետ միասին, և ոչ ոք նորան կերակուր չտայ։
Այսպիսի կեցութեան յարմարելով իւր անձը,
Այսպիսի կեցութեան, որ տուած էին նորա թոյլ կարողութեանը,
Մենեին անդամալոյծ դարձաւ նորա մարմինը,
Ու այդպիսի տատապանքի ծանրութեամբ տանձահարվեցաւ

Նորա սրտի կրակը, նորա արքայական վսեմութիւնը.
Թէպէտ և այն մութ ու մռայլ տեղումը
Ընդունել է նա այնքան ցուրտ դիշերներ,
Այնու ամենայնիւ մնում նա իւր խօսքի վերայ հաստատ։
Եւ երբ որ արևի պարզ ու պայծառ լոյսը
Խարձրանում ցերեկի դարպասից,
Այնուհետև ծառայքը վեր են կալնում նորան մի էքստր վսխամոլ
Եւ բերումն մի տեղ. դա է — ասեմ միայն — աղբիւսի կոյտ.
Պատճառ, այնպէս դարշելի է նորա հոտը,
Որ ոչ ոք կարող չէ տանել նորան իւր օթևանի մօտ,
Այնպէս որ ամենքեան փախչումեն նորանից,
Ոչ լսումեն նորան և ոչ պատասխանումեն
Ուր մնաց, որ մինը ցաւակից լինէր նորան,
Միայն մի մոերիմ ասպետ և մի սպասաւոր
Մնաց նորա մօտ որպէս կամակատար.
Որ այն, ամենայն կողմից անօգնականը
Մխիթարումեն այդպիսի անսովոր տառապանքի մէջ.
Նոյն արդարամտութեամբ ստիպուած բաժանումեն նորա հետ
Իւրեանց օրական հացը որ հազիւ թէ անուցանում նորանց,
Որ և այնպէս շատով ուտվում,
Որ կոկորդը յառաջուց կուլ էր տուել,
Մինչև բերանը կ՝ իմանար։ Հերիք էր այս.
Այլ ծառայքը դեռ ևս սաստումեն նոցա
Ընդ տէրունի պաշտօնի մէջ որ նորա մոերմութեամբ լսուցանումեն։
Թէպէտև մի ամենախիտ լուծ կամէր անդթութեամբ
Հարստահարել նորանց, բայց ոչինչ կարող չէ նորանց բաժանել
նորանից.
Երբ որ մինը երկուքից պիտոյ է գնայ, կերակուր որոնելու,
Միւսը մնում նորա մօտ, նորան մխիթարելու վշտի մէջ։—
Հրամայիր սահման դնել խստութեանը, տէր.
Եւ այն անողորմ տառապանքի մէջ,
Որ դէպ ի ցած են գլորում արքայազն երիտասարդը,
Թոզ զգայ քո սիրտը սարսափ, եթէ ոչ ցաւակցութիւն,
Եթէ ոչ ողորմութիւն, դոնեայ զարհուրանք։

ԹԱԳԱՒՈՐ.

Հաւական է արդէն, Մուլէյ։

(Փիւնկրոը դուրս է երթում.)

ՓԻՆԻՔՍ.

Տէր, ներէ
Իմ խոնարհամտութիւնս ամէնայն ժամ յօժարութեամբ
Ալարկել է քո ակնարկութեանը համեմատ,
Թոյլ տուր ինձ մի խնդրուածք յառաջ բերել
Իմ տիրոջ ողորմութենից։

ԹԱԳԱՒՈՐ.

Ինչ խնդրուածք քո կողմից մերժելու էի ես։

ՓԻՆԻՔՍ.

Ընքայաղն Ֆերնանդօն —

ԹԱԳԱՒՈՐԸ.

Բարի է,
Դու աստղիր արդէն բաւական շատ բան.

ՓԻՆԻՔՍ.

Պատոյց է փոխվում ամէնեցուն արիւնը,
Որ տեսանում նորան այդպիսի չարչարանքի մէջ.
Կարող էի ստանալ քեզանից, որ —

ԹԱԳԱՒՈՐ.

Ոչ դադարիր, Փիւնիքս, դադարիր.
Մի՛ թէ նա ինքը որոնում չէ իր կորուստը.
Ով է հարկ դնում Ֆերնանդոյի վերայ
Այդպիսի անարգութեամբ կենսամաշ լինելու։
Եթէ նա, լինելով խստասիրտ և անգութ դէպ ի իւր անձը,
Հաստատ է մնում իւր որոշած խօսքի վերայ,
Թէև համբերութեր այդպիսի ծանր պատժի,
Ինչ մեղաւոր էի ես այն բանի մէջ
Որ նա ինքը վճռել ու կնքել է։
Մի՛ թէ նորա ձեռքումը չէ, դարձուցանել
Այս թշուառութիւնը և կեանք.
Եթէ նորանից է կախ, թող ապա
Թոյլ տայ ինձ ցէյտա ամրոցաքաղաքը,
Եւ նորա բոլոր տանջանքը կը վերջանայ։

4.

(Փողոց Ֆեցի մէջ.)

ԴՕՆ ՋՈՒԱՆ, ԲՐԻՏՕ և միւս քրիստոնեայ ծառայք բերումն Ֆերնանդոն և նստեցնումն նորան մի փսխաթի վերայ։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Դրեցէք ինձ այս տեղ ահա,
Ուր աւելի լաւ կարող եմ ես վայելել
Երկնքի լուսաւոր վայելչութիւնը։
Ով դու քաղցր պարգևատու տէր,
Ի նչքան պարտական եմ քեզ շնորհակալ լի նե.
Երբ որ Յովքը գտանվումէր նոյն դրութեան մէջ,
Որպիսի խմն է, նա անիծից իւր ծննդեան օրը,
Նայց նա այսպէս վարվեցաւ, որովհետև կորած,
Մեղքի մէջ ծնած էր.
Նայց ես կարող եմ բարեբանել այն օրը,
Որովհետև Աստուած կամենումէ այդ օրին
Պարգևել իւր շնորհների առատութիւնը։
Ումն մի գեղեցիկ առաւօտալոյս
Ումն մի ճառագայթ արեգակի պիտոյ է
Լինի մի հրեղէն լեզու, որ սպասաւորումէր
Նարեբանելով նորան։

ԲՐԻՏՕ.

Այժմ բարւոք հանգստացաւծ էք այս տեղ, տէր։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Աւելի բարւոք, բարեկամ, քան թէ արժանի եմ.
Ոչ. ինչպէս շնորհակալ է քեզ, տէր, քո ծառան
Քո ամենայն գթառատ պարգևածի համար.
Հազիւ թէ բանտ'ց բերած էին ինձ այս տեղ,
Դու պարգևումես ինձ մի արև ջերմացնելու ինձ.
Տէր, որպէս լի ես դու ողորմութեամբ։

ԱՌԱՋԻՆ քրիստոնեայ ծառան.

Դիտէ Աստուած, որ յօժար էինք մնալ այս նեղ,
Մի փոքր մխիթարութիւն տալու ձեղ.
Նայց գործը հարկագրումէ մեզ շտապել։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Իմ զաւակներ, գնացէք. Աստուած ձեր հետ։

ԵՐԿՐՈՐԴ քրիստոնեայ ծառայ.
Ըլլս ինչ դառն ցաւ է։

(Հեռանումն նոքա.)

ՖԵՐՆԱՆԴՈ.

Դուք երկուքդ
կամիք իմ մտա գալ. այնպես չէ.

ԲՐԻՏՈ.

Վա՛ռ ուղևկիցը ես եմ։

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Վրեղ պիտոյ է միայն թողում և ես։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Ի՛նչ պիտի առնեմ ես, եթէ և դու պակաս էիր ինձ։

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Տէր, այս րոպէիս կը վերադառնամ ես այս տեղ։
Միայն մի ուտելի բան քո համար
Ներթուումեմ որոնելու և ճարելու.
Պատճառ, այն ժամանակից յետոյ, երբ
Մուէյը հեռացել է ֆեցից, ամենայն տեղ
Պակաս է մեզ մխիթարութիւն տառապանքի մէջ.
Ըյնու ամենայնիւ պիտոյ է ինձ հոգալ,
Մի բան գտանել, թէպէտ դիտեմ,
Որ կամէի ես անհնարինը հնարաւոր կացուցանել.
Ըմեն մարդ կասկածումէ, մի գուցէ
Լուծանէր այն հրամանը, որ պատուիրումէ մինչև,
Ջուր չտալ քեզ։ Դոքա չկամին ոչինչ բան վաճառել ինձ,
Որովհետև տեսանումեն թէ ես օգնումեմ քեզ.
Մինչև այս աստիճան պէտք է սաստկանար բաղդի անպիտութիւնը.
Նայց գալես են ահա մարդիկ։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Երանի թէ կարողանայի
Պուեթ շարժելով բարձրացնել ձայնս,
Որ մի մարդ կամենար տալ ինձ մի բան,
Որով գեռ ես մի րոպէ աւելի երկար
Ըպրեի այս տառապանքի մէջ։

(Դօն Ջուանը հեռանումէ։ Թագաւորը, Թարուդանուէն, Փիռիքսը և Սելիմը գալես են ընկերակիցներով.)

ՍԵԼԻՄ.

Տէր, այս փողոցի միջով կարող չես դու անցանել,
Որ քեզ չտեսանէ արքայաղն երիտասարդը։

ԹԱԳԱՒՈՐԸ (ասելով դէպ ի թարուդանթէն).

Ուղևկից լինելով քեզ, կամի ցուցանել
Իմ փառքը և մեծութիւնը։

ԹԱՐՈՒԴԱՆԹԷ.

Դու միշտ հաստուցանուս ինձ չարգ և պատիւ.

ՖԵՐՆԱՆԴՕ.

Շնորհեցէք մի փոքրիկ տուրք և
Մի մոռացէք հիւանդ աղքատը.
Տեսէք որ ես մարդ եմ և չունիմ ոչինչ,
Որ կարողանար լցուցանել իմ քաղցը.
Յաւակից եղէք և ողորմեցէք, մարդիկ.
Չար և անաստունը ցուցանուի ողորմութիւն
Միւս անաստունի։

ԲՐԻՏՕ.

Ես կ'ուսուցանեմ քեզ մուրալ.
Դու չգիտես մուրալ, ինչպէս սովորութիւն է այս տեղ։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Պա որպէս պիտոյ է ինձ ասել.

ԲՐԻՏՕ.

Չհա թէ որպէս.
Պաւրիտանացիք, թոյլ տուեցէք ինձ աղաչել ձեզ
Օգնական լինելու մի աղքատի,
Որ նա կարողանար լցուցանել իւր քաղցը,
Պարգարէ Մահմադի ոտքի սուրբ պճնելի համար։

ԹԱԳԱՒՈՐԸ.

Չսպիսի թշուառ դրութեան մէջ,
Տակաւին ցուցանուի նա իւր անձը
Իւր խօսքին հաւատարիմ,
Որպէս արհամարհանք ինձ, ամօթ ինձ.
Ոչ արքայաղն, ոչ Դասապետ։

ԲՐՒՏՕ.

Լ՚սիր, Թագաւորը գանչումէ, քեզ Հրամայումէ
Մօտ գնալ։

ՖԵՐՆԱՆԴՕ։

Ի՞նձ. ոչ, Բրիտօ. ոչինչ
Դասապետ և ոչ իսկ արքայազն եմ ես,
Այլ դորա լոկ դիակը.
Եւ դատապարտված դէպ ի հող արդէն,
Դա չէ այլ ես իմ անունը։

ԹԱԳԱՒՈՐ.

Եթէ դու ոչ միևը դոյանից չես,
Ծո՛ղ ապա պատասխան տայ Ֆերնանդօն։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Այժմ պարտ է ինձ արդէն բարձրանալ գետնից,
Եւ դիմել դէպ ի քո ոտքը։

ԹԱԳԱՒՈՐԸ.

Միշտ պինդ և հաստատ մնումես դու, զայրացնելով ինձ.
Երդեօք քո հնազանդութիւնը այս տեղ խոնարհութիւն է,
Թէ մի կապած վշիռ քո մէջ։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Թէ ինչպէս պարտ էր ծառային
Ուշադրել իւր տէրը, պիտոյ է ցուցանէ այդ բանը։
Եւ որովհետև ես քո ծառան եմ,
Ապա, կոչվելով դէպ ի քո երեսը,
Այս անդամն պարտ եմ խօսել քո հետ.
Տէր և Թագաւոր, լսիր ինձ խաղաղութեամբ։
«Թագաւոր» ասացի քեզ. Թէպէտ դու
Օտար կրօնի ուսմամբ դարձել ես Հրամայող։
Այնպէս բարձր և վսեմ է Թագաւորների
Աստուածայնութիւնը, այնպէս սուրբ և անայլայլելի,
Որ յառաջացնումէ քաղցր և գթած հոգի.
Այդ պատճառով քո մէջ աղնիւ արիևնի հետ պիտոյ է
Գթութիւնը և իմաստութիւնը անշուշտ զուգաւորած լինի։
Այո նոյն իսկ անասունի և վայրենի գազանների մէջ
Ող՚ջ այնլումէ այդ անունը այսպիսի մեծ արժանաւորութիւն,
Այնպէս որ լնութեան իրաւունքը Հրամայումէ

Պահել նորան հնազանդութեամբ.
Ինչպես կարդումենք մեք թէ առիւծը վայրի անապատների
Ընտանի հասարակութիւնների մէջ թագաւոր է.
Որ նա, երբ որ խորշոմումէր ճակատը
Եւ փուշ փուշ վեր կացած մաղերով պատկումէր նորան,
Վտանգ է և երբեք կուլ տուած չէ,
Որպես որս, նորա առաջև խոնարհողին.
Ոչխարի աղէ փրփուրների մէջ, դելփինոսի,
Ձկների թագաւորի վերայ նկարուածն նորա արծաթափայլ
Եւ ոսկեփայլ թեփերը մոգ կապտագոյն քամակի վերայ
Թագեր, և տեսած են արդէն, որ դա փոխարկի վայրենի
կատաղութիւնից
Փրկել է մարդիկ դէպ ի ցամաք դուրս հանելով,
Որ դոքա ծովասոյզ կորած չէին։
Ցետոյ, այն վսեմակարող արծիւը, որի փետուրները
Որպես մշտիկ ոլորվումեն հողմերի սահմանների մէջ,
Ոլորը թուչունների վերայ, որ ողջոյն տալով
Ա՛յնլումէին արևի քաղցրութիւնը, թագաւոր,
Աղեմասիրտ և աղնիւ, չէ կամենում թոյլ տալ,
Որ մարդս հրաւիրված ջուր խմելու,
Ցետակ արծաթաբուղէ աղբիւրի մօտ լմնէ
Իւր մահը որ այն բիւրեղային ջրերի մէջ
Կտառնել էր մի իժի թունաւոր լեղու.
Նա իւր սև ու մութ կտուցով և թևերով զարկում սպանումէ
նորան։
Նոյն իսկ տուների և քարերի վերայ տպաւորած են
Եգիպտի հրամայող իշխանութեան հետքեր.
Նուռը, որ կոչված է լինել պտուղների մէջ թագուհի,
Որ ինչպես մի թագ բոլորակումէ իւր կեղևի սուր ծայրերը.
Նուռը, եթէ վերաւորես նորան, թողումէ թառամել
Իւր կայծակնափայլ յակինթներին և փոխումէ իւր գոյնը
Դէպ ի տպաղհոն, մանուշակագոյն,
Ընդամենը, որի երեսից նոյն իսկ մագնիսը շեղումէ իւր ընթացքը,
Որ հնազանդութեամբ հպատակվի նորան որպես իւր թագաւորին,
Ընչպես աղնիւ է, որ կարող չէ համբերել իւր տիրոջ
դաւաճանութեանը,
Եւ այն կարծրութիւնը, որի վերայ ի զուր բթանումէին
Սրածայրած քերիչները, այնուհանդերձ պիտոյ է փշուր փշուր լինի,

Լուծանվելով դեպ ի նուրբ փոշի։
Ընթէ ընչաւորների, ձկների, թռչունների
Տունկերի և քարերի մէջ, մի այդպիսի արքայական մեծութիւն
Նշանօթ է ողորմասրտութեանը, ուրեմն այդ բանը պիտոյ է
Ցարդ ու կշիռ ունենայ և մարդերի մէջ, ով տէր։
Օտար կրօնի ուսումը կարող չէ քեզ արդարացնել.
Ընժենայն կրօնի մէջ բանադրած է անգթութիւնը։
Ընբեռք չկամիմ ես շարժել քո սիրտը,
Ողբալով իմ ցաւերի վերայ. որ Դու
Հաշտեիր ինձ իմ կեանքը, որ չէ խնդրում իմ բերանը։
Վհաչ գիտեմ ես, որ պիտոյ է մեռանիմ ես
Ընդ հիւանդութեամբ, որ խաւարեցնելով
Իմ ղգայարանքս, թմրութիւն ու պաղութիւն
Ընտարածել անդամներիս մէջ.
Վհաչ գիտեմ ես, որ դեպ ի մահ վերաւոր եմ ես
Որովհետև ոչ մի բառ կարող չէ դուրս հանել լեզուս,
Որի շունչը չվնէր մի սուր սլաք իմ սրտի համար.
Ալ երջապէս գիտեմ ես, որ մահկանացու եմ,
Ընթէ ոչ մի ժամ հաւասարի չէր.
Ընայս պատճառով բանականութիւնը,
Որիտ դնելով նիւթի հաւասարութեանը,
Հաւասար ձև և հաւասար կերպարանք
Իմացել է տալ որպէս դագաղին նոյնպէս և օրորոցին.
Որպէս մի բնական շարժողութիւն մարմնի,
Պոլոր է մարդս, որ կամէր մի բան ընդունել,
Ետարձրացնել իւր ձեռքը որ կցած էին.
Ընթէ կամէր նա բաց թողուլ նորան,
Ընպա նոյնպիսի կերպով վարվում.
Իւր բեռը իւրեանից բաց ձգելու համար
Պարձուցանում ձեռքը դեպ ի ցած միայն։
Ընյսպէս ևս աշխարհը մեր ծննդեան օրին.
Որպէս ապացոյց թէ նա որոնում մեղ,
Կամի նա ընդունել օրորոցի մէջ և բարձրացնում ձեռքը
Պնեղ պաշտպանելու համար.
Ետայց երբ որ բարկութեամբ և խրոխտալով
Կամի նա մեղ բաց ձգել իւրեանից, այնուհետև յեղաշրջում
Պիայն իւր կցած ձեռքերը, և նոյն անտիը
Պոյն խորհրդով փոխում իւր ձևը.

Ընդհուպհետև ինչ որ օրորոց էր դեպ ի վեր,
Ընդհումն դագաղ դեպ ի ցած դարձուցած.
Ուրեմն մեր մահուն այսպես մտիկ ապրումենք,
Եւ խիտ մերձակից միմեանց ունինք մեզ, երբ որ ծնած էինք,
Ինչպես օրորոցը, նոյնպես և գերեզմանը:
Ո՛նչ ակնկալութիւն ունի նա, որ լսումէր այս բանը,
Ով որ գիտէ սորան, ինչ կարող էր խնդրել:
Ոչ թէ կեանքը կարող էր լինել այդ խնդրելին,
Զա բացայայտ է մի խելացի պատճառից.
Ընդ արդարև մահը միայն, և այս բանը խնդրումեմ ես.
Որ երկնային տեսչութիւնը յօժարի իմ ցանկութեանը
Պետանելու հաւատի համար. գուցէ կարծումես դու,
Թէ սորա շարժառիթը յուսահատութիւն էր.
Նայց որովհետև ես ապրումեմ որպես ապաշխարանք ինձ,
Ընդ այս պատճառով իմ յատուկ յօժարութիւնն է միայն,
Իմ կեանքը, հաւատի արդար պաշտպանութեան համար,
Նաց թողուլ, որպես զոհ նուիրելով Աստուծուն իմ մարմինը
և հոգին:
Եւ այսպես. եթէ արդէն խնդրումէի մահ,
Պիտոյ է արդարացնէ ինձ այն յօժարութիւնը,
Եւ եթէ քո մէջ կարող չէ գութը յաղթող լինել,
Թէև ապա ստիպէ քեզ խստութիւնը: Անիծ ես դու,
Ապա գոռայ սրտիդ կատաղութիւններից, և կտոր կտոր արա նորան
Որ արհամարհումէ, անարգումէ և դիմադարձ է քեզ.
Ընծիւ ես դու, ապա թող քո կտուցը և ճանկերը
Ալ իրաւունն նորան, որ համարձակվումէ քո բոյնը խուռնակել.
Դևերինմս ես դու, ապա ծանօթութիւն տուր,
Թէ փոթորիկներ մնանումեն նաւարկուին,
Որ ակօսումէ միջից աշխարհի ծովը.
Ընքայական ծառ ես դու, ապա ցոյց տուր
Ընդ մրրկի սաստկութիւնը, որ կատարումէ
Ընտուծոյ դատաստաններըը, բոլոր ճիւղերը
Պերկացնելով իւրեանց տերևազարդութիւնից,
Ընդամանդ ես դու, ապա դարձիր թուխաւոր կատաղութիւն,
Ջարդուփշուր լինելով որպես փոշի,
Եւ սպառիր քո բոլոր զօրութիւնը. պատճառ, ես,
Թէև կրէի ես առաւել տանջանք,
Թէև տեսանէի ես առաւել խստութիւն,

Թէև հառաչէի ես առաւել տառապանքի մէջ,
Թէև հասանէր ինձ ես առաւել թշուառութիւն,
Թէև զգայի ես առաւել պատիժ պատուհաս,
Թէև տանէի ես առաւել քաղցի
Թէև արդէն ահա կոտորտանքը չէն ծածկում,
Իմ մարմինը, և իմ օթևանը այս տեղ գտանում էի
փտած ու նեխած աղտեղութեան մէջ.
Սակայն պինդ և ամուր կամ ես իմ հաւատի վերայ,
Որովհետև նա արեգակ է որ ճառագայթում է ինձ,
Որովհետև նա լոյս է որ առաջնորդում է ինձ,
Դաշնի է, որ պիտոյ է լինի ինձ փառքի պսակ։
Ոչ թէ նկեղեցին, այլ ինձ կարող ես դու
Որպէս զերկի տանել քո յաղթական կառքի առաջև.
Ըստուած կը պաշտպանէ իմ բանը,
Որովհետև ես պատերազմել եմ նորա բանի համար։

ԹԱԳԱՒՈՐԸ.

Մի թէ կարելի էր այդպիսի տանջանքի մէջ այրվել,
Եւ այնու ամենայնիւ պարծենալ և մխիթարվել այդ քո
Տանջանքի մէջ։ Դու կարող ես դատապարտել ինձ,
Նայց դրա օտար լինելով ինձ, կարող չեն ցաւեցնել ինձ,
Որովհետև դու ինքդ չկամիս ցաւել քո վերայ։
Եթէ քո յատուկ ձեռքը զրկել է քեզ կեանքից,
Եւ ոչ թէ իմը. ապա մի յուսար դու ցաւակցութիւն ինձանից.
Նախ և յառաջ ցաւակից եղիր դու ինքդ քեզ,
Ապա, ֆերնանդօ, կը շարժես դու իմ դուրը։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Ձեր արքայական մեծութիւնը թող,
Որպես իշխան տէր, օրնէ ինձ։

ԹԱՐՈՒՊԱՆԹԷՑ.

Ըստ ինչ ողբալի ցաւ է։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Եթէ գիտութեան աստուածայնութիւնը
Հոգի է, գեղեցկութեան պատկերի տակ,
Ապա ցուցէք այդ բանը, թագուհի, աղաչելով
Իմ համար թագաւորը։

ՓԻՆԻՔՍ.

Սարսափելի վիշտ։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Ձկամիք նայել իմ վերայ։

ՓԻՆԻՔՍ.

Ո՜հ, մահ է դա։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Խարի է ձեր արածը. պատճառ, ձեր աչքերը
Սրժան չէր, որ ներս ծծկին իւրեանց մէջ ցաւ և վիշտ։

ՓԻՆԻՔՍ.

Այդ ինչ զարհուրելի տեսարան է աչքիս առաջև։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Ահպետ և դուք զարձուցանումք ինձանից ձեր դէմքը
Եւ կամիք շտապել հեռանալ ինձանից,
Այնու ամենայնիւ, թող ուսուցանեմ ձեզ, Թագուհի,
Ահև դուք համարումք ձեզ այնքան զեղեցիկ,
Դուք աւելի արժանի չէք քան Թէ ես,
Եւ գուցէ ես աւելի արժանի քան Թէ դուք։

ՓԻՆԻՔՍ.

Վհատեցնելի է մի լոկ ձայն ձեր բերանից.
Ձեր շունչը պատճառումէ ինձ վէրք.
Ահ՛ող ինձ, մարդ դու, ինչ կամիս ինձանից.
Սենայն ցաւ արդէն զգացել եմ ես։

(Փինիքսը հեռանումէ. Դօն Ջուանը գալիս է բերելով մի հայ.)

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Այս հայը բերելու քեզ, հազիւ Թէ
Ազատվեցայ Մաւրիտանացոց ձեռքից,
Որ քամակիցս ընկած զարկելով ցաւեցուցին ինձ։

ՖԵՐՆԱՆԴՈ.

Այդմից մնացած ժառանգութիւնը ցաւ ու վիշտ է.

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Վ՛ւր կալ։

ՖԵՐՆԱՆԴՈ

Այսուհետև կարող չեմ վէր կալնուլ դորան,

Ո՛տերիմ. բարեկամ. պատճառ, արդէն մօտենում
Իմ մահը։

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Ըլլքան ցաւերի մէջ
Թո՛ղ երկինքը միխիթարութիւն պարգևէ քո սրտին։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Մի և նոյն է, երբ որ մօտենար մեզ մահը.
Որովհետև մեք մարդիկս մահկանացու ենք,
Ըպա իւրաքանչիւր ոք երկրաւոր պայմանների մէջ
Պիտոյ է ինքն ըստ ինքեան հիւանդանայ,
Մինչև գտանելու էր իւր մահը։
Ո՛վ մարդ, մի լինիր անհոգ և կոյր,
Մտածիր այս պայմանադրած ժամանակումս,
Որ կայ մի յաւիտենական կեանք,
Մի սպասիր, մինչև մի այլ հիւանդութիւն
Տայ քեզ ծանօթութիւն այդ մասին.
Ըստ որում դու ինքդ քո ամենամեծ հիւանդութիւնն ես.
Մի՞շտ շրջումն կոչտ հողի վերայ մարդու քայլափոխները,
Ե՞ ոչ մի քայլափոխ կատարում չէ նա,
Որ չանցանէր իւր գերեզմանի վերայից.
Խիստ օրհնէք և ճիշդ կարգ ու պատշաճ
Ըռաջնորդումն նորան կեանքի շաւիղների վերայ.
Ըմեն մի քայլափոխը — մի ահաւոր յիշողութիւն,
Պիտոյ է յառաջ տանէ, այնպէս որ ինքն Աստուած
Կարող չէ դարձուցանել արդէն արած քայլափոխը.
Խայտ, բարեկամ, մօտենում իմ վախճանը,
Տարէք ինձ այս տեղից ձեր ձեռքերի վերայ։

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Որովհետև կենդանի իմ ես, ապա արժան է,
Որ այդ ձեռքերը գրկախառնեն քեզ։

ՖԵՐՆԱՆԴՕ.

Երբ որ մեռած կը լինիմ,
Խնդիրս այս է, որ դուք հանէիք վերայիս հանդերձը,
Իմ աղնիւ Դօն Ջուան. թագուցած պահվումէ
Խանտի մէջ մի անկիւնում իմ դաստպետական զգեստս,
Երէկ կը որոնէք դորան, որ և ես կրել եմ իմ վերայ
Ըյդքան երկար, նորա մէջ ցած թողէք ինձ, բաց երեսով,

Միայն թէ թոյլ կը տար վայրենի անգութ թագաւորը,
Որ մի գերեզման ընդունէ ինձ. թոյլ կը տար, վերջապէս
Դէպ ի գութ յօժարվելով. տապանիս վերայ գրեցէք այսպէս.
Իմ փափագող սիրտը յոյս ունի, եթէ արդէն մեռանիմ
դերութեան մէջ,
Որ ազատված այն տեղ, կը վայելեմ մի օր սեղանի
պաշտպանութիւնը.
Պատճառ, իմ կենդանութեան օրերիս տուած լինելով քեզ,
Աստուած իմ,
Ընդունէ եկեղեցիք, ապա և քո խօսքը կը տայ ինձ մի եկեղեցի,

(Նորան տանուման ձեռքի վերայ.)

5.

(Ծովեզերեայքը.)

ԴՕՆ ԱԼՖՕՆԶՕ և ԴՕՆ ԷՆՐԻԿ դուրս են գալիս պատերազմողների բազմութեամբ։

ԱԼՖՕՆԶՕ.

Ծողէք, որ այդ անկայուն կապտագոյն դաշտը
Պահպանէ այս անսանձելի նաւաշէն պաշտպանարանը
Որին, ղարհուրանք բերելով երկնքի վերայ, թոյլ է տալիս ծովը
Թևանել իւր սպիտակափայլ ուսերի վերայ։
Եւ այս տեղ, ծովեզերեայքիս մօտ, Ծողէք,
Որ ծովի յղի սարը դուրս թափէ պատերազմողների բազմութիւնը,
Որ ամենայն նաւ կրելով իւր վերայ հրաբուղխ կոկորդներ,
Վարողէ իւր անձը որպէս յունական շէնք։

ԴՕՆ ԷՆՐԻԿ.

Տէր, դու չկամեցար, որ ֆեցի ծովեզերեայքի մօտ
Չամաք դուրս գայ նախ և յառաջ մեր զօրքը,
Եւ ընտրեցիր այս տեղս, ուր պիտոյ է նոցա դուրս գալ.
Նայց շատ թանգ կ' արժէ քեզ այդ.
Պատճառ, արդէն մի կողմից մնտենումէ թշնամի բազմութիւնը
Լեռնի սաստիկ թևաւորելով մրրիկները,
Եւ սարերը ուռուցանելով նոր բլուրներով.
Մի այդպիսի բազմութիւն տանումէ թարուգանէն,

Նորա կինը, բաղդատոր դուստրը Թագաւորի,
Ցնծից դէպ ի Մարօկկո առաջնորդելով.
Այց շառաչիւնի ձայնը խօսում, բարձրաձայն կռուի պէս։

ԱԼՓՕՆԶՕ.

Ինչիկ, այդ խորհրդով եկայ ես, սպասելու նորան
Այս նեղ ճանապարհի վերայ. այլև ոչ դիպուածով
Ցղացայ այդպիսի խորհուրդ. այդ եղած է դիտաւորութեամբ,
Եւ դորա պատճառը կարելի է յայտնաստիրել։
Երէկ գնացած լինէի դէպ ի Գեց, այն տեղ ցամաք դուրս գալու,
Ըպա երկու Թագաւորների ժողովուրդքը հանդիպելու էին ինձ.
Այց որովհետև դոքա բաժան բաժան են այժմ,
Կարող եմ աւելի փոքր չօրութեամբ յաղթահարել նորանց։
Եւ յառաջ քան Թէ կը պատրաստվէին նոքա դէպ ի կռիւ,
Օ՜արկեցէք դուք պատերազմի թմբուկները։

ԷՆՐԻԿ։

Պատճիր, տէր, և նկատիր,
Ընժամանակ է այդ պատերազմը։

ԱԼՓՕՆԶՕ.

Խարկութեան սաստկութիւնը
Ձկամի աւելի ականջ դնել ոչինչ խրատի.
Ոչ մի րոպէ պիտոյ չէ խափանէ այս վըճիռնդրութիւնը.
Թող այսուհետև իմ ձեռքով բարձրացուցած մահաբեր գաւազանը
Պործ կատարէ կատաղելով բոլոր Աֆրիկայի մէջ։

ԷՆՐԻԿ.

Տես Թէ ինչպէս գիշերը ստուերապատ,
Ընելի խոր արդէն ծածկումէ խաւարի մէջ
Ընդհակնային կառքի փայլողութիւնը.

ԱԼՓՕՆԶՕ.

Ուրեմն կը պատերազմենք մութի մէջ.
Պատճառ, այս քաջ հաւատը որ հոգևորումէ ինձ,
Կարող չէ խլել ինձանից ոչ ժամանակը և ոչ բնութիւնը։
Երէկ դու այն նահատակութեան մէջ, որ դու կրեցիր,
Ով ֆերնանդո, պատերազմումէիր որպես Աստուծոյ պինուոր,
Ըպա պիտոյ է յայտնվի ինձ յաղթութիւնը,
Դա ըներելու ինձ փառք, ըներելու է պատիւ։

ԷՆՐԻԿ.

Որ յանդուգն հպարտութիւնը կամենում քարշել քեզ դէպ
ի խելագարութիւն.

ՓԵՐՆԱՆԴՈ (թատրոնահանդէսի քամակից).

Դէպ ի յարձակումն, քաջալն Ալֆոնզո. դէպ ի ղէնք, դէպ ի ղէնք.

(Փողերի նման հնչիւն)

ԱԼՖՕՆԶՕ.

Ձեռ լսում դու խառնիխուռն ձայներ
Որ արագ և տխուր հոսումեն հողմերի հետ.

ԷՆՐԻԿ.

Լսումեմ և դոցա մէջ
Դալիս է փողերի ձայն, որ հնչումեն դէպ ի յարձակումն.

ԱԼՖՕՆԶՕ.

Հապա, Էնրիկ. արի, քաջութեամբ յարձակվիր,
Մեզ անտարակոյս պաշտպանելու է երկնքի աջը.

ՓԵՐՆԱՆԴՕՆ (թատրոնահանդիսի քամակից).

Լաւ, նա կը պաշտպանէ.

(Նա դուրս է երևում Դասապետի հագուստով և մի ջահ ձեռքին).

ՓԵՐՆԱՆԴՕՆ (դէպ ի Ալֆոնզոն).

Երկնքի վերայ պարտականութիւն է դրել
Որ հաւատը և ջերմեռանդութիւնը, դէպ ի նա դարձուցած.
Նա կամի յառաջ տանել գործը
Ոչ ինձ իմ ծառայութիւններից դուրս հանել.
Պատճառ, ինձ — մի սակաւագիւտ օրինակ —
Կամի Աստուած այնքան տաճարների փոխարէն մի տաճար տալ.
Լաւ ջահի բոցը, որ վառվել է արևելքի հորիզոնի վերայ,
Ոտնած ձեռքումս, կամիմ լուսատու լինելով ճեմել միշտ
Որ հպարտ գլխի առաջև և այնպէս առաջնորդել քեզ,
Որ դու այսօր, մեծդ Ալֆոնզո, ինչպէս քո սիրտը ցանկանում,
Յաղթութեան պարծանքներ ստանայիր պատերազմելով գեղի հետ.
Որից պիտոյ չէր այժմ այն տեղ պահել ինձ,
Լաւ իմ կեանքի արևմուտքը առաւօտու արշալուսի մէջ
դեղեցկացնել.

ԷՆՐԻԿ.

Ալֆոնզո, դեռ ևս տարակոյս ունիմ այն բանի վերայ, ինչ որ
տեսանումեմ.

ԱԼՓՕՆՋՕ.

Ես ոչ. ես հաւատում եմ և դիմում եմ,
Եւ եթէ սա Աստուծոյ փառքն է,
Պատ ձայն մի տուր այսու հետև. ղէ՞նք. ձայն տուր. յաղթութիւն

(Հեռանում են ամենքեան.)

6.

(Ֆեզի պատուարների առաջև.)

ԹԱԳԱՒՈՐԸ և ՍԵԼԻՄԸ դուրս են գալիս. վերևում պատուարի վերայ կանգնած են ԴՕՆ ՋՈՒԱՆԸ և մի քրիստոնեայ ծառայ մի գագաղի հետ, որի մէջ ամփոփած է արքայաղնի դին.

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Ուրախացիր այժմ, բարբարոս դու, ամենապատուական
Կեանքը խլեցիր դու բռնակալական ձեռքով.

ԹԱԳԱՒՈՐԸ.

Խօսիր, ո՛վ ես դու.

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Ո՛ս. մի մարդ,
Որ, թէև դեռ սպանել են ինձ արդէն,
Երբէք բաժանվելու չէ ֆերնանդոյից.
Եւ, թեպետ ես սրտիս կսկծից կատաղած եմ,
Իմ ինու ամենայնիւ կամիմ որպես հաւատարիմ շուն
Ընթացակից լինել նորան մինչև ի գերեզման.

ԹԱԳԱՒՈՐ.

Քրիստոնեայք, տեսէք ահա մի արձան յիշատակի այս տեղ,
Որ գալոց դարերին պիտոյ է քարոզէ այն արդարութիւնը,
Որ ես հատուցանում եմ պատճառ, այն գործերին,
Որ լինումն ընդդէմ արքայական հրամայողների,
Վրէժխնդիր լինել չէ անգթութիւն.
Իրի այժմ, ԱԼՓՕՆՋՕ. թող դա գայ խրոխտաբար,
Ծառայութեան կապանքից ազատելու նորան.
Թէև արդէն իմ մեծ յոյսերս վանել են,
Որ ցէյտան գառնալու էր իմ սեփականը.
Ախյյ, երբ որ արդէն այդ կամակորների յոյսերը

Խորտակված են, նորա աղատութեան մասին,
Այդ ուրախ եմ ես տեսանելով նորան այդպիսի նեղ վընդանի մէջ.
Ծոռդ և մահու մէջ չփախչի նա իմ կատաղութեան
Ընժանայիշատակ պատիժներից. և այդպէս թոռդ նա մնայ այն տեղ
Որպէս ամօթի տեսարան ամենայն անցաւորի համար։

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Հուտով կը գայ քո պատիժը.
Պատճառ, դաշտերի ու ծովեզերեայքի վերայ
Ընդէն տեսանելի են այս տեղից
Իմ քրիստոնեայ աղգի պատերազմական գործերը։

ԹԱԳԻԱՈՐԸ.

Ծոռ վեր դնանք պարիսպների վերայ,
Ի հրահասու լինելու այն բանին որ նա իմից է տալիս.

(Թագաւորը և Սելիմը հեռանում են.)

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Գործը քարշելով գետնի վերայ
Նու թմրուկները զարկելով մեղմաձայն,
Թնդանօթների լուցկիքը հանգցրած և ճրագները.
Այս բոլորը վատ նշաններ են։

(Մեղմաձայն թմրուկներ. ԴՕՆ ՖԵՐՆԱՆԴՕՆ յառաջագնաց է մի վառուն ջահով, նորա քամակից ԴՕՆ ԱԼՓՕՆԶՕ, ԴՕՆ ԷՆՐԻԿ և նոցա զօրքը, որ Թարուդանդէս, փխենիքսը և Մուլէյը գերի առած բերումեն.)

ՖԵՐՆԱՆԴՕ.

Վիշերի խորհրդաւոր երկիւղի մէջ,
Ընծանօթ շաւիղների վերայ առաջնորդեցի քեզ
Այս տեղ, ուր ահա արեգակի մօտ ցնդվումեն
Մոխրագոյն ամպեր։ Յաղթողապես, ով քաջազն Ալփոնզո,
Իմ հետ ուղևորվել ես այս տեղ դէպ ի փեց.
Ահա է փեցի պարիսպը. այս տեղ կը գնես դու իմ աղատութիւնը.

(Հեռանում.)

ԱԼՓՕՆԶՕ.

Հէյ. ով կայ վերևումը. ասացէք Թագաւորին,
Որ ցանկանումեմ ես տեսանել նորան։

(ԹԱԳԱՒՈՐԸ և ՍԵԼԻՄԸ երևումեն պարսպի վերայ.)

ԹԱԳԱՒՈՐԸ.

Ինչ կամիս դու, քաջ երիտասարդ։

ԱԼԳՕՆԶՕ.

Որ դու արձակես արքայաղն պատանին
Վասապետ Դօն Ֆերնանդօն. դորա փոխարէն
Տալիս եմ քեզ Թարուգանդէն և փիւնիքսը
Որ քո առաջև կանգնած են որպէս գերիք.
Ընտրիր այժմ. Թող կամ մեռանի փիւնիքսը,
Կամ Թէ կը յանձնես դու ինձ Դօն Ֆերնանդօն,

ԹԱԳԱՒՈՐԸ.

Ինչ պիտոյ է ինձ այժմ առնել, բարեկամ Սելիմ,
Ըյսպիսի խառնաշփոթութեան մէջ կապած ու կաշկանդած.
Ընքայազը մեռած է — իմ դուստրս Թշնամու ձեռքում.
Ոսքերայ անհաստատութիւն բաղդի,
Որ ինձ ձգել է այս նեղ դրութեան մէջ.

ՓԻՒՆԻՔՍ.

Տէր, այս ինչ բան է. Դու տեսանելով
Ըյս իմ գլուխը այսպիսի նեղութեան մէջ
Իմ կեանքը այսպիսի վտանգների մէջ,
Իմ պատիւը այսպիսի փորձութեան մէջ,
Մի՞ Թէ դեռ ևս յապաղումես պատասխան տալ.
Իմ կեանքս քո ձեռքումն է
Եւ դու համբերումես — անտանելի պատուհաս —
Որ իմ ձեռքը — դառն ցաւ —
Կաշկանդէին անիրաւ կապանք.
Իմ կեանքս կախ է քո ձայնի հնչիւնից — խիստ տանջանք —
Եւ դու համբերումես, որ իմ ձայնը փոթորկայոյզ հնչէ օդի մէջ.
Իմ կուրծքը տեսանումես դու քո աչքի առաջև,
Կորացած պողովատի հանդէպ մերկ ու բաց,
Եւ դու համբերումես, որ իմայինքը
Ընդ արտասուք Թափեն Թշերից,
Որպէս Թագաւոր, հիր դու գիշատիչ գաղան,
Որպէս Հայր, դարձար դու իժ օձ.
Որպէս դատաւոր, դահիճ ևս դու,
Ըյսուհետև ոչ Թագաւոր, ոչ դատաւոր, ոչ Հայր.

ԹԱԳԱՒՈՐ.

Փիւնիքս. իմ պատասխանս յապաղումէ
Ոչ Թէ նորա համար, որ նա կամէր ուրանալ
Քո կեանքը, որովհետև երկնային տեսչութիւնը

Թողում մնտենալ իմ կեանքիս վերջը։
Եւ որովհետև այս րոպէիս անպատճառ պիտոյ է
Վերջանայ թէ միևը և թէ միւսը,
Ապա, գիտուն լինի քեզ, Ալֆօնզօ, որ նոյն ժամուն,
Երբ փիւնիքսը երեկոյեան պահուն դուրս գնաց,
Ընթայաղը արևամուտի հետ միասին խորասոյզ եղաւ
Երկու ծովերի մէջ, այս տեղ մահու, այն տեղ փրկութի։
Այս նեղ տախտակները սպասաւորումեն այժմ,
Միօրինակով իւրեանց մէջ նորա դին։
Ահ տուր գեղեցիկ փիւնիքսին,
Եւ իմ արիւնս վեր առ որպէս վրէժ քո արիւնիդ։

ՓԻՒՆԻՔՍ։

Վայ ինձ. իմ բոլոր յոյսս պիտոյ է
Ընդառնալի ոչնչանայ։

ԹԱԳԱՒՈՐ։

Այժմ ոչինչ հնար մնում չէ ինձ, մի քանի րոպէ
Պահպանել իմ կեանքս։

ԷՆՐԻԿ։

Աստուած, օգնիր ինձ. այս ինչ է որ լսումեմ.
Հաստ յուշ, ով երկինք, մնտեցաւ նորան,
Հաստ յուշ նորա փրկութեան ժամը։

ԱԼՖՕՆԶՕ։

Մի՛ ասա այդպէս. պատճառ, երբ որ ասումէին ինձ
Փերնանդոյի մութ խօսուածքը, թէ պիտոյ էր ինձ
Ընձակել նորա կապանքը, սորանով հասկանումէր նա իւր դին,
Որ սա այնքան տաճարների փոխարէն ստանայ մի տաճար,
Եւ թէ պիտոյ էր նորա մասին պայմանախօս լինել Թագաւորի հետ։
Ով տէր Ֆեցի, թէև դու մտածումէիր, թէ Ֆերնանդօն,
Ուեռաճ, աւելի թեթևագին էր, քան թէ այս գեղեցկութիւնը.
Ոայց ես, նորա փոխարէն, ինչպէս դրած է դագաղի մէջ,
ընդունումեմ սորան։
Ուրեմն ուղարկիր ինձ ձիւնը բիւրեղների տեղ,
Պայիսի տեղ Ցունվարը, վարդերի տեղ գոհարները,
Վերջապէս մի լոկ հանգուցեալ մի պատկերի տեղ, որ փայլումէ
աստուածայնաբար։

ԹԱԳԱՒՈՐ.

Ինչպէս. ինչ ես ասում, քաջազն Ալփօնզօ.

ԱԼՓՕՆԶՕ.

Որ դու նորան ցած թողնէիր պարսպից.

ՓԻՆԻՔՍ.

Փրկանք եմ ես մի հանգուցելու փոխանակ.
Այդպէս եղել է երկնային տեսչութեան կամքով։

ԹԱԳԱՒՈՐ.

Պարսպի մօտից ցած թողէք դագաղը,
Տուեցէք նորան Ալփօնզոյի ձեռքը.
Ես ինքս կամիմ ցած իջանել և դնել
Իմ անձը նորա ոտքի մօտ։

(Հեռանում թագաւորը. դագաղը չուաններով ցած է թողվում պարսպից.)

ԱԼՓՕՆԶՕ.

Դու սուրբ արքայազն և մարտիրոս,
Թո՛ղ իմ ձեռքս դրկախառնեն քեզ։

ԷՆՐԻԿ.

Ես պաշտումեմ քեզ, այս տեղ, եղբայր իմ.

(Թագաւորը, Դօն Ջուանը և քրխառնեալ ծառայքը դուրս են երևում ցածումը.)

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Թո՛ղ ինձ, քաջդ Ալփօնզօ, ըմբռնել քո ձեռքը.

ԱԼՓՕՆԶՕ.

Դօն Ջուան, բարեկամ իմ,
Հաշիւ ու համար տուր ինձ արքայազնի մասին,
Հաւատարմութեամբ։

ԴՕՆ ՋՈՒԱՆ.

Մինչև ի մահ,
Կորա ընկերակից, մինչև ահա տեսայ նորան ազատ,
Մեռած ու կենդանի բաժանված չեմ նորանից.
Ահա դրած է նա դագաղի մէջ։

ԱԼՓՕՆԶՕ.

Տուէք ինձ, քեռի, ձեր աջ ձեռքը
Թէպէտ ես յիմարութեամբ և անզգաստաբար,
Ձեղ վտանգից փրկելու, վեհմտապատիւ տէր,
Այսպէս յուշ վերայ հասայ.

Ա՛հոս մէջ — որ ամենամեծն է,
Երևումէ բարեկամութիւնը ամենից առաւել.
Մի վեհմտիառ տաճար,
Որպէս արժանի պատուաստիշատակ
Ձեր հանգուցեալ մարմնին կամիմ ես նուիրել։—
Փիւնիքսը և թարուդանդէն յետ տալով քեզ, Թագաւոր,
Խնդրումեմ, Փիւնիքսը տալ Մուլէին որպէս ամուսին,
Ըյն բարեկամութեան փոխանակ, որ նա ունեցել է,
Ինչպէս գիտեմ ես, արքայաշնի հետ.
Ըյժմ, գերիներ, եկէք տեսէք.
Ըհա գրած է ձեր արքայազը. վեր առէք նորան, տարէք
Ձեր ուսերի վերայ դէպ ի նաւերը։

ԹԱԳԱՒՈՐ.

Նորան պիտոյ է ընթացակից լինին ամենեքեան։

ԱԼՓՕՆՁՕ.

Ջաղցրաձայն փողերը և մեղմազարկ թմբուկները հնչելով,
Ծոյլ դուրս գնայ ըօրքը դէպ ի թաղման հանդէսը, և
Ծոյլ այդպէս կնքէ իւր վերջը, խոնարհութեամբ թողութիւն
խնդրելով
Իւր այս և այն մեծ պակասութեան համար,
Իւր հաւատի մէջ հաստատամիտ արքայազը,
Լուսիտանիայի Դօն Ֆերնանդօն։

Ս. Նաղաբեանց։

ՀԱՅՈՑ ԱԶԳԻ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ, ԿԱՄ ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԴԱՐԸ։

Հայոց դիտաւորին մեր օրերում, որ իւր քննողական հայեացքը մեզ է ածում ներկայ ժամանակի հոգևոր դաստ անապատացած կեանքի վերայ, և անմխիթար աւերակների մէջ շրջելով ի զուր է որոնում այն տեղ մի դալար վայր, մի կանաչ ծաղիկ ու ծառ, մի զովարար աղբիւր, որի ոտքին կարող էր նա մի փոքր հանգիստ առնուլ և նորոգել իւր կենսական ոգիքը— Հայոց դիտաւորին մեր օրերում պիտոյ է թողլ տուած լինի մի քանի րոպէ թողուլ և մոռանալ տրտում ներկան և որպես թէ վշերի ու տատամնկների վերայից թռչելով անցանել դէպ ի այն հին օրերի սահմանը, ուր գուցէ թէ մտաւորական ճանապարհորդին հանդիպելու են մի քանի դալար բոյսեր, մի քանի զանազան հոտով ու գունով ծաղիկներ, մի քանի ուրախաբեր հեռք մարդկային բնակութեան, մի քանի միխիթարիչ շէնքեր մարդկային աշխատասիրութեան։ Ով իմ սիրելիք, զարհուրելի է մի ջոր ու ցամաք, անկենդան անապատ, զարհուրելի է մի գերեզմանատուն, որի մէջ մարդս շրջապատած է լուռ մեռելներից, ուր նորա ընկերքը են անշունչ և անխօս ուրուականք. մարդս կարօտ է կենդանութեան պատկերների, իւր յատուկ կենդանութիւնը ոտքի վերայ պահպանելու համար. մի անբնական բան է մահը և ոչնչութիւնը. մարդուս խորհուրդը այս տիեզերքի մէջ կեանք է և կեանքն է շարժողութիւն, յատուկ շարժմութիւն և վաստակ մարդկային կատարելութեան հրապարակի մէջ։ Եկէք տպա շտապենք դուրս դալ այդ անապատից, ուր պիտոյ է մեռանել մեր յատուկ կենդանութիւնը, եկէք վտահութեամբ ոտք կոխենք այն հնութեան սահմանի վերայ, ուր կը տեսանենք իսկոյն, որ արդարև եղել է մի ժամանակ Հայոց պատմութեան

մէջ, ուր հայկական եկեղեցու պաշտօնեայքը, ամենևին անհնարին իւրեանց այժմուս ժառանգաւորներին, հասկանալով իւրեանց սուրբ և բարձր կոչումը, զարձել են նոյնպէս ազգային լուսաւորութեան պարագլուխք, թարգմանիչք, մատենագիրք, ուսուցիչք և հովիւք ժողովրդի: Կը տեսանենք, որ Հայոց եկեղեցու նախահարքը հիշատութեամբ չեն վաստակել իւրեանց ականաւոր վաստակները ազգի համար, այլ հազարաւոր նեղութիւնների տանելով, հեռաւոր ճանապարհորդութիւնք, դառն զրկանք պանդխտութեան և օտարութեան մէջ յանձն առնելով, այո և իւրեանց հայրենի աշխարհի մէջ ևս չլինելով աղատ տնորդի հալածանքներից: Կը տեսանենք, որ մեր երանելի հոգևոր նախահարց մէջ եղել է մի այլ հոգի, մի այլ սիրտ, խիստ տևնդրութիւն և ուսումնասիրութիւն, որ այսօր գտնել են ամենևին օտար և երկրորդական բաներ մեր հոգևոր մատղների մէջ. դորանից ամենայն ոք կարող էր եզրափակել, թէ մինչև ո՛ր աստիճան խոտորվել են յիմարիքս իւրեանց նախահարց գեղեցիկ և գովանի շաւղից և փոխանակ յառաջ գնալու այդ ճանապարհի վերայ, ամենևին յետ են ձնացել: Ո՛վ այն բարեյիշատակ գարուն, որի մէջ ծագիկ են մեր երանելի թարգմանիչքը. այդ օրհնեալ հոգիքը շատ անգամ մռայել են իւրեանց մտրմնական կարիքը, ուսանելու և մտածելու համար. սուրբ և առաքինի միաբանութեամբ դիմել են նոքա օտար ազգերի տուն, հաւաքելու նոցա մէջ խիստութեան ծաղիկները, որ դոյանով զարդարեն Հայաստանի էքսաւոր անդաստանը: Ո՛վ կարող է առանց քաղցր յիշատակի ստատուքի մտաբերել այն անօրինակ աշխատութիւնքը, որոնց ենթարկել են նոքա իւրեանց անձը, ոչ թէ ուսանելով, այլ տեսատանջ կլանելով ուսումը յունական դպրոցների մէջ: Ընդ սմսուր, դժուսածին Քանատիկոսութեան թուենաւոր վիշապը, որ մեր օրերում ապականելով հոգևոր մատղների սիրտը և հոգին, թոյլ էէ տալիս մտանել եւրոպական ազգերի լուսաւորութեանը, դեռ ևս չէր բարձրացուցել իւր գլուխը, և քրիստոնէութիւնը, այն երկնաւոր պարգևը մատղկային ազգիս, դեռ ևս մաքուր և անապատ, քան որում նորա ընդունող առանը—մատղու սիրտը—մաքուր ու անապատ էր, լինելով մի գեղեցիկ պատճառ խնդության միաւորութեան և հաղորդութեան օտար ազգերի մէջ, որ մին էին Քրիստոսով, և ոչ թէ, ինչպէս այսօր, մի սխալ հալածասէր թշնամութեան և ատուածընդդէմ

ընկերատեցութեան աղբիւր: Մ՚ել դարսս Հայոց հոգևոլքը վախ-
չումեն եւրոպական լուսաւորութենից, որպէս թէ օտար ազգերի
ուսումը հերձուածողական էր, մեասակար ազգին և եկեղեցուն: Մ՚ի
թէ այդպէս են ընթացել մեր սուրբ թարգմանիչքը, այն հոյակապ
մատղիկը Հայոց ազգի և եկեղեցու, որ երբէք հասանելու չէին իւր-
եանց մեծութեան աստիճանին, եթէ աշակերտված չլինէին օտար
յունական ուսմանը. և ինչպէս կարող էին նոքա առանց ուսանե-
լու լուսաւոր ազգերից, Հայոց լուսաւորութեան հիմնադիրք դառ-
նալ: Ամենայն ոք մեր բանագէտ Հայերից գիտէ, թէ Հայոց հին
մատենագրութիւնը իւր առաւել ընտիր գործերը թարգմանու-
թեամբ միայն յունական լեզուից յառաջացուցել է, որով և դար-
ձել է մեր հին հայկաբանութեան գանձը: Ա՚հ, ինչքան անհնան
են միմեանց անցած գնացած ժամանակների և ներկայիս հոգևոր-
քը. սար ու ձորեր կան դոցա մէջ, դոքա հեռի են միմեանցից, որ-
պէս երկինքը երկրից. դոքա չկամին ոչ իւրեանց անցեալը ճանա-
չել և ոչ ներկայիս պահանջողութիւնքը, և այդպէս թէ անցած
օրերի և թէ մեր ժամանակի դառաստանով կարող չեն իրաւա-
ցնել իւրեանց անձը. լինելով ակնառու նախահայց զուսանելը,
չկամին լինել նոցա առաքինութեան ժառանգներ. լինելով մեր ժա-
մանակի քաղաքացիք, չկամին հասկանալ նորա հոգին և յառաջ
խաղալ նորա հետ միասին, այլ մէջ տեղում կանգնած, ոչ մինին
և ոչ միսին պատկանաւոր, ցուցանումեն միայն մի անոռնալեան,
մի զարառուզութիւն ընդհանուր կանոնից, մի հակառակախօսու-
թիւն այն ժամանակին որի մէջ ապրումեն, այն ազգային հասա-
րակութեանը որին անպատկիցք են: Եւ իւր ողորմելի մերկու-
թիւնը ծածկելու համար, զուր և անօգուտ է մեր հոգևորներին
պարծենալ հնութեան վաստակներով որ պատկանում չեն իւր-
եանց, ըստ որում չկայ պարծանք առանց սեփական վաստակների.
և նախահայց աշխատասիրութիւնը ոչ թէ կարող է արդարա-
ցնել թոռների անգործ դառարկապորութիւնը, այլ մանաւանդ
պիտոյ է լինի մի խիստ դատաւոր դորա վերայ:

Այսքան խօսք բաւական լինի մեր ընթերցողներին այն տխուր
յարաբերութեան մասին որ կայ այժմուս և անցածի մէջ: Այժմ
հանդէս տանք մեր ձառին և բանանք ազգի առաջև այն բաղդաւոր
գաղը, որի մէջ Հայաստանի ակնառու մատղիկը իւրեանց քրքրա-
նախաստակ գործերով փառաւորել են մեր Հայոց եկեղեցին, ազգի

իմնցականութիւնը և հայկական բարբառը, որ պարունակում էր մեր մէջ մեր բոլոր ազգային մտածութեան և զգացողութեան, մեր ուրախութիւնների և ցաւերի, մեր նիւթական և հոգեկէն կենդանութեան ապառաժը և դրծին։ Նոքա իւրեանց վաստակը արդարութեամբ կատարել են, և յանձնել են մեզ մի սուրբ կտակով, որ և մեք շահեցնելով այդ մեծակշիռ քանքարը, բազմապատկութեամբ յանձնելինք մեր զաւակներին. նոքա լուցել են իւրեանց պարտականութիւնը դէպ ի մեզ, և մեզ պիտոյ է լուցանել մերը դէպ ի մեր զաւակները, դէպ ի յետոյ գալոց ազգը։ Ա՛յս է աշխարհաշինութեան օրէնքը թէ ընդհանուր և թէ մանաւանդ մտրդկութեան մէջ։ Թանձր ամենայն բարեմիտ Հայոց վեր առնու մի քար և հաղցնէ ազգային շինուածի վերայ. այնուհետև այդ շինուածը յառաջ կ՚երթայ, կը բարձրանայ և կը դառնայ մի օր մի հոյակապ տաճար հայկական պարծանքի։

Թէպէտ մեր քրիստոնեայ Մովսէս Խորենացին զանազան տեղ իւր պատմութեան մէջ թափուած Հայոց նախահարց վերայ տասերկ յանդիմանութեան և նախատանքի կայծակներ, անուանելով նորանց անիմաստասէր, վայրենամիտ մտրդիկ, պարապողք աւազակութեան և յափշտակութեան, տգէտք քաղաքական և ընկերական կարգերի, տակայն տեղիք կայ մտածելու, որ արդէն Խրիստոսի ծնունդից յառաջ մի քանի սերմեր մանաւանդ լուսաւորութեան և կրթութեան ընկել են Հայաստանի հողի վերայ և մանաւանդ թէ յունական լեզուի պիտութիւնը և գործածութիւնը տեղ է գտել Հայերի մէջ։ Պատճառ, մի դժուար հաւատալի բան է, որ Հայերը, եթէ միտ դնենք այն շարունակ հաղորդակցութեանը որ եղած է Հայոց և Յունաց մէջ Ալէքսանդր մակեդոնացու և Սորեստանի վերայ իշխող Սելևկիդեանց օրերուամ, այլև յետոյ Հայոց և Հռոմայեցոց մէջ, անծանօթ լինէին Յունաց լեզուին և դիտութեանը։ Եւ այսպէս անհաւանական չէ, որ եղած էին Հայերի մէջ մտրդիկ, որ մտաւնադրութեան մէջ, ինչպէս Սոսրի ու եղիսպատցի հիղնակներ, գործ դրած լինէին յունական լեզուն, և իւրեանց իմնցականութեան յիշատակները արձանագրէին յունական դպրութեամբ։ Արդարև տեղեկութիւն ունինք մեք թէ Տիգրան երկրորդի որդին, Արտաւազդ անունով (60 տարի Ա՛Ք. յառաջ) յունարէն շարադրել է ազգերպական և պատմական գրուածք։ Որա վերայ պէտք է յաւելացնել այն իրողութիւնը, որ

Հայերը Մեսրոպեան սահմանի դիւտից յառաջ, բայց ի սորվի և պարսիկ նշանագրերից, դրած են աճել յունական նշանագիրը մանաւանդ. և սորանից երևացել է կշռադատել, որ Հայերը այն միջոցին, երբ ընդունած էին յունական նշանագիրը, ունէին և յաճախ հաղորդակցութիւն թէ Յունաց ազգի և թէ նոցա դպրութեան հետ:

Նայց թողնենք այն հնութեան օրերը որ չեն մեզ այնքան ծանօթ, այլև անհաստատ են. դարձուցանենք մեր հայեացքը այն օրերի վերայ, երբ քրիստոնէութիւնը արմատ է բռնում Հայաստանի մէջ: Հայերը ընդունելով քրիստոնէական ուսումը և դորա նով կրօնաբար ոչ թէ միայն բաժանվելով կրակապաշտ Պարսից ազգից, այլև յարուցանելով իւրեանց վերայ նոցա ատելութիւնը և հալածանքը, որոնց հետևանքը լինում են յետոյ յայտնի կրօնական կռիւներ, արիւնհեղութիւնք և կոտորածութիւնք — Հայերը որպէս քրիստոնեայք և անդադրելի մարտիրոսք իւրեանց հաւատի համար թափելով իւրեանց արիւնը, այն միջոցին ևս զարթնում ազգային հոգին և Հայերի սիրտը բորբոքվում մի կրակոտ սիրով դէպ ի ուսումն և լուսաւորութիւն, որոնց հիմքը պատրաստել էր արդէն մեսրոպեան բուն հայկական այբուբենի դիւտը: Նրկար քնածութենից յետոյ յառաջանում մի արագաշարժ արթնութիւն որ, ասես թէ, նկատելով թէ մինչև նր ասպնձան յառաջ է գնացել աշխարհը և ինչքան յետ է մնացել Հայոց աշխարհը, կամի դարձ դնել առնայն ջանք ու հնար, դարձուցանել կորուսած ժամանակը: Այս դարը, երբ Հայոց կեանքի մէջ մտանում մի նոր կերպարանագրծութեան խմոր, երբ Հայոց ազգը պիտոյ է ձեղքվելով բաժանվէր հեթանոսական ժամանակների վայրենամիտ կեանքից և մտանէր մի նոր կենդանութեան և աշխատասիրութեան ասպարէզ, կարելի է իրաւացի, թէպետ առնել փոքր և մանուտը չափով, համեմատել ալուեսանների և գիտութիւնների ընդատարած վերածագիութեան միջոցի հետ, որ միջին դարերից յետոյ 15 դարու սկզբում եղած է միջին Նւրոպայի մէջ: Մի նոր աշխարհ բացվեցաւ դորանով մեր Հայերի համար. այնու հետև սկսան նոքա ուսումնասիրել առնայն գիտութիւնք և առնայն ազգերի գործեր. նոցա մէջ դուրս եկան բազմաթիւ ականատես մարդիկ և մատենադիրք, մի առջողջ շարք պատմաբանների, որոնց գլուաւորը — ցաւելի է ասել — ոչ թէ միայն շատ փոքր քննած են ուսումնասիր-

ների ձևերով, այլև ցիր ու ցան այս տեղ և այն տեղ ընկած, մեռած են ազգի համար, և միևնույն այս բոպես կարողացել չէ դոյանալ մի ուսումնական ընկերութիւն, հնութեան գանձերը ժամանակին և ազգի այժմեան որպիսութեանը համեմատ մշակել և պետանի կայացանել ժողովրդին, այսինքն, այդ հնախօս ազգային դրուածքը այժմեան խօսուածքի ոճով հրատարակել և տալ ազգին. բայց այդ մատենագրութիւնը, ասում ենք, թէ մանաւանդ խորհրդով որպէս Հայոց և Հայաստանի պատմութեան յիշատակք և թէ որպէս լուսցուցիչ մատնանք համաշխարհական գործերի և լուսաւորութեան հանդիսի, որ եղած են հին աշխարհի մէջ, ունին ամենամեծ յարգ և կշիռ: Երբարև մի զարմանալի համեմատութիւն այն ժամանակի հետ, որ եղած է միջնի Եւրոպայումը, ցուցանում Հայաստանի մէջ յառաջացած նոր դարը հայկական մատենագրութեան, որի նախապատիւ վաստակքը են թարգմանութիւնք, բայց ոչ մի սեփական, ազգային խորքից դէպ ի դուրս կերպարանած արդիւնաւորութիւն, ինչպէս սկզբնաբար կլասիկականը Յունաց մէջ: Այլ մի հարազատ բուն ազգային մատենագրութիւն յառաջացնելու համար, ազգը զուգապատշաճապէս պատրաստած չէր ըստ բաւականին, այլ այն թարգմանութեան դարուց յետոյ, որ մի շատ բնականն բան է նորածագիկ ազգերի մէջ, ըստ որում սոքա իւրեանց ամելու և զօրանալու համար կարօտ են մենդատութեան արուեստքուսա և օտար յառաջընթաց ազգերից — այն թարգմանութեան դարուց յետոյ ևս չյաջորդեց մի այնպիսի ժամանակ, որպիսի յաջորդել է միջնի Եւրոպայի ազգերի մէջ, այսինքն մի նոր ինքնաբուղխ մատենագրութեան դար: Այլ ինչուն առաջին ստադիոնը (ասպարէզը) կատարելուց յետոյ, չկարողացան Հայերը ոտք կոխել երկրորդ ստադիոնի վերայ, և տես թէ չհասած հրացան. դուռ պատահանը ախուր տառերով դրոշմել է մեր համար պատմութիւնը իւր խօսուն տախտակների վերայ, այսպէս. որովհետև յառաջացան մեծամեծ խափանարարութիւնք, մանաւանդ թէ տարբերութիւնք կրօնական կարծիքների մէջ և դոցանից աստուածաբանական վէճեր և պահպանութիւն մի ազատ ազգային կերպարանագործութեան. դիր սոցա վերայ քաղաքական ազատութեան անընդհատ կորուստները, որ կռիւներով և ծառայութեան լծի տակ ձգելով ազգը, արտաքուստ այնպէս շլմորեցին հայկական մատենագրութեան ընթացքը և նեղքուսա այնպէս ճնշեցին նորա կեն-

դանուԹիւնը, որ նա պիտոյ է այնուհետեւ ճնալ որպէս մի լրիւ ան-
ուեալ, ազգային կեանքից օտարացած նիւԹ, մինչեւ նոր ժամանակ-
ներում (սկսեալ 18 դարու մուտքից) երեւումն ազգի մէջ Մխի-
Թարի Սեբաստացին եւ նուիրուումն իւր կեանքը վերստին կենդանա-
նելու եւ մանկացնելու հայկական մատենագրուԹիւնը: Ասայց Թէ
ՄխիԹարը ինչ չափով, եւ ինչ պայմանների տակ կարողացաւ յա-
ռաջ տանել այդ դործը, ապդեցք նորա մէջ եւ նորա աշակերտների
մէջ եղած է այն դաղափարը որ խորին դերեզմանական խաւարից
դուրս հանելով հայկական մատենագրուԹեան յիշատակը մեռե-
ցնեն նորանց ազգային կեանքին եւ շինեն մի անօԹ եւ շարժառիԹ ազ-
դային լուսաւորուԹեան դալոց ՛այերի համար, ինչպէս միջին Դա-
րերայի ազդերի համար յոյն եւ լատինական լեղուների վերակենդա-
նուԹիւնը եւ ուսումնասիրուԹիւնը դարձաւ, լինելով հիմք եւ խԹան
նոր եւրոպական մատենագրուԹեան, ժողովրդի լեզուով եւ ժամա-
նակի պիտոյքին համեմատ. այդ խնդիրների վերայ չկամինք խօսել
այս տեղ: Ասենք միայն, ուշադիր լինելով հին մատենագրուԹեան
ընԹացքին, որ եւ ՛այոց ազդի մէջ պատահել է նոյն բանը, ինչ
որ Դէժերանդօ ֆիլանԹրոպական փիլիսոփայի հետաքննուԹեամբ տե-
ղի է պատահել բարբարոս ազդերի մէջ, երբ որ դոքա յանկարծ,
առանց նախընԹաց ձգտողուԹեան հոդու, առանց նախապատ-
րաստող դաստիարակուԹեան ըմբռնելումն մի օտարազդի մատե-
նադրուԹեան ազդեցուԹենից, եւ երկարաձիգ դարեր խառնը բան-
սի մէջ նստելուց յետոյ դուրս են քարշվում դէպ ի մի լուսատոյ-
ծառ արեւի հրապարակ: Մի ազդէն պատրաստ, դուրսից տա-
ցած դիտուԹիւն կամ մատենագրուԹիւն, որ ներսից դուրս չէ բող-
բոջել որպէս մի աղատ, ազդային բոյս, ազդերի հոդու համար դա-
նում մի կապանք աւելի, քան ԹէՀ մի խԹան դէպ ի յառաջադի-
մուԹիւն, եւ նոյն իսկ օտար դիտուԹիւնը, ինչքան աւելի յառա-
ջընԹաց է իւր ազբիւրի մէջ, նոյնքան առաւել կապուած եւ կաշ-
կանդուած նորան, որին անտակնկալ վերայ է հատանում տդիտու-
ԹեանՀ խաւարի մէջ: Այս խորամիտ ձշմարտուԹիւնը պատճառ է
տալիս մեզ ասելու, ԹէՀ ՛այոց ազդային մատենագրուԹիւնը որ-
պէս բուն ազդային հոդու բղխուած, ունի միայն երկրորդական
արժանաւորուԹիւն, բայց եւ այս առանձին պատճառով պիտոյ
էր, որ բոլոր միւս պատմական դիտուԹիւնքը դտանէին մի առան-
ձին մատենագրական մշակուԹիւն: Արդարեւ, ՛այոց մատենա-

դրութիւնը չեղաւ այնպէս ձոխ և բաղմատարած, ինչպէս Նղկականը, Ալբաբականը, Պարսիկ և Հինեականը, բայց սաացաւ աւելի հարուստ պարունակութիւն քան թէ Խուզանդեանը և աւելի ընտիր միակութիւն ոճի մասին, քան թէ Ալբաբականը, ըստ որում ունէր իւր առաջնորդ աղնիւ հելլենական գաղափարներ: Սակայն հայոց մատենագրութիւնը մեծաւիշիւ դարձաւ իւր ժամանակակից հեղինակներով, որ իբրև ականատեսք նկարագրել են արևելեան և արևմտեան ազգերի մէջ պատահած անցքերը և մանաւանդ իբրև միջնորդք պիտանի տեղեկութիւնների սկսեալ քրիստոնէական դասերից մինչև խաչակիր պատերազմողների և Մօնգոլեան պետութիւնների ժամանակը: Խոսիանները յառաջացուցին Թագաւորութեան մէջ եղած քաղաքական պատահմունքը Տրդատի մահուց յետոյ 314 թուական. և դիւրափոխոխ բնաւորութիւնը Թագաւորող իշխանի և ազգի: Տրդատի որդի Խոսրով երկրորդը ՚ոռմայեցոց օգնութեամբ, Կոստանտինոսի և Լիկինիոսի ձեռքով յաջորդից Հայրենական աթոռի վերայ, և նոյն միջոցին հարկատու դարձաւ Սասանեանց Թագաւորութեանը. բայց այս նախատական լուծը չբերից նորան ոչնչ ապահովութիւն, որովհետև Ալանքը, Մասագետաց և այլ բարբարոս ազգեր, Պարսից զրդռութեամբ, յաճախելով կովկասեան սարերից սկսումեն արշաւել ՚այաստանի վերայ և մնումեն նորա համար մի տևողական պատուհաս աշխարհի, որի երեսից ստիպուած է ՚այաստանը պաշտպանութիւն խնդրել Խուզանտիոնից: Խոսրովից յետոյ յաջորդումէ նորա որդի Տիրանը սկսեալ 322 թուականից: Սորա թուլութիւնը հասանելով մինչև այն աստիճան, որ նա մի և նոյն միջոցին ստիպուած է հարկ վճարել և ՚ոռմայեցոց և Սասանեանց, այլև հեռի մնալ ամենայն մասնակցութենից, երբ որ այդ երկու ազգերի մէջ լինելու էր պատերազմ, կոչանումէ նորան և ձեղքումէ նորա ժողովուրդը բաժին բաժին պատակելով: Շապուհ երկրորդի գազանական անգութ ընթացքը ՚այաստանի քրիստոնեայ ազգի հետ, զինի այն զարհուրելի կոխնելին որ եղան այն պատերազմի մէջ, որ ունէր նա Ամիդ երկրորդի և Պապ թագաւորի հետ, վիրջանումէ այն սխալ իրողութեամբ, 387 թուական., որ յայտնի է պատմութեան մէջ իբրև առաջին բաժանումը ՚այաստանի երկու մասն, այսինքն Արևելեան կողմն որ մնումէ Պարսից գրան և բնաւոր ծառայութեան ներ տակ, և Արևմտեան կողմն որ մնումէ Յունաց Թագաւորու-

թեան նեղքոյ։ Ա՛յս բաժանմամբս, աշխարհի առաւել մեծ և պըտղաբեր բաժինը ընկաւ Սասանեանց իշխանութեան տակ, ուր Ա՛ռղեբի կրակապաշտութիւնը աշխատութեր ստիպաբերնէ առնել քրիստոնէութիւնը, մինչ քրիստոնեայ մնացած ազգմանեան մասին մէջ, Խուզաստանի գաւառացին տակ, պիտոյ է յոշնազդի հրամայողքը առնել միայն դառնայրն Հայերի աչքառ։ Որպէս բիւզանեան կայսրները նոյնպէս և Սասանեանք ոչ ունէ ժամանակ ոչն թոյլ տուելին բնիկ աշխարհի ազգայական տոհմերին վարել իշխանական սանձը, բայց դոքա շուտով դուրս հանվելոյն կամ բնաջինջ արվելոյն, դոյա փոխանակ Խուզաստանին իւր մասնի մէջ կարդից մեծաւորք որ յայտնի են պատմութեան մէջ զինուորական Ա՛ղիսարոսներէն առնուած, իսկ Սասանեանքը յանձնեցին իւրեանց բաժնի կառավարութիւնը Ահմանապահներուն որ պարսիկ բառով ասվում են Ա՛րքպանք, մի դրութիւն որ փոխվում միայն Ընթաքացոց ներս մտանելով Հայաստանի մէջ, բայց չէ բարեբաղձում։ Որովհետև Հայերը ընդդիմանում են Ա՛ռհամմեղի Վարդանին, այդ պատճառով նոյա դրութիւնը մարդաբերէի նախանձամոլ յայոզդնեղի իշխանութեան տակ աւելի թշուառանում քան թէ պարսիկ Հազարհնեղի դաւառացին նեղքոյ, այնպէս որ մի քանի կարճամիջոց ընդհատութեամբք (զոր օրինակ Խազրատունեաց թագաւորութեան օրերում) մինչև Օսմանեանց ժամանակը և այնուհետև հարատհարութիւն և տարկութեան լուծ ծնում մեծի մասին Հայոց ազգի ճակատագիրը։

Քրիստոնէութիւնը, ինչպէս ամենայն տեղ, նոյնպէս ցոյց տուեց իւր օրհնաբեր ազդեցութիւնը և Հայաստանի ժողովրդի վերայ, որ մինչև նորա ներքաշումը մնացած էր ամենևին անպատմարակ և վայրենի։ Քրիստոնէութիւնն է եղել, որ թէև ենթարկվելով բազմապատիկ ստրկանութեան, այնու ամենայնիւ ազգի դրութեան բոլոր յեղաշրջ փոփոխութիւնների մէջ իւր համ բարեհաճ զօրութեամբը փրկել է նորան կործանութենից։ Քրիստոս Լուսաւորչի քարոզութեամբ քրիստոնեայ դարձած Տրդատ, ինչպէս պատմութիւն է լինում Ագաթանգեղոս պատմագրքի մէջ, հրամայեց Հայոց թագաւորութեան բոլոր մանկունքը դպրոցարկել դիտութիւնների մէջ, այլև հիմնաց քուրմերի որդիքը հաւաքել քրիստոնէական դպրոցների մէջ, բաժանել նորանց դաս դաս և լաւ ուսուցիչներ կարգել նոցա վերայ։ Դորանով, չորրորդ

դարու վերջումը պատրաստվում այն ոսկի ժամանակը հայկական մատենագրութեան հինգերորդ և վեցերորդ դարու մէջ: Առաջ երևելի մարդիկը հեթանոս հայ քրմութիւից, որ ընդունել էին միաբանութիւնը, պրիզոր լուսաւորիչը թողել իւրեանց պատուի և իրաւունքի մէջ և սորանով դրաւել նոցա սիրտը դէպ ի նորահաստատ եկեղեցին: Շատերը այն ժամանակի հաւատակից քրիստոնեայ մարդերից, մինչև նոքա էլ մեռած յետոյ օրերի կրօնական երկպառակութիւնը, կրթեալ և դպրոցներով հռչակաւոր Սորբոնայից ու Յունաստանից հրաւէր առնելով, օթեան հաստատեցին Հայաստանի մէջ և գործակից եղան յաւաջադէմ կայացնելու եկեղեցին և դիտութիւնը: Սորա փոխանակ, հայրենասէր պատմիչ շատոհ թագաւորի ծախքով բազմաթիւ հայազգի պատանիք ուղարկվեցան դէպ ի Եգիպտոսի, Ալեքսանդրիայի, Աթէնքի, Կոստանդնուպօլսի դպրոցքը, որ իւրեանց անձը կատարելագործեն աստրի և յունական լեզուների մէջ, այլև ուսանին փիլիսոփայութիւն և պատմագիտութիւն, ըստ որում մտածում էին Հայերը, թէ ընտիր թարգմանութիւնք առնելու համար, պէտք էր թէ լեզուագիտութիւն և թէ բանագիտութիւն: Աթէնքի մէջ վաղուց հաւաքված էին ուսանողք Ասիայի ամենայն կողմերից. նոր պղատոնական Յուլիանոսի մեռ դառնալումէին աշակերտանել Արարիայից, Ասորեստանից և Հայաստանից. սոքա 4 դարու սկզբումը ահա բազկացնում էին ջոկ ջոկ ազգային ընկերութիւնք, զոր օրինակ Ռոմիացիք, Պոնտացիք որպէս և Հայաստանցիք: Հայերը 4 և 5 երորդ դարու մէջ դիմում էին դէպ ի այն օթեանները դիտութեան, ինչպէս 15 և 16 դարում Գերմանացիք դէպ ի համալսարանքը Իտալիայի, որ առանձն այն տեղ իւրեանց կլասիկական կրթութիւնը: Հայպէս կարող էին յաւաջանալ Հայաստանի մէջ նոր դպրոցներ և այսպէս յաւաջացաւ այն մեծ դպրոցը թարգմանիչ մատենի: Սահակ պարթեւացին, Եղիսէս մեծի աշակերտը, մի հայկական կաթողիկոս 5 երորդ դարու սկզբումը, դիտութեամբ ու խմաստութեամբ մեծ ազամանդ, ամենայն կերպով յաւաջադէմ կայացած Հայերի կրթութիւնը և Մեսրոպ Մաշտոցը դարձ դնելով իւր նորագիւտ նշանագիրքը, հիմք ու արմատ տուեց այդ կրթութեանը, և ասորի ու յոյն դիտութիւնը Հայերի մէջ կերպարանեց որպէս ազգային հայաստութիւն: Մենք տեսանումենք այս իրողութիւնքը տուրը Մեսրոպի վարքագրութենից որ Թողել է մեզ նո-

բա աշակերտ Աորիւն սքանչելին, նկատագրելով այն առանձին, թարգմանութեամբք յառաջացած ուսումնական կեանքը Հայաստանի: Աորիւնը պատմում մեզ թէ Սահակ պարթեւացին և սուրբ Մեսրոպը աշխատում էին իւրեանց աղգը ոչ թէ միայն դասախաւրակել դիտութիւնների մէջ, այլև վարժ ու յաջողակ կացուցանել: Սահակ պարթեւացին և Մեսրոպը ձեռնարկեցին թարգմանութիւնների և սեփական գրուածների. այլև հարկաւոր երևեցաւ նոցա, իւրեանց գիտական խորհուրդը յառաջ տանելու համար, դուրս ուղարկել Յովսէփ և Եզնիկ եղբարքը. սոցա նախանձաւոր լինելով, մի քանի ժամանակից յետոյ, իւրեանց կամքով դիմեցին Հայաստանից դէպ ի Յունաստան և այլ քահանայք, զոր օրինակ Ղևոնդը և Աորիւնը: Սուրբ Սահակի և Մեսրոպի ձեռքի տակից յառաջացան այն մարդիկը որ դիտութեան սէրտից հանդիսանալի մէջ երևելի են կացուցել իւրեանց անձը որպէս թարգմանիչք և որպէս ինքնօրէն մատենագիրք, և այդպէս ժառանգել են սուրբ Հայրապետների անուն. զոյս թիւը եղել է աւելի քան թէ քառասուն. Մովսէս Խորենացի, Փաւստոս Բուզանդ, Եզնիկ կողբացի, Խորոնէկ, Մամբրէ վերծանող, Եղիշէ Ամատունեայ եպիսկոպոս, Յովսէփ և Ղևոնդ եղբարք, Աորիւն սքանչելի և այլն:

Այս թարգմանիչքը գործեն նոյնպէս հայկական մատենագրութեան ընտիր հիմնադիրները. նոցա թարգմանութիւնքը, զոր օրինակ աստուածաշունչ գրքի, իւրեանց մաքուր և անսեթևեթ ոճով փառաւորվում են մինչև այսօր որպէս ընտիր գոգտիարք հնախոս հայկաբանու թեան: Պէտք է ասել այս տեղ, որ սրբազան նիւթը որ մշակում էին մեր թարգմանիչքը, յառաջացուցել է նոյնպէս մի համարձակ, ազատ և գեղեցիկ լեզու: Նոյն պատճառքը յառաջացուցել են նոյն ներգործութիւնքը և միւս ազգերի մատենագրութեան մէջ, զոր օրինակ գերմանական ազգի:

Առաջին գիրքը որ յունական լեզուից թարգմանվել է դէպ ի հայ բարբառ, միտ դնելով ժամանակի որպիսութեանը և ժողովրդի անմիջական կարօտութեանը, պէտք է լինէր աստուածաշունչ մատեանը: Ղազար Փարպեցու մեծահշիւ պատմագրութեան մէջ կարդում ենք ահա, որ երանելի սրբազան Մաշտոց տարօնացին, հայկական տառերի գիւտից յառաջ, նուիրում էր երկարաժամանակեայ մտածութիւն ազգի պիտոյքներին և օր ու գիշեր ապաւէ է նորա հոգին, տեսանելով Հայաստան աշխարհի մանուկ-

ների չարչարանքը. որ մեծ ծախքով և հեռավոյց ճանապարհորդութեամբ և երկարատև ժամանակով մեշումէին իւրեանց օրերը ասորի գիտութեան դպրոցներուն մէջ. պատճառ, ՝այոյց քրիստոնէութեան առաջին դարուն, եկեղեցական ժամերդութիւնքը և սուրբ գրքի ընթերցուածքը վանքերուն և եկեղեցիներուն մէջ կատարվումէին ասորի լեզուով, և ժողովուրդը կարող չէր ոչինչ հասկանալ և օգուտ քաղել այդպիսի օտարախօս կրօնասպաշտութենից, այնպէս որ թէ բազմութիւնը և թէ ուսուցիչքը ունայն և դատարկ հրաժարվումէին եկեղեցուց, յոգոց հանելով և հառաչելով ղղջանալումէին իւրեանց երկուատակ մեռոտի ջանքը: Մեսրոպեան տառերի գիւտից և կարգաւորութենից յետոյ կարելի էր բանալ աղգային դպրոցներ, որին և ցանկանումէր ժողովուրդը, ըստ որում, հինչպէս ասումէ Ղ՝ազար Փարպեցին, ամենայն անձը վստահացումէր ուսանել հայերէն գիտութիւն, որպէս մի խաւարից դէպ ի լոյս ազատվիլ ասորի տանջանքից: ՝այստանի հայրենասէր մարդիկը մի փոքր հեռատես լինելով քան թէ այժմեան ՝այոյց ազգը, նկատեցին խնդին, որ անօգուտ էր կարդալ դպրոցներ, եթէ չկային ուսանելի գրուածք, և ինչ պիտոյ է ուսանէին կամ մանկունքը կամ ժողովուրդը, եթէ քրիստոնէութեան գրաւոր յիշատակարանքը, եկեղեցու սուրբ կտակարանքը չկային դեռ ևս հայերէն լեզուութեամբ: Ա՝յսպէս ահա վերահասու եղան թէ ժողովուրդը և թէ նորա ուսուցիչքը որ հարկաւոր էր ՝այոյց քրիստոնէական դաստիարակութեան համար, նախ և յառաջ թարգմանել աստուածաշունչ գիրքը յոյն լեզուից դէպ ի հայ բարբառ: Ա՝յս մեծ գործին ձեռնամուխ լինելու—ասումէ Ղ՝ազար Փարպեցին—չհամարձակվեցաւ ոչ երանելի Մաշթոցը և ոչ նորա ընկերակից պատուական քահանայքը, որովհետև չէին այնքան զիտնապէս տեղեակ յունարէն ուսմանն. և այդպէս գործը վիրաբան ապաչանքով թէ հոդևորներուն, թէ նախարարներուն և մեծամեծ տանուտէրանց և թէ նոյն իսկ Ղ՝ազար շապուհ Բագրատունի կողմից յանձնվումէ Վահակ պարթևացու աշխատասիրութեանը: Մեծխնամ, քաջ յունագէտ Վահակ մեծը կամաւոր յօժարութեամբ տալով իւր անձը այդ գործին, օր ու գիշեր անվհատ ջանալով թարգմանումէ կտակարանքը, սուրբ հոգու ազդեցութեամբ ճշմարիտ մարգարէների բերանով խօսեցածքը և վերջացնելով կնքումէ իւր աշխատութիւնը նոր կտակարանի լուսաւոր և կենսատուր քարոզութեամբը: Ո՝րմանից է, որ այս մեծ

հոգևոր վաստակը, որ Ղազար Փարպեցին ընծայում է Սահակ պարթևացուն, Մովսէս Խորենացու պատմութեան մէջ, դիրք 3. և բնա 498, ընծայվում է Եսայոյ Մաշէթոցին և նորա աշակերտ Յոհան Եկեղեցայրենին և Յովսէփ Պաղնացուն: Վերջաղաւհոր խօսքերը այսպէս են. «Եսրոպը Հռոմանոսի հետ միասին կերպանձևելով Հայոց դիրը, փոխատրում հայերին ազգութեաքը, հետևելով հիւլենացոց վանկերի անսխալ յարմարութեանը. և իսկոյն ձեռնարկում թարգմանելու սուրբ գիրքը, սկսանելով Առակներից. բոլոր ասա և եբէս յայտնի գրուածքը աստուածաշունչի և նոր կտակները փոխում դէպ ի հայ բան, նա և իւր աշակերտները Յոհան Եկեղեցայրին և Յովսէփ Պաղնացի:» Հարմարք է, որ երկու ժամանակից հեղինակք, որոնց պարտ էր ամենայն ստուգութեամբ տեղեակ լինել մի այդպիսի մեծ լրտղութեան որ եղել է իւրեանց մօտակայքում, այլևայլ խօսք ու զրոյց ունին իւրեանց գրուածների մէջ, թէպէտ հայկական տառերի գիւտի մասին ամենևին համաձայն են միմեանց մինչև նոյնութեանութիւն, այսինքն նոյն բանը նոյն բառերով պատմելով: Աստուածաշունչի թարգմանութիւնը որի վաստակն է ստուգութեամբ, Սահակ մեծի, թէ Եսրոպ ասքոնացու, ուրեմն չգիտեն ինքեանք այլ ակնարկ է գրեան սեփականեն որպէս ընդհանուր պարծանք իւրեանց «սուրբ Թարգմանիչք» անունով յայտնի մարդերին: Եր կարծիքը այսպէս է, որ այդոյ աստուածաշունչ գրքի թարգմանութիւնը մի մարդու աշխատութեան վաստակ չէ. այս խօսքը կարելի է ապացուցանել ոճի անհաւասարութեամբ Աստուածաշունչ գրքի զանազան հատուածների մէջ, բայց թէ որը որ հեղինակին է պատկանում, դժուար է վճռել այդ բանը մինչև եզած չէ գիտնալս հիմնաւոր քննութիւն և համեմատութիւն: Այդոյ Աստուածաշունչ թարգմանութիւնը լրանում է 410 թուակ. Քրիստոսից յետոյ, և առաջին պատճ թագաւորի օրերում և է մինը ամենահին թարգմանութիւններից, զկնի ասորի թարգմանութեանը որին ասումեն Փեշիտո: Պատմութեամբ այն հայտնէտ Եւրոպացոց որ փորը ի շատ ծանօթ ասել են մեր աստուածաշունչ գրքերի թարգմանութեանը, համարում է «հաւատարիմ աւանդ, հայկական լեզուի մէջ թագուցած, այլ և թագուհին բոլոր թարգմանութեանցն». և արդարև ոչ մի լեզու այնպիսի խորին հաւատարմութեամբ կարողացել է առնուլ իւր վերայ հոգևոր թարգմանիչների հեղինակաւոր

հին կտակարանի և ասելի նոր յունախօս նոր կտակարանի հիմքը ինչպէս հայկականը։ Նիւթը լինելով սուրբ և ղժուշալի, ±այոց թարգմանիչքը ամենայն կարելի ճշդութեամբ փոխատրել են յունական գաղափարը, բառ առ բառ թարգմանելով ամենայն բան, այնպէս որ առանց յունական լեզուի դիտութեան անհնարին է կատարելապէս հասկանալ ±այոց աստուածաշունչը։ Իրաւի, շատ օտար ոճերը այդ գրքի մէջ հանապազօրեայ սովորութեամբ ընտելացել ու հիշատացել են թէ հայ ժողովրդին և թէ հայագէտ ուսումնականին, բայց դոյց աղբիւրը—իմացած թէ չիմացած—միութեան միշտ հիմնականը և հիմնադրուցած ասիական հրէականը։ ±այոց դիտութիւնը, միայն թէ մի օր բացվէին դորա գրութքը—այս խօսքերս աստուծոյ պարտք դնելով այն կարող մարդերի հոգու վրայ որ ունէին ձեռքումը հնարք յառաջացնելու այդ գործը—մի օր վկայութեամբ կը հաստատէ մեր ասածները, որ մինչև այսօր ուրանում մի դանդաղկոտ և դիւրասէր տգիտութիւն։

Դատելով Սուրբ գրքերի բովանդակութենից չորրորդ և հինգերորդ դարու մէջ, երևում թէ Սահակ պարթևացին և նորա աշակերտները թարգմանել են միայն եկեղեցական սկզբնագրի մէջ գտանված գրքերը ±ին կտակարանի. այն յունական օրինակը որ եղել է ±այերին առաջնորդ, որ բերած էին ±այք Կոստանտնուպօլից, ստանալով Մաքսիմիանոս պատրիարգից, ասվում Խորենացու և Կորիւնի բերանով «Մոյզ և հաստատուն օրինակ»։ Ընդայնք ասած գիրքերը հին կտակարանի, զոր օրինակ Յուդիթի, Տոբիայի, Մակկաբայեցոց երկք գիրքը, և Բարուքի թուղթը փոխատրված են ասելի ազատօրէն և ասելի մեծ շրջանաբանութեամբ. այս գիրքերը որպէս և միւս այլ անյայտք որ հանդիպումն մեզ թէ հայկական և թէ արևմտեան եկեղեցումը, երևում թէ թարգմանված էին յետոյ ժամանակներում, գուցէ ոչ յառաջ քան թէ 13 կամ 14 դարու մէջ, երբ ±այերը ծանօթացան լատինական եկեղեցու մատենագրութեան հետ. այսպէս կարծում Նէմսան հայագէտ գերմանացին իւր «±այոց դպրութեան պատմագրութեան մէջ. երես 38—39. բայց միտ դնելով լեզուի մաքրութեանը միշտ գրիչքեալ գրքերի մէջ, դժուար է մանաւանդ լինել Նէմսանի կարծիքին, թէ ±այոց դպրութեան նուաղման դարերի մէջ կարող էին գոյանալ այդպիսի մաքուր հայախօսութեան վաստակներ։ Մխիթարեան Յովհաննէս Օրոտրաբանի կրիտիկական քննու-

թեամբ տպագրած աստուածաշունչի մէջ, որի մասին կը խօսինք յետոյ, գտանվում են ոչ թէ միայն վերոյհատնեալ Ընդոյսքը հին կտակարանի, այլև մի յատկութիւն բոլոր աստուածաշունչի, հին և նոր կտակարանների վերջում որ պարունակում այսպիսի գրութիւնք. 1, Գիրք Ակրաքայ. 2, Խօսք Ակրաքայ. 3, Նշան երրորդ որ լաւնական աստուածաշունչի Ընդոյսների մէջ ասվում դիրք չորրորդ. 4, Աղօթք Մանասէի թագաւորի. 5, Թուղթ Կորնթացւոցն առաջին գլուխ (և սորա պատասխանին այդ թղթի). 6, Հանդիսա սրբոյն Յովհաննու առաքելոյ և աւետարանչի. 7, Ընդհանս Նէթաղի: Առանց խօսելու այս տեղ Գաւթի սաղմոսի վերայ որ մանաւանդ տպագրութեամբ, սկսեալ 1565 թուականից հրատարակվել է Հռոմի, Վրմսի և Վենետկի մէջ, ասիտոյ է ասել թէ առաջին ամբողջ տպագրութիւնը Աստուածաշունչի հոգացել է Ոսկան վարդապետ երևանեցին, որ Յակորոս կաթողիկոսի հրամանով 1662 թուականին ուղարկվեցաւ յատկապէս դէպ ի Ամստերդամ, հայկական տառեր շինել տալու այն տեղ և տպագրելու աստուածաշունչ գիրքը. այս արտադրութիւնը մեծ քառածալ գիրքով և առնի վայելուչ տառերով, քան թէ մինչև այն ժամանակը դանազան կողմերում փորագրած էին հայերէն տպագրութեան համար, հրատարակվեցաւ 1666 թուականին. բաց ի մի հատ գրչագիր օրինակից որ ունեցել է իւր հետ Ոսկան երևանեցին, որ և այս պատճառով կարող չէր հոգալ մի կրիտիկական արտադրութիւն, չէ կարելի առանց ծանր դատապարտութեան չյիշատակել այս տեղ, որ նա անձնահաճ կամքով ձեռնառեալ է եղել աստուածաշունչին և ուղղագրել է նորան հետևելով լատինական Վուլգատա տասնչորս դարից: Սոյն անհատական հիմքի վերայ տպագրվեցաւ աստուածաշունչը Մխիթարի ձեռքով 1733 թուականին, ոչնչով դեպատգանդութիւն չունենով քան թէ Ոսկանի տիպը, այլ կրկնելով նոյն թերութիւնքը որ կային տղիւրի մէջ: Ամենալաւ կրիտիկական տպագրութիւնը համեմատութեամբ 8 գրչագիր օրինակների, որոնց առաւել հինը 1319 թուականից է, հրատարակվեցաւ 1805 թուակ. վենետկի մէջ գիտնական վարդապետ Յովհաննէս Օհրբաբեանի աշխատասիրութեամբ, և արդարև, իբրև ուսումնական ձեռնարկութեան վաստակ, արժանի է մեծ պարծանքի, գուցե մի անանման աշխատութիւն այսոց ուսումնականութեան հանդիսի մէջ, ըստ որում ոչ մի հին մատենագրութիւն չէ գտել մինչև այժմ այդ-

պիսի հիմնաւոր կրիտիկական մշակութիւն, և ՚այոյ եւրոպա-
դէտը, որ ծանօթ էր յոյն և լատինական լեզուներին, դիտէ այն թէ
համեմատութեամբ կլասիկական հնութեան գլուխգործների արտա-
դրութիւնը մեզան պակասաւոր էին հայոց հիներների արտա-
դրութիւնքը ՚ի ենեակի կամ Պոստանտնուպոլսի մէջ. տպագրու-
թեամբ արտադրել միայն մի հին հեղինակի գործ, առանց մաքրե-
լու, յարդարելու և մշակելու նորան կրիտիկապէս և մեր տեղերը
լուսաբանելու ծանօթութեամբք, մի մեծ աշխատութիւն չէ. թող
ուսումնական ընթերցողը ինքը դլուխ կոտրէ և բան հասկանայ, բայց
տդէտ ժողովուրդը կազմերի ոսկեզօծ վառահեղութենից գլուխ-
լով կ՚առնու գլուխքը և կը շարէ իւր պահարանի մէջ, գոնեայ
աչքով վայելելու այն բանը, որ պէտք էր հասկացողութեամբ վա-
յելել: Չէ, այս մասին իրաւունք կայ գանգատաւոր լինելու ՚ի ե-
նեակեան վարդապետներից, որ դեռ ևս ուսած չեն մի հին հե-
ղինակի վաստակ վայելելի կացուցանել հարցասէր ուսումնականին:
Օհանեանի տպագրութիւնը աստուածաշունչ գրքի, թէ միա-
հատոր քառածալը և թէ քառահատոր ութածալը չունի ոչինչ
արտաքին գեղեցկութիւն. թուղթը այո՛ առաւ, բայց շատ հասա-
րակ, տիպը շատ մանր և ձանձրացուցիչ աչքի համար, բայց ար-
ժան է մեր գարդասրտին և ձոխ ժամանակում պահանջել, որ ՚այ-
յոց ազգը հոգալ իւր համար մի վայելուչ և փոքր ինչ խոշորատառ
տպագրութիւն աստուածաշնչի և ընտիր թղթի վերայ. թող հե-
ռի մնայ պատկերազարդութիւնը, եթէ դորանով պիտոյ է ծան-
րացին դառնար գիրքը. թէպէտ եղել է մի ժամանակ, որ Օհա-
նեանի միահատոր քառածալ աստուածաշունչը վաճառւել է
30 մանէթ արծաթով, կամ թէ այս բառերի դլուխը ինքը վճարել
է այդքան վենետիկեան վարդապետի, մինչ Ռուսաց բիբլեական
ժողովը, ինչպէս յայտնի է և Ռուսաստանի ՚այերից շատին, իւր
պետերբուրգատիպ հայ աստուածաշունչը վաճառում է մինչև այսօր
3 ման. արծաթով: Նոր կտակարանը Բազելեան միսիոնարնե-
րի հոգաբարձութեամբ, աշխարհիկ լեզուով տպվեցաւ Մոսկվայի
մէջ 1836 թուականին. դորա վերայ աշխատել էին Հանդուցեալ
Դիմիտրիևս Ալեքսան և տակաւին կենդանի Օ. արսենիա աւետարա-
նական քարոզիչքը: Այս դործը ոչքան օդտակար մեր սիրելի ժո-
ղովրդին, այնքան էլ անհաճոյ դտանվեցաւ հոգևորներին, որպէս
թէ անարժան էր տալ ժողովրդի ձեռքը սուրբ աւետարանը, և թէ

հոգևորք միայն ունէին իրաւունք կարդալ սուրբ կտակարանը, ինչպէս հնդկական բրահմանների կարծիքով մինչև այժմ ևս չունի ժողովուրդը համարձակութիւն կարդալու Վեդամ սուրբ գրքերը, այլ ընթեռնուլ և մեկնել դորանց կարող են Բրահմանքը միայն. ոմանք մեր հոգևորներից կարծեցին ևս թէ օտարական մարդիկ Աստուածաշունչ աւետարանը աշխարհաբառ լեզուով տալով հայ ժողովրդին, կամէին քարշել ազգը դէպ ի Լութերականութիւն. ոչ տեղից ոչ տեղ. այդպիսի եզրակացութիւն կարելի էր միայն աբեղայական վանական տգիտութեան կողմից որ երկիւղի մէջ էր մի գուցե զրկվի իւր իշխանութենից աշխարհականների սրտի և խղճի վրայ, եթէ սոքա ինքեանք կարող էին հասկանալ Աւետարանի բանը, և հոգևորները չէին այնուհետև միայնակ պահապանքը սուրբ գրքի: Մի շատ օգտակար գործ է այն տպագրութիւնը բոլոր աստուածաշնչի, Տաճկաստանի աշխարհաբառ լեզուով, միահատոր երկուքիլեան փոքր ուրախալի գիրքով, Կոստանդնուպօլսի մէջ 1857 թուականին. տիպը շատ մաքուր և գեղեցիկ թէպէտ բաւական մանր. թուղթը ընտիր. գինը Ռուսաստանի մէջ 3 մանէթ արծաթի: Այս տպագրութիւնը, ինչպէս լսումենք, հոգացել են ամերիկայի աւետարանական Միսսիոնարք. կրկին անգամ օտարականների ձեռքով արած այն գործը, որ պարտական էին Հայք առնել: բայց ինչպէս երևումէ, մեր սիրելի Հայերը ոչինչ հսկան և հարկաւոր բանի համար չունին սիրտ, այլ դատարկամիտ մարդերի պէս վազվզումեն այս կողմ ու այն կողմ և մոռացումեն թէ մի մեծ և հոյակապ գործ էին կատարել, մի ազատքին և ամենևին երկրորդական բան առաջարկելով ազգին, որպէս թէ ամենայն փրկութիւն պիտոյ էր սպասել եկեղեցական ուղղափառութենից: Մեր կողմից, մեծ տարակուսանք ունինք այդ մասին:

Նոր որ նորահաստատ եկեղեցու անմիջապէս հարկաւոր պիտոյքը լրացած էին Աստուածաշունչ գրքի թարգմանութեամբ, այնուհետև մեր սուրբ Թարգմանիչքը դարձուցանումեն իւրեանց ուշադրութիւնը յունական եկեղեցու Հայց գրուածների վերայ և փոխադրումեն գոցա մեծ մասը դէպ ի հայ բան: Հայոց հոգևոր մատենագրութիւնը ճոխանումէ թարգմանելով գրուածքը Աթանասիոսի Ալեքսանդրացու, Բասեղի մեծի, Յովհաննու Ոսկեբերանի, Կիւրղի Երուսաղեմացու, Դիոնիսիոսի Ալեքսանդրացու, Եպիփանիոսի, Եփրեմի Ասորու, Նազիանզոսի Գռնատացու,

Նւսեբիոսի Կեսարացու, Նւսեբիոսի Եմիսացու, Գրիգորի Նազիանզեցու, Գրիգորի սքանչելագործի, Ագաթիոսի Կեսարացու, Իպոլիտոսի, Իգնատիոսի, Իրենէոսի, Նեղոսի Ճգնաւորի, Յովհաննոսի Պանոպօլիտանեցու, Պրոկղոսի Կոստանդնուպօլսեցու, Թէոփիլոսի Ալէքսանդրացու և միւսերի: Պիտոյ է ծանօթութիւն տալ այս տեղ, որ այս հեղինակների գրուածներից ոչ սակաւքը անհետացած լինելով յունական բնագրի մէջ, հայերէն թարգմանութեամբ պահուած են մինչև այսօր, և այս պատճառով այդ հայկական թարգմանութիւնքը ստանում են այնքան նա ստուգիլ յարդ և արժանաւորութիւն: Ադպիսիների կարգումն են Իրենէի Ասորոյ հնչակաւոր մեկնութիւնքը Պաւղոս առաքելու Թղթերի վերայ, որ մնացած են հայերէն միայն, այլև Նւսեբիոսի Կեսարացու քրոնիկոնը, որ ըստ մեծի մասին կորած լինելով յունական բնագրի մէջ և սորա կէսը միայն յայտնի լինելով Հիերոնիմոսի լատինական թարգմանութենից, ամբողջաբար մնում է հայերէն, որ և մեր ժամանակումս դէպ է լոյս ընծայվելոյն մի և նոյն տարում երկու միմեանց նախանձաւոր հրատարակութեամբ Վ՝ենետկի և Վ՝ենետկի մէջ: Հրատարակողը Վ՝ենետկի մէջ եղաւ գիտնական Յովհաննէս Օ՝ոհրապեանը որ սոյն իսկ գործի հրատարակութեան պատճառով անձնասիրութեամբ հրաժարվել էր վիենիայեան միաբանութենից. Վ՝ենետկի մէջ Մկրտիչ Ալքեպեանը. այսպէս երկու արտադրութիւնքն էս դուրս երևեցան 1818 թուականին լատինական թարգմանութեամբ. Օ՝ոհրապեանի[1]) լատինականը աւելի ընտիր է քան թէ Ալքեպեանի[2]), պատճառ, նա ունէր իւր գործակից իտալացի քահ լատինագէտ Ընգելոս Մայիոսը. բայց Ալքեպեանի թարգմանութիւնը ձոխացուցած է յառաջաբանի մէջ զանազան պիտանի տեղեկութեամբք որ վերաբերվում են գրչագիր հայերէն թարգմանութեան գիւտին, և նոյն իսկ քրինիկոնին. այ-

---

1) Սորա տպագրութիւնը ունի այսպիսի մակագիր. Eusebii Pamphili Chronicorum canonum libri II. Opus ex Haicano codice a doctore Ioh. Zohrabo, collegi Armeniaci Venetiarum alumno, diligenter expessum et castigatum, Angelus Majus et Ioh. Zohrabus nunc primum conjunctis curis latinitate donatum notisque illustratum, additis graecis reliquiis, ediderunt. Mediolani, regiis Typis, 1818, fol. min.

2) Eusebii Pamphili Caesariensis episcopi, chronicon bipartitum, nunc primum ex armenico textu in latinum conversum, adnotationibus auctum, graecis fragmentis exornatum, opera J. B. Aucher. Venet II. voll. 4 et I. vol. fol.

նու ամենայնիւ դարձ չէ մի անբաժան հաւանութիւն եւրոպական դիանաւորների կողմից, ինչպէս կարելի է տեսանել Սէն Մարտինի ծանուցարարութենից Journal des Savans, Févr. 1818 մէջ, այլև այն փոքրիկ ուսումնական ձառից Նիբուր պատմաբանի, որ 1828 թուական. տպած է նորա մանր գրուածների մէջ:

Հայոց դիանական և իմաստասիրեալ վարդապետքը հինգեւորդ դարու, բաց ի եկեղեցական Հայց գրուածներից դարձուցել են իւրեանց հայեացքը և հեթանոս Յունաստանի ականաւոր մտաւորութեան վերայ և շատ բաներ թարգմանել են դրանից թէ այս և թէ յետագայ դարերի մէջ: Հայկական եկեղեցու շրջանկատ հայքը, թէ Յունաց և թէ Լատինական իմաստուն հայց պէս, պահանջել չեն ուզեցել ազիսութեամբ, բան ուսանել հեթանոս դարերի փիլիսոփաներից, պատմաբաններից, բնագէտներից, ուսումնականներից, այլև բանաստեղծներից: Որպէս յաղթող վիպ ասածներին, կանգնած են սիւների պէս հայերէն թարգմանութիւնքը այդպիսի հեթանոսական վաստակների. այդ հաստատուն սիւները, որպէս արձանք հայկական ուսումնասիրութեան անցած գնացած օրերի հոգևոր դաստ մէջ, յատակ բերինք այս տեղ որպէս նոյնքան արձանք ամօթու և նախատինքի, մեր այժմեան օրերի հոգևոր դաստ համար: Որով հետ ինան այս տեղ Լեհարիկեան աշխատասէր արեղայքը. դորա վաստակներով պարծիլ կարող չենք մեք. դորա վաղուց ձեղքվել են և հեռացել են մեզանից. դորա հայացուս և պաշտպանող տեսքը հզել չեն ոչ Հայոց լուսաւորչակրօնքը և ոչ նորա կաթողիկոսները, այլ պատրիարքեան Կոստանդ. Թող ճշմարտութիւնը ստանայ իւր արժանի հարկը, իւր արդար հատուցումը, երբ խօսք է լինում վենետիկեան վարդապետների դիանական աշխատասիրութեան վերայ:

Հոմերոսի տաղերդութիւնքը լինելով այնքան հռչակաւոր Յունաստանի մէջ և այնքան գործածական որպէս ազգային դաստիարակութեան նիւթ, ինչպէս յայտնի է բանագէտներին, դավանանվում մեր Հայոց մտաւորութեան մէջ «Հոմերական տաղը, Հոմերական հաղնելդութիւնք» անունով, և տարակոյս չկայ որ նորա յայն բնագրից թարգմանվել են դէպ ի հայ բարբառ, բայց չեն հասել մեր ձեռքը ժամանակների անխրատութեամբ. մեր նահապետքը անպատճառ պիտոյ է հայերէն կարդացած լինին Հոմերոսի տաղերդութիւնքը. վասն զի, թող այն երեք տող նշխարը

որ ձեռացել է Հայոց մէջ Հոմերոսի իլիականից, որ ահա դնում ենք այս տեղ.

«Ինձ բնաւ ես ոչ դու իրիք պատճառք, ասէ, այլ աստուածքն.
Ոչնեստոր ոչ խաբեայ խօշևն Թէպէա և յումն էր.
Պատրոկղէ ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ անձին»:

կայ և մի հայկական բառարան, որի մէջ մեկնաբանվում են Հոմերոսի տաղերգութիւնների մէջ եղած դժուար հասկանալի բառերը, որոնց թիւը հասանում է մօտ 2000. այդ բառարանը մինչև այսօր պահվում է Փարիզեան ազգային մատենադարանի գրանոցում, որի մասին Էբրայ դը Վ Հլքիրտան Montfaucon bibliotheque nouvelle des manuscrits, հատոր 2, երես 1021, համար 70 ասում է. «Glossaires Arméniens fort-courts, à la reserve de celui qui a été composé pour l' intelligence de la version d' Homére en vers Arméniens, car il contient prés de deux mille mots». Ուրեմն եթէ կայ մի բառգիրք ուր հայերէն մեկնաբանվում են դժուար հասկանալի խօսքեր որ գործ էին ածված Հոմերոսի թարգմանութեան մէջ, ապա պէտք է, որ Հոմերոսի տաղերգութիւնքը հնուց մի թարգմանված լինին. այլապէս խորհուրդ չունի մի հաւաքածոյ Հոմերոսեան բառերի հայոց լեզուով:

Ոմանք Խորենացու «Պիտոյից» գրքի մէջ յանուցիչ հանդիպումեն մեզ զանազան նշխարք Յունաց ականաւոր մատենագիրներից, այլև հատուկոտոր բաներ այնպիսի գրուածներից որ կորած են, զոր օրինակ Նէրիսիդէոի Ողբերգութիւնից, որ ունի այսպիսի մակագրութիւն «Պելիասեանք»: Դնենք այս տեղ այդ Նէրիսիդեան հատուածը, ինչպէս մեր Վերթողաէոր Պիտոյից գրքի մէջ, երես 94 յառաջ է բերվում: «Ասայց որպէս մի դերօրինակ հնարատրոծ նկարագրութեամ Նէրիսիդէսը այն Մեդէա կինը, և այդ գիւտի մէջ դերազանցել է ինքն իւրեան: Սոյն այս կինը — ասում նա — Ակիւթացոց աշխարհից նաւատնաց եղաւ հետևելով մի Յասոս անուն մարդու, եկաւ դէպ ի Թեսալիա և կատարեց այն տեղ իւր կախարդութեան արուեստը. նա յղացաւ իւր մտքում դաւաճանութեամբ սպանել աշխարհի իշխող Թագաւորը. նա հոգեր ձգեց Թագաւորի դստեր սրտի մէջ, ըստ որում նորա հայրը խորին ծերութեան հասակում չունէր որդի որ ժառանգէր հայրենական իշխանութիւնը: «Ասայց եթէ դուք կը լսէք իմ խօսքին — ասաց Մեդեան — կարող եմ ես դարձուցանել նորան իւր պատանեկութեան

օրերը, մանկացնել Նորան այնպէս, ինչպէս դուք կը»: Այս խօսքերը ասելով, գանազան օրինակներով ցոյց տուեց թէ ինչպէս պէտք էր այս գործի մէջ վարուիլ. Նա վեր է կանչում մի խոյ, կտրատում Նորան, դնում մի կաթսայի մէջ, խնարհում Նորա վերայ, կրակ է դնում Նորա տակ և կաթսայի մէջ դրած ջերմութեամբ շարժուած կտորները խոյի իմանում այնպէս ցուցանել, որ երևում էր, որպէս թէ խոյը կենդանի է. այս խաբէութեամբ մոլորուելով Պելիասեանքը, կտրատումեն նոյնպէս Պելիաս Թագաւորը և դնում մի կաթսայի մէջ, որպէս թէ մի նոր մանկութեամբ վերստին կենդանացնելու Նորան:» Ամենք եւրոպացի քննիչք կամեցած են այս բանից եզրակացնել, որպէս թէ Եւրիպիդէսի «Պելիասեանք» անունով ողբերգութիւնը պիտոյ է բոլորսաման կերպով հայերէն Թարգմանած լինի, ուստի Մովսէս Խորենացին յառաջ է բերում այն հատուածը. բայց մեր կարծիքով այդ մի Թոյլ ապացոյց է. պատճառ, յորնպէս Մովսէս Խորենացին կարող էր դորան յառաջ բերել նոյն իսկ հելլենական բնագրից հայերէն Թարգմանութեամբ իւր «Պատմից» մէջ, առանց ենթադրելու մեր կողմից Թէ յիշեալ ողբերգութիւնը Եւրիպիդէսի անշուշտ Թարգմանած է եղել դէպ ի հայ բան: Մի կարծիքական պարծանք հարկաւոր չէ Հայոց մատենագրութեանը. դա ունի անտարակոյս պարծանքներ:

Պղատոն և Արիստոտելէս ականաւոր փիլիսոփաների վաստակները դրաւել են իւրեանց վերայ և առաւելապէս ուշադրութիւնը Հայաստանի ուսումնական վարդապետների, և դուել են նոյնպէս բազմամանեայ մշակութիւն Թէ հայերէն Թարգմանելով և Թէ բացատրելով. երանելի Ժամանակ, ուր Հայոց ասիական հոգին, մի մաքուր խմաստասիրութեամբ վառուած, կարող էր իւր մէջ օթևան պատրաստել այն, հնութեան ազգի ականաւոր մարդերի մտածութիւններին, որ շատ և շատ մանով հզել է մարդկութեան ուսուցիչ և վարդապետ. Թէպէտ հեթանոսութեան խաւար դարերի մէջ, ինչպէս մեք քրիստոնեայքս սովոր ենք ասել: Հայերէն Թարգմանութիւնքը Պղատոնի և Արիստոտելի, ինչպէս երևում է, ոչ ամենքը հասել են մեզ և հատածքը ևս մինչև այժմ պահվումեն վենետիկեան կամ միւս վանքերի խաւար խորշերում, բաց ի Դաւիթ անյաղթի վաստակներից. այնու ամենայնիւ ինչ որ մինչև այժմ Թէ տպածներից և Թէ անտիպ մնացածներից յայտնի է մեզ, ոչ Թէ մի արհամարհելի բան չէ, այլ ակնյայտնի ցուցանում մեզ մեր

անցած դնապած օրերի իմպական դերազանցութիւնը ուսման և դիտութեան հանդէպ մէջ։ Հայաստանի այժմեան աբեղանեղից ոչ մինը չդիտէ յունարէն, բայց այն հին ժամանակի վարդապետքը ոչ թէ միայն յաջողակութեամբ ընթերցասիրութեան յունական նշանաբանների դրուածքը, այլև մինչև այն ատեճան խորասուխ էին եղել յունական լեզուի դիտութեան մէջ, որ կարող էին նոր բանց և դեղեցիկ խօսքով թարգմանել դէպ ի հայ բան, և թարգմանել են արդարև։ Այդ թարգմանութիւնների կարդից յառաջ բերինք նախ, ամենից առաքելաւօս Պղատոնի դրուածքը որ սոքա են. 1. Պաշախանապատրաստութիւն Սոկրատայ (Σωκράτους ἀπολογία) որ գրել է նորա աշակերտ Պղատոնը վարդապետի մահուց յետոյ ոչ թէ Սոկրատէսի անմեղութեամբ դատապարտութիւնը հերքելու դատողների առաջև, այլ բոլոր Յունաստանի համար, որպէս յիշատակ Սոկրատէսի անուանը, որպէս մի հանդիսաւոր ճառ, պաշտպանութեան ոճով։ Այդ տեղ դուրս է երևում Սոկրատէսը խօսելով պարզ և համեստ, ինչպէս իւր սովորութիւնն էր. դորա մէջ դուրս է գայլում այն հպարտ արժանաւորութիւնը որ մի բարեպաշտ մարդու մէջ որ բառնասելամէր չարամտութեամբ, ազդում իւր անմեղութեան խոստովանութիւնը։ Եւ թէ Սոկրատէսը ըստուգապէս այսպիսի վսեմադդաց ոճով խօսել է իւր դատաւորների առաջև, դիտենք մեք Քսենոփոնի դրած յիշատակարաններից։ 2. Տիմէոս կամ վասն բնութեան (Τίμαιος ἢ περὶ φύσεως)։ Սորան ասում են Տիմէոսը Տիմէի, կրճատելով յունական վերջաւորութիւնը։ Այս տրտնջասօսութեան (Դիալօգի) մէջ Արիստաս Լոկրացին պատմում այն ազգային զրոյցը որ կար հին օրերում եղած մի քաղաքական հաստատակութեան մասին, որ Պեղկալեոնեան Ջրհեղեղից յառաջ նկարագրել, կառավարել է եգիպտական օրէնքով։ Ամենայնիւ այս զրուցով, այն վաղեմի առասպելական ժամանակում ունեցած են պատերազմ Աթլանտեղզւի այն կողմում եղած բնակիչների հետ։ Աթլանտեանքը իշխում էին Լիբիայի և արևմտեան Եւրոպայի վերայ և հնազանդեցրած կը լինէին իւրեանց չծի տակ Յունաց ազգը, եթէ չյաջողվեր Աթենացոց տահճան դնել նորա տիրապետութիւններին։ Լոկրացի Արիստասը այս զրոյցը պատմելուց յետոյ, աւանդում իւր փիլիսոփայական հայեացքը Աստուծոյ, աշխարհի գոյացութեան և բնաւորութեան վերայ, այլև մարդու և անասունների արարչագործութեան մասին։

Ի՛ոլոր գրուածի մէջ թագաւորումէ Պիթագորեան իմաստասէր-նելին սեւեռական ծանրաբարոյ և մեծահարկի ոճը խօսելու։ 3. Մինո-ւ էմ վան օբինոց (Μίνως ἢ περὶ νόμου). այս գրուածի մէջ Սոկրատէսը խօսակցութիւն ունի մի Մինոս անուն մարդու հետ օրէնքի իս-կութեան վերայ, որով, այդ խօսքը առնելով ամենայն մտքով, հաս-կանումէ նա մեր գործերի առաջնորդական լոյսը։ Ա՛յս տրամախօս-սութեան մէջ գտանվումեն առաջին սկզբունքը նոր փիլիսոփայու-թեան բարոյական և բնական օրէնքի մասին։ 4. Վ՛ան օբինոց էմ օբինոբրուդէան, 12 գիրք (Νόμων ἢ περὶ νομοθεσίας βιβλία ιβ΄) մի գործ հասուն մտածութեան, որ գրել է Պղատոնը իւր հասակի 74 տա-րում, ինչպէս կարծումեն քննիչքը. այս գրուածը մինչև առաւել նոր ժամանակներս հասնելած է մի ականաւոր վաստակ թէ իւր մեծահղութեան և թէ ձեռս նիւթի պատճառով, մի գործ որի մէջ Պղատոնը դուրս գալով մտահայեցութեան սահմանից, վերա-դարձել է դէպ ի ստոյգ իրականութեան աշխարհը, և իւր քաղա-քավարական հիմնականները, որոնց իրագործութիւնը դեռ ևս հնարաւոր էր երևումէ նորան, առանդել է աւելի մանրամասնաբար։ Նիթէ նա իւր «Հասարակապետութեան» մէջ պատկերացուցել է զաղափարական (մտքով ըմբռնելի) քաղաքապետութիւնը, այս տեղ ուրուագրումէ հիմնական դիծերը մի ոչ այնքան իդէական, և ստոյգ իրականութեանը համեմատ օրէնսդրութեան։ Խօսակցու-թեան հրապարակը է Ակռտա կղզու մէջ։ Հեղինակը դատողութիւն է առնում Մինոս և Լիկուրգոս օրէնադիրներից կարգած քաղա-քային օրէնքների վերայ, որոնց միակ խորհուրդը եղել է դաստիա-րակել պատերազմող մարդիկ. նա ցուցանումէ, որ ոչ թէ պատե-րազմ, այլ պահպանութիւն քաղաքային ազատութեան, միաբա-նութիւն աշխարհի բնակիչների մէջ և հիմնարկութիւն իմաստուն քաղաքական կարգերի էր ամենաւելին խորհուրդը օրէնսդրի. նա քննելով անցանումէ զանազան յոյն և չյոյն թագաւորութիւնքը և յայտնի է կացուցանում նոցա կառավարութեան պակասու-թիւնքը։ Ա՛յս դիպուածով, երրորդ գրքի մէջ ձեւացնումէ նա Ակռտա կրտսերի պատկերը այնպէս, որ Քսենոփոնի ձեռքով նկարածը չունի նորա հետ և ոչ ամենափոքր նմանութիւն։ Ա՛յս նախաբանական ծանօթութիւններից յետոյ, հեղինակը երրորդ գրքի մէջ դար-ձուցանումէ ուշադրութիւն իսկական առարկայի վերայ և խօսումէ իսկոյն առաջնորդների պաշտօնի վերայ որ մի բարեկարգ տէրու-

թեան հիմքն ու խարիսխն էր. հինգերորդ դլուքը պարունակում իւր մէջ հիմնական դիծերը ընկերական կարգադրութեան, պարտականութիւնքը դէպ ի ծնողքը, զաւակները, քաղաքակիցքը և օտարքը: Ապա խօսք է լինում նոր հիմնարկելի քաղաքավարութեան կարդերի և օրինքների վերայ. այն գաղափարքը որ Պղատոնը իւր «Հասարակապետութեան» մէջ յառաջ էր բերել գոյքերի, կանանց և զաւակների հասարակաց լինելու մասին, հրաժարեցնում Օրինքների մէջ, դուցէ ուղղելով իւր սխալանքը «Հասարակապետութեան» մէջ, կամ թէ ծերութեան խմաստութեամբ նախատեսանելով այն կորստաբեր հետևանքը որ պիտոյ է յառաջանային գոյքերի, կանանց և զաւակների հասարակաց լինելուց: Վեցերորդ գլուխ պարապում նա քննելով քաղաքական մեծատունքը, այն օրինքը որ վերաբերվում են ամուսնացնելու ծառայքը և վարվելու նոցա հետ. եօթներորդ գլուխ մանուկների դաստիարակութիւնը և ուսումը. ութերորդում քննելով ազգի ծնելը և վաճառաշահութիւնը. իններորդի մէջ քննելով յանցանքը. տասներորդի մէջ խօսում սրբազան նիւթերի վերայ. տաճն և միերոյդումը ընկերական պայմանագրութիւնների, դաշնաւորութիւնների, կռակների և նմանապիսի բանների վերայ. տասն և երկուերորդինը զանազան իրողութիւնների վերայ, զոր օրինակ պատերազմական կարգի և սաստի, երդման, վաճառական առուտուրքի վերայ միւս տեսակ նիւթերի հետ, սեփականութեան իրաւունքի և ժամանակի անցմանը կորուսանելի իրաւունքի վերայ: 5. Ե-Ռ-Ի-Ր-Ե կամ թէ վասն Երկիւղածութեան (Εὐθυφων ἢ περὶ ὁσίου). այդ գրուածի նիւթը այս է. Սոկրատէսը այն միջոցին, երբ պատահաբար ելած էր որպէս մի անպատահար մարդ դէպ ի աստուածքը, հանդիպում է մի Եւթիփրոն մարդու (մի մեծամիտ խելացնորի և մեծ մեծ կոտորող պարծեցողի) որ խորին տեղեկութիւն ունէր աստուածների անունների և առասպելների մասին, որ և Պղատոնը հանդէս է բերում որպէս փոխանորդ քուրմերի, տեսանողների, բանաստեղծների, սոփհստների (իմաստակների) և բոլոր չաստպոլների հայրենական կրօնին: Ինչ կապում է սորա հետ, երբ որ սա իւր հայրը մի ծառայի սպանութեան պատճառով պատահարել էր դատաստանի առաջև, մի իմաստակութիւն այն խնդրի վերայ, «Թէ ինչ էր երկիւղածութիւնը,» մի իմաստակութիւն որի մէջ Սոկրատէսը յաղթելով ստիպում է Եւթիփրոնին խոստովանել, թէ նա չգիտէր թէ ինչ է երկիւ-

գաճուԹիւնը. այս բանը առիԹ է տալիս փիլիսոփային արհամարհել ժողովրդի ըմբռնմունքը Աստուծոյ և աստուածեղէն բաների մասին: Այս քննուԹիւնը լրանում էր, պատճառ Պղատոնը միա դնելով ժամանակի հանգամանքին, կարող էր վճռաբար ասել իւր կարծիքը խնդրի տակ եղած առարկայի վերայ:

Մնք յառաջ բերեցինք այս տեղ Պղատոնի գրուածներից հայերէն Թարգմանած դրքերի բովանդակուԹիւնը այն խորհրդով, որ դոքա մինչև այժմ տպագրուԹեամբ չեն տեսել յերեկի լոյսը. բայց ցանկալի էր, որ մխիԹարեան աշխատասէր վարդապետքը այդ ԹարգմանուԹիւնքը դէպ ի լոյս հանէին, որ լինելու են ոչ Թէ միայն պիտանի Հայոց ուսումնականին, այլև գտանելու են մեծ չնորհաշատուԹիւն եւրոպական յունադէտ դիտաւորներից: Ինչպէս տեսանում նոր Հայկազեան երկհատոր բառարանից որ տպած է Վենետկում, 1837—1838, այն մատենների և մատենագրուԹիւնների ցուցակի մէջ որ գրած են դրված բառդիրքը շինելու միջոցին, Պղատոնական գրուածների հայերէն դրչագիր ԹարգմանուԹիւնքը գտած են Հնդկաստանի մէջ և այն տեղից հասել են Վենետկեան վարդապետների ձեռք. դոցա մասին ասվում Թէ հին դրչագիրք էին և դեղեցիկ հայկաբանուԹեամբ, ուստի հաւանական է ընծայել դորանց 5 երորդ դարուն: ՆշմարուԹիւն գրածում զգուշ է այս ԹարգմանուԹիւններից. դոնեայ այս տեղ եղած դրքերի տպած ցուցակի մէջ տեսած չենք Պղատոնի գործերը:

Սոադիրացի Արիստոտելի գրուածներից Դաւիթ Հնդաղիի ձեռքով հայերէն Թարգմանվել են սքա. 1. ՅորդորուԹիւնք Արիստոտելի (Κατηγορίαι). 2. Յաղագս ՄեկնուԹեան (περὶ Ἑρμηνείας). 3. ՄեկնուԹիւն ի Վերլուծականն (Ἀναλυτικῶν προτέρων καὶ ὑστέρων βιβλία). 4. Թուղթ առ Ղեքսանդրոս Թռչասէր յաղագս աշխարհի (περὶ Κόσμου). 5. Թուղթ առ Ղեքսանդրոս Թռչասէր յաղագս առաքինուԹեանց (Περὶ τῶν ἀρετῶν καὶ κακιῶν): Սոքա բոլորը հրատարակված են տպագրուԹեամբ մի հատորի մէջ Վորիւն աքանչելու և Մամբրէ վերծանողի գրուածների հետ միասին, Վենետկեան Վաղարշ վանքումը, 1833 Թուականին: Յոյն Դաւիթ անյաղԹին ընծայումն Պորփիւրի ներածուԹեան (Εἰσαγωγὴ Πορφυρου) ԹարգմանուԹիւնը, նորա մեկնուԹեան հետ միասին, որ նոյնպէս տպագրած է վերոյիշեալ հատորի մէջ:

Կան և այլ յունական գրուածների անանուն Թարգմանու-

թիւնք որ հաւատոյ չէ պրպտօք վերաբերեալ՝ 5 երրորդ դարուն թէ ոչ. զոր օրինակ կիւրեղեայ Երուսաղեմոյ առաջնորդութիւնը, որոնց հայերէն թարգմանութիւնը կարգացել է Գրիգոր մագիստրոսը 11 դարու մէջ, ինչպէս ասում է ինքը, Փլաւիոս Յովսէփոս Հրէայի պատմութիւնը հրէական պատերազմի, որ 17 դարու մէջ կրկին անգամ թարգմանել է լատիներէնից Մոսէսեանոս Լ. Հայկեն (որ և տպագրած է Ընջմիածնի մէջ 1789 թուականին. մի հատոր քառածալ). այլև յոյն բժշկապետ Հիպոկրատէսի և Գալենոսի գրուածքը: Երրորդ Կղեմոս, Պաղեհատոս, Մանկիմոն, Ռեղոսոս, Պոդոդոսոս Սիկիլացին, Ալեքսիոդոսոս Թերացին, որոնց խօսքերը շատ տեղ յառաջ են բերվում Հայերէն 5 երրորդ դարու մէջ, թարգմանվել են հայերէն 5 երրորդ դարու մէջ, թէ՛ միասին Հիպոկրատեանները մէջ են բերում գոյա բանքը յունական բնագրից, այլ մասին բաց ի կշռադատութենից և կարծիքից ոչինչ չունինք:

Վասնզայն նոր մատենագրութիւն որ և իցէ ազգի մէջ սկսանվում թարգմանութեամբ և փոխադրութեամբ ուսման և դիտութեան մէջ յառաջադէմ եղած ազգերի աղբիւրից. քանի որ մի ազգ կամ մի մարդ կարող չէ ինքը մտածել, որովհետև ուսած չէր պետ էս, որովհետև տակաւին նեղ ու փակ էր նորա տեսութեան շրջանակը, այդքան էս պարտ է նա մնանել օտարի մտածութեամբ և նայել աշխարհի վերայ օտարի հայեացքով, այլև մատենագրութեան մէջ կարող էր միայն կամ թարգմանել կամ թէ փոխ առնուլ միանգից: Էյս տեղ հարկաւոր էր սեփականել թէ օտար դիտութիւնը և թէ այդ դիտութեան արտաքին ձևաւորութիւնը և կերպարանքը մատենագրութեան մէջ: Մի շատ բնական երևոյթ է, որ այն լեզուն և մատենագրութիւնը, որոնց ազդեցութեան տակ դաստիարակվել ու կրթվել էր մի ազգ, դարձմունի իւր կեանքը և այդ ազգի մատենագրութեան ոճի վերայ. ոյժ կարող է, զոր օրինակ ուրանալ Ֆրանսիական և գերմանական լեզուների ազդեցութիւնը Ռուսաց ազգի մատենագրութեան թէ նկարչին պարտութեան և թէ արտաքին ձևաւորութեան վերայ. քանի՛ Ֆրանսիական և գերմանական օտար ոճեր սեփականել է Ռուսաց լեզուն և զարգանալով իւր հարազատ ազգային նիւթերի հետ, շինել է իւր յատուկ ձևութիւն: Էյդոյ հին մատենագրութիւնը յառաջացել է չորրորդ և հինգերորդ դարումը, Էյդ առանալով իւրանից կրթութիւնը կամ ասպի և կամ թէ մանաւանդ յա-

նական դպրոցների մէջ, և այդպէս ասորի և բիւզանտեան մտաւորականները եղած են միշտ օրինակ և առաջնորդ մեր հայերի համար մտաւորականութեան ասպարէզի մէջ։ Այդ ուղղութիւնը երևումէ այն և մինչև վերջին ժամանակներս։ Սորանով դեռ ևս չկամինք ասել թէ հայոց մտաւորականները անտես են ապել հին Յունաստանի ականաւոր հեղինակների գլուածքը. ոչ. պողանից շատերը, ինչպէս ցոյց տուեցինք վերևում, թարգմանված են հայերէն, բայց միա դնելով այն ժամանակի ոգևորութիւնը, երբ հայասանի մարդիկը գիմում էին դէպ ի Յունաստան դիտութիւն խնդրելու, Յունաստանը դարձել էր արդէն Բիւզանտիան, և հելլենական պարծանքի գարնիքը հելլենական ազատութեան հետ միասին թառամած ու խամրացած էին, և հայոց ուսումնասիրիչը երիտասարդներին միտքը միայն հելլենական այգու մէջ ճոպաքաղ անելը, փոխանակ պղատոնական ակադեմիային աշակերտելու, հերիքանալ նոր պղատոնական ուսման վարդապետութեամբը։ Նոյն իսկ քրիստոնէութիւնը, բիւզանտեան եկեղեցին լինելով մայր եկեղեցի, քրիստոնէական ուղղափառութեան և կանոնադրութիւնների սահմանող, ականաւոր մտաւորականը ուսուցիչների դասախօսակ, յունականութիւնը հայերին որպէս օրինակ և առաջնորդ նոյն իսկ բիւզանտեան հոգևոր մտաւորականութիւնը, և այս աղբիւրից հայերը առել են իւրեանց մտաւորական ճաշակը և կրթութիւնը։ Հայոց հելլենականներից ոմանք իւրեանց բուն գլուածների մէջ ևս ցոյց տանում են այնպիսի խորին հելլենաբանութիւն, որ շատ տեղ մըտքով պիտոյ էր դուշակել, քան թէ բառացի հասկանալ նոցա խոսքը, զոր օրինակ Մովսէս Խորենացին, Դաւիթ անյաղթը, Դրիդոր մագիստրոսը (տասն և մի երրորդ դարու մէջ)։ Հայերը ընտիր ընտիր թարգմանութիւնների մէջ միակելով իւրեանց լեզուի լոգիկական ձևերը, տալով նորան հաստատուն օրէնք ու կանոններ, այդ ձոխացնելով իւրեանց հոգին բազմամտութեամբ գաղափարներով, սկսում են նայել իւրեանց անձը ազգային պատմագրութեան, ընդհանուր փիլիսոփայութեան և հոգևոր մտաւորականութեան. բանասիրութիւնը, այս զմայլեցուցիչ դուստրը քաղաքական ազատութեան, այս ծագիկը որ կարող է միայն դոյանալ ազատութեան հողի վերայ, ջանելով իւր հարկաւոր պայմանները, ստանում հայերի մէջ մի այլ միայնական ուղղութիւն. քրիստոնեայ հայասանի բանասիրութիւնը այլազգիների ծառայութեան լծի տակ

դարձել է միայն եկեղեցական տաղերգութիւն, միակ հանդէսը ուր բանաստեղծը կարող էր թռիչք առնուլ և սուրբ հոգեզմայլութեան մէջ ղարկել սրտի քնարի լարերը մեծացուցանելով քրիստոսեան եկեղեցու նահատակները։ Այսոց բանաստեղծութիւնը լինելով մի սուրբ բանաստեղծութիւն և հոգելից վարդապետների գրուածք, ունի արդարև ազգային գեղեցկութիւնք, միայն թէ այլ սուրբ տաղերը երգվէին մի փոքր ներդաշնակ և հոգելից եղանակներով։ Նորերումս մի բեղմիացի հայազէտ ուսումնական, Ղևոնդ անուանով, Լուիզին քաղաքումը հրատարակել է ֆրանսիական թարգմանութեամբ Այսոց շարականոցի մի քանի ընտիր նուագերգութիւնք։

Ազգերդ դարու սկզբումը Այսատանի որդիքը իւրեանց թագաւոր Տրդատի հետ միասին, Գրիգոր լուսաւորչի քարոզութեամբ ընդունելով քրիստոնէական հաւատը. կռապաշտ, վայրենաբարոյ Այերը մկրտվելով քրիստոնեայ, ծնանում են և «ի ջրոյ և ի հոգւոյ», մի նոր կենդանութեան առաւօտ լուսանալով նոցա վերայ, ի դըրդող և շարժող նիւթ նկատ մնանելով նոցա քնած ու սառած կեանքի մէջ։ Ազգերդ դարը ամենևին իրաւացի համարվում Այոց մատենագրութեան և հին դրաւոր լեզուի ոսկի դարու յառաջընթաց կարասկետը։ Առաջին մատենագիրը որ այս դարու մէջ հանդիպում մեզ, է նոյն ինքն սուրբ Գրիգոր լուսաւորիչը, Անակ պարթևացի իշխանի որդին, որ լինելով ծնած մօտ 257 ին Քր. յետոյ, առաջաւ քրիստոնէական դաստիարակութիւն Կապադովկիայի Կեսարիա քաղաքում։ Գրիգորիոս, Այերը հայկական եկեղեցու և առաջին պատրիարքը Այսատանի, ձեռնադրվեցաւ եպիսկոպոս, սուրբ Լէոնտիոսի (Ղևոնդի) ձեռքով Կեսարիայի մէջ, 302 թուականին։ Ազբիւրն, երբ որ Լուսաւորչի անյողդողդ արիութեամբ աւետարանական ուսումը օրէ օր ամենով զօրացած էր և նոյն ինքն թագաւորը իւր առաւել եւեռնի մեծամեծներով ընդունել էր մկրտութիւնը, Գրիգորիոսը յիշեալ թուականին ուղղակվեցաւ բազմաթիւ ընկերակիցներով դէպ ի Կեսարիա Լէոնտիոս եպիսկոպոսի մօտ, որ նուիրվեր որպէս հովիւ նոր հայկական եկեղեցու համար։ Կեսարիա քաղաքը, որ հին ժամանակներում ասվում Մաժակ, այս պատճառով երկար ժամանակ համարվում մէջ Այսատանի մայրաքաղաք, և Այսատանի բոլոր եպիսկոպոսքը կամ պատրիարքները մինչև Սահակ որ 390 ից մինչև 440 թուա-

կանը վարել է պատրիարքական գահաւանը, նահիւմ մէին Կեսարիայի մէջ:

Ապէս դրուածք Գրիգորիոս լուսաւորչի յայտնի են հոգևոր ձառեր մի գրքի մէջ որ ասվում Յաճախապատում, որ նախ և յառաջ տպվեցաւ Կոստանդնուպոլսի մէջ 1737 թուականին, յետոյ և՛ նեռակի մէջ 1840 ին: Այս գրուածը պրչագիր գտանվում փարիզի կայսերական գրատան մէջ հայերէն և յունարէն լեզուով: Եթէ այս գրուածի հարազատութիւնը կարող էր պահպանել իւր կշիռը պատմական կրիտիկայի առաջև, ապա շատ յարգի է դա որպէս աղբիւր ծանօթութեան հին հայկական եկեղեցու թէ հաւատոյքի և թէ արարողութիւնների մասին: Հայկական եկեղեցու հիմնարկութիւն ընծայվում նոյնպէս շատ աղօթքներ յայոց ժամագրքի մէջ, որպէս և մի քանի կանոնք յայոց եկեղեցական կարգների հաւաքածոյի մէջ: Այդ կանոնները թուով երեսուն են, վերաբերվելով քրիստոնէական դնոյքին և բոլոր ու վարքին. սոքա յառելացուցած են Նիկիական առաջին տիեզերական ժողովի քան սահմանադրութիւնների վերայ:

Սուրբ Գրիգորի պարծանքի համար պիտոյ է մանաւանդ յառաջ բերել այս տեղ, որ այս ժամանակի մէջ յառաջացած ուսումնական կրթութիւնը յայոց երիտասարդների նորա հայրական հոգարարձութեան դործ է: Այս նորհիւով յատուկ քաղաքներում հիմնարկվեցան հրատարակական ուսումնարանները, և վանքեր. և յետոյքս, ինչպէս սովորութիւն էր Ասիայի մէջ և Եւրոպայում էս մինչև դարերի ժամանակին, ազատասորութիւն իրրև դպրոց մանուկ հոգևորների դասախարակութեան և առհասարակ ժողովրդի կրթութեան:

Այս դարու երկրորդ մեսրոպիրը է Ղազարէ Փարպեցին, ազդով հռոմայեցի, Տրդատ Թագաւորի դպիրը, մի հմուտ մարդ թէ յոյն և թէ հռոմէական ուսման մէջ, ինչպէս լսում ենք նորա յատուկ բերանից ի մէջ յառաջաբանի իւր պատմագրքի որ գրել է նա իւր տիրոջ և Թագաւորի հրամանով: Ղազարէ պատմութեան նիւթը է Տրդատ Թագաւորի դարձը դէպ ի քրիստոնէական հաւատ, և վարքագրութիւնը Գրիգորիոս լուսաւորչի, որ ունէր անչափ շատ չարչարանք կրելու, մինչև յաջողվեցաւ նորան դարձուցանել դէպ ի քրիստոնէութիւն Թագաւորը և բոլոր, հեթանոսութեան մէջ ընկղմած յայոց ազգը: Եւ որովհետև այս անցքը ժամանակակից

է Վիկկլետիանոս և Կոնստանտինոս հռոմէական կայսրներին, այլև սուրբ Սեղբեստրոս պապին, ապա և հեղինակը զանց չէ առնում յառաջ բերել մի քանի ոչ անկշիռ տեղեկութիւններ այս իշխանների այնպիսի գործերի մասին, որ ունէին յարակցութիւն մատենագրի առանձին նպատակի հետ։ Ագաթանգեղոսի գործը ազատ չէ խարդախ ձեռքի աղաւաղութենից, ինչպէս ցուցանում մի բանիկական դաշնաւորութիւն Կոնստանտինոս մեծի և Սեղբեստրոս պապի մէջ, մի կողմից, և Տրդատ թագաւորի ու Գրիգորիոս լուսաւորչի մէջ միւս կողմից։ Տաստահ չէ, արդեօք յունարէն թէ հայերէն է գրած այս գործի բնագիրը, որովհետև կայ մինչև այսօր դորա և յունարէնը և հայերէնը։ Յառաջաբանները որ գրած են յունարէնի և հայերէնի ձեռագրում, ամենևին տարբեր են միմեանցից։ Հայկական բնագիրը պարունակում իւր մէջ բազում յաւելուածներ որ չկան յունականի մէջ, և հայկական ոճը այնպէս պատուական, որ Մխիթարեանք առանց երկմտութեան պնդումեն, թէ բնագիրը պիտոյ է անպատճառ գրած լինէր հայերէն։ Որպէս և է ստուգութիւնը, այսքանս հաստատ է, որ Ագաթանգեղոսը եղած է Գրիգորիոս լուսաւորչի ժամանակակից մատենագիր. նորա պատմական և աշխարհագրական ծանօթութիւնքը ամենևին ուղիղ են և ուրիշ կողմից յայտնի անցքերի և տեղերի համաձայն։ Ագաթանգեղոսը տպած է առաջին անգամ Պատանանոպօլսի մէջ 1709 թուակ. երկրորդ անգամ նոյն տեղ 1824 ին։ Արիտհկական համեմատութեամբ զանազան ընդօրինակների, առաջնորդող հիմք ընտրելով փարիզի գրատան գերազանց ընդօրինակը, տպեցին Մխիթարեանք 1835 ին երկրատառ ձևքով։

Մեր դարու մէջ փառաւորել է իւր անունը Սուրբ Յակոբ, «Օգօն» մականունամբ, եպիսկոպոս Մծբին (Նիզիբիս) քաղաքի Ասորոց միջագետքում, արևնակից ազգական Գրիգոր լուսաւորչի, և մինը այն սուրբ հարցից որ ներկայ են գտանվել Նիկիական ժողովի մէջ։ Կորանից միացել է մեզ մի գործ Ջգօն անունով, որ բաղկանում 18 ճառերից, կէս մի դաւանաբանական և կէս մի բարոյական բովանդակութեամբ. սոքա, լսաինների թարգմանած, և ուսումնական ծանօթութեամբք Ընտնկլլի կարդինալից տպվեցան Հռոմի մէջ 1736 թուակ. յետոյ Վենետկի մէջ 1765 ին։ Հայկական բնագիրը տպած է Կոստանտնոպօլսում 1824 թուականին։

Գրիգոր լուսաւորիչը տպրածելով քրիստոնէական հաւատը

Հայաստանի մէջ և կործանելով հեթանոսական կռոնի պաշտօնատեղիքը, այնու ամենայնիւ այնքան իմաստութեամբ վարվել է Հայաստանի քուրմերի հետ, որ դոցա, երբ որ դարձել էին դէպ ի քրիստոնէութիւն, ինչքան կարելի էր, Թոյլ տուեց այն շահեցողութիւնքը և իրաւունքը որ նոքա վայելած էին առաջին ժամանակներում, որով և տեղիք չտուեց նոցա յուսահատ լինելու: Այս նորընծայ քահանաների որդիքը և ազգականքը սովոր էին և առաւելապէս նուիրվել որպէս աւետարանի քահանայք: Այնու ամենայնիւ, քրիստոնէութեան նախքանաձութեան առաջին ժամանակումը, Լուսաւորիչը զգուշէր մեծ պակասութիւն հոգևոր հովիւների, ինչպէս նա գանգատում է Լեոնտիոսին: Այս պատճառով աշխատում նա դրաւել դէպ ի իւր մօտ յոյն, ասորի, և եգիպտացի քահանայք և արեղայք որպէս հոգևոր օգնականք իւրեան և աշխարհի քարոզութեան և հոգևոր պիտոյքը լրացանելու համար: Ա՛ինը այս Ասորիներից էր Օ՛նոբ Ալբաք, որ պատմագրել է քրիստոնէութեան նախքանաձութիւնը Տարօն գաւառի մէջ: Նա, ինչպէս ինքն ասում է, էր սկզբում եպիսկոպոս Նիսիբայի, յետոյ իւր եպիսկոպոսական պաշտօնը յանձնեց իւր եղբայր Նղիալային և ընդունեց Լուսաւորչի հրաւիրանքը դէպ ի Հայաստան: Սորան Գրիգոր լուսաւորիչը առաջին սրբազհայր կարգեց Յովհաննէս Ա՛կռաչի վանքում Տարօնի մէջ: Ընտրելը նորա ասորի պատմագրքի որ Լուսաւորչի հրամանով գրել էր նա, մի և նոյն միջոցին թարգմանվեցաւ հայերէն և դարերի ընթացքումը յառաջ է տարվել նոյն վանքի յաջորդ սրբազանների ձեռքով: Այս գործի յառաջատարումը Յովհաննէս Ա՛միկոնեանի ձեռքով եօթներորդ դարու մէջ, սովորաբար գտանվում է թէ գրչագիրը և թէ տպագրած օրինակների մէջ: Օ՛նոբի գործը և նորա շարունակողի յաւելուածը տպվեցան Կոստանդնուպօլսի մէջ 1713 թուականին, յետոյ աւելի կրիտիկական կերպով, գրչագիրների համեմատութեամբ, 1832 ին Վ՛ենետկի մէջ Ա՛իրիթարեանց ձեռքով: Այս գրուածքը դերմաներէն թարգմանել է Հայդեհ դերմանացի Նէյմանը, ինչպէս լսումենք նորա բերանից. բայց այդ թարգմանութիւնը տեսած չենք:

Ուշակատար էր այս գարու մէջ շատ պատճառներով, սուրբ Ներսէս առաջինը, մանաւանդ Ա՛ճ, Գրիգոր լուսաւորչի թոռնորդին, վերկորդ Հայրապետը Հայոց: Նա 364 թուակ-

յայնըդեպ փառնեբսեհին և մի ականաւոր ուսումնականութեամբ մարդ էր, այլև հայրականամ հոգւոբարձու չքաւորներին, որոնց հա- մար շինել է բազում աղքատանոցք: Նա հիմնարկեց շատ եկեղե- ցիք, ուսումնարանք և վանքեր որ յետագայումն դարձան դիտու- թեան դպրոցք Հայաստանի մէջ: Իւր հոգևոր կոչմանից յառաջ ամուսնացած էր մի յոյն իշխանի դստեր հետ, որից ծնաւ մի որ- դի, որ յետոյ յաջորդել է նորան հայրապետական աթոռի վե- րայ, ինչպէս կը տեսանենք շուտով: Հայոց Թագաւորութեան քա- ղաքական անցքերին և բազմադիմի խառնակութիւններին որոնց ա- կանատես է եղած նա, դուանուամենք նորան շատ կերպերով մաս- նակից: Ներսէսը մի քանի անգամ որպէս դեսպան ուղարկված է դէպ ի Կոստանդնուպօլիս, և որովհետև նա չկամեցաւ ընդու- նել Երիանոսեանց դաւանութիւնը, այդ պատճառով վանեցին կայսրը, փառատոս պատմագրի վկայութեամբ, աքսորել էր նո- րան դէպ ի մի անապատ կղզի Եգեյեան ծովի մէջ: Եյլև, այս Ներսէսը ներկայ գտանվեցաւ երկրորդ կոստանդնուպօլսեան ընդ- հանուր ժողովին, որին տեղիք էր տուել Մակեդոնիոսի ազանգատու կարծիքը: Ներսէսի անունով յայտնի են մի քանի վանական կա- նոնադրութիւնք և միւս, ժամերգութեան վերաբերեալ փոքրիկ գրուածք: Նորա աշակերտներ էին այն երկու մեծատոհմ ձրադները հայկական մատենագրութեան, Սահակ պարթեւացին և Մեսրովբ Մաշտոցը որ մեք կամիմք ասել նորա առաւել պատուական վաս- տակները: Ներսէսը վախճանեցաւ դեղամահ լինելով Հայոց Թա- գաւոր Տիրանի հրամանով, 384 Թուական., երբ որ արդէն երեսուն տարի բազմադիմի պատահարների մէջ պարծանքով լցուցել էր կաթողիկոսական պաշօն:

Որպէս մատենագիր չորրորդ դարու հայոց է և փառատոս բիւզանտացին, որ գրել է մի պատմութիւն որպէս շարունակու- թիւն Եզանթիանգեղոսի մինչև 390 Թուական. 1832 Թուին վենետկում տպած, փառատոսի պատմութեան նախադասութեամբ դիտո- ղութիւն տպած, փառատոսի հեղինակը այս գործի, շատ տիղուխ Հայոց նախարարական տեղից, Սահառունեանցից: Եւ այս տեղից պիտոյ է ծնած լինի նա Կոստանդնուպօլսի մէջ, ըստ որում չորրորդ դարումն որպէս և հինգերորդումն շատ Հայեր տեղափոխված են Հայաստանից դէպ ի այդ քաղաքը: Փառատոսի Բիւզանտացի լինելը և բիւզանտական հոգով դաստիարակվիլը և-

բևռամէ այս տեղ և այն տեղ արդարև նորա յատուկ գործի մէջ. Ո՞ազար փարպեցին միտ չդնելով այս պայմաններին, կարծում թէ փաստոսի պատմութիւնը, ուր երևումեն տեղ տեղ նեղսիրտ Ֆանատիկոսութեան հետքեր, կարելի չէր ընծայել մի մարդու որ իւր կրթութիւնը ստացել է մի այնպիսի հռչակաւոր և լուսաւոր քաղաքում որպիսի Ալեքսանդրիան էր. մեր կարծիքով, իսկ և իսկ այդ աղբիւրից կարող էր մի հոմանհոգի ՀԱյ ասել թէ «ՀԱյք ընդունել են միայն քրիստոնէական հաւատը, սեղան օրհնելու համար:» Խնդիր է նոյնպէս, արդեօք Կոստանդնուպօլսի մէջ ծնած հայ փաւստոսը յունարէն թէ հայերէն է գրել իւր գործը. Ա՞խ թարեանք միտ դնելով այդ գործի ընտիր հայկաբանութեանը, համառումեն նորա բնագիրը հարազատ հայերէն. բայց իրաւացի տեղիք կայ տարակուսելու այս մասին, ըստ որում ընտիր հայկաբանութիւնը և հելլենաբանութիւնը չլինելով միմեանցից շատ տարբեր, մանաւանդ պատմական ոճի մէջ, կարելի է ընդունել, որ բիւզանդացի փաւստոսը գրել է իւր գործի բնագիրը յունարէն, իսկ յետոյ մի այլ բանագէտ ոք թարգմանել է նորան հայերէն:

Փաւստոսի պատմութեան առաջին դիրքը սաւում է երրորդ, ոյով հեղինակը կամի համարել իւր գործը որպէս շարունակութիւն Ագաթանգեղոսի: Թադէոսի առաքելական քարոզութեան, և քրիստոնէական հաւատի ներքսածութեան պատմութիւնը մինչև Գրիգոր լուսաւորչի մահը 332 թուական.—ասում փաւստոսը իւր առաջին կամ երրորդ գրքի առաջին գլխում — թէ բաւական յայտնի էր ահա ուրիշ մարդերի գրուածներից: Նա պատմում միայն ՀԱյաստանի մէջ եղած անցքերը և պատահմունքը Խոսրով երկրորդի (որ թագաւորել է 344 յց մինչև 353), Տիրան երկրորդի (որ թագաւորել է 353—363), Արշակ երկրորդի (որ թագաւորել է 363—381), Պապի (381—384), Վ՞արազդատի (384—386), Արշակ երրորդի, Վ՞աղարշակ երկրորդի (386—388), և Խոսրով երրորդի (388—392) օրերում, ուրեմն ընդ ամենը չիսուն տարու մէջ եղած անցքեր: Ա՞յս բոլոր ժամանակամիջոցում ՀԱյոց թագաւորքը նմանումէին կրկնակի հարկավճար ժողովրդական առաջնորդերի որ մեր ժամանակումն թափառումեն Հինտանի և Ինդաստանի սահմանների մօտ. ՀԱյոց թագաւորքը պարտական էին հարկ վճարել երկոցունց ևս, Պարսից և Բիւզանդացոց, այդու ամենայնիւ իւրեանց հայրենի աշխարհում չէին ել-

բէք բացարձակ իշխանք։ ՚Ի այսոսանը, ինչպէս բոլոր Պարթեւական պետութիւնքը, էր մի կալուածական միապետութիւն, և, ինչպէս տեղեկանում ենք պատմութենից, չորրորդ դարումը 170 իշխանք կամ նախարարական տուներ ունեցած են ՚ի այսոսանի մէջ իւրեանց ժառանգական միրապետութիւնքը։ Փաւստոսի պատմագրութիւնը պակասաւոր է որպէս մի գործ առանց որ և իցէ ուղիղ չափի և դասողութեան. յատկապէս, նորա թուական տահմանողութիւնքը երևումն կամ նոյն իսկ մատենագրի կամքով անձնական չափազանցութիւն, կամ թէ ապաշտպ օրինակողների ձեռքով դիւտաւորութեամբ աղաւաղած։ Փաւստոսի պատմութեան առաջին տպագրութիւնը եղել է Կոստանդնուպօլսի մէջ 1730 ին, հետևելով մի հատ ղէշապրի. նորատիպը Վ՚ենետկի մէջ 1832 ին, հոգացվել է համեմատելով միմեանց հետ հինգ ղէշագիրք և դոցա դիմաւոր զանազան ընթերցուածքը այս տեղ ու այն տեղ դնելով բնագրի տակ։

՚Ի սկիզբը դարու ձախաւումը որպէս մի նախիլ պարագլուխ հայկական լուսաւորութեան, որպէս մի յաւիտեան քաղցր պատկեր ՚ի այդ դպրութեան պատմագրի հոգու առաջև կանգնած է պարթևացի Սահակ մեծը, տասներորդ հայրապետը ՚ի այսոսանի, ծնած Կոստանդնուպօլսի մէջ, Ներսէս մեծի որդին և ձեռնասուն աշակերտը. 390 թուականին հասանելով պատրիարքական աթոռի, ամբողջ չիսուն տարի ամենազգաստ արթնութեամբ կառավարել է նա ՚ի այսոսանի եկեղեցին այն բազմապատիկ փոթորիկների տակ, որոնց ունէր դա համբերելու այն միջոցներում։ ՚Ի այդ պատմութիւնը և պատմագիրը կարող չէ լսել թէ այս մեծ և հոյակապ տղամարդը ոչպիսի անարժան ապերախտութեամբ ՚ի այդ նախարարների և մեծատուններից կողմից, ոչպիսի անարդ մատնողութեամբ Պարսից Թագաւորի առաջև հրաժարվել է իւր հայրապետական պաշտօնից և 340 թուական. կնքել է իւր ձոխաւատակ կեանքը մի տխուր առանձնութեան մէջ, սիրտը կոտրած, հոգին լցուած սրտում մնալգարէութեամբ ապագայի վերայ։ Երկար կը լինէր այս տեղ մանրամասնաբար պատմել Սահակ պարթևացու վարքը որ այնպէս մեծ կապակից է նորա ժամանակի պատմութեան հետ, որ առանց տրան կարող չէ ոչ պատշաճապէս հասկացվիլ և ոչ արժանապէս գնահատվիլ։ Նորա գիտնականութիւնը

և մեծամեծ վաստակները Հայոց ազգի կրթութեան առաջին մէջ կարելի է դատել նորա դործերից, որ սքա են.

Պետրոսեան թարգմանութիւնը հին կտակարանի, եօթանասուն թարգմանիչների հիման վերայ, որի մասին խօսած ենք ար դէն այն թարգմանութիւնների շարքում, որ հինգերորդ դարում եղած են յունական լեզուից: — Մի ձառ եկեղեցու և հոգևորների բարեկարգ վարման մասին. այս աշխատութեան խորհուրդը այն էր, որ արտաքին աստուածպաշտութեան անտեսութիւնը աւելի բարւոք հանգամարդէ, սաղմոսերդութիւնքը աւելի պատշաճաւոր կանոնաւորէ, այլև ծեսերը սահմանէ մի բարեկարգ ծեսատուփի հաստատուն կանոններով: — Խոյ ի սուրանից Մովսէս Խորենացին իւր Հայոց պատմութեան երրորդ գրքի մէջ պահպանել է մի քանի նամակներ որ Սահակ պարթեւացին գրած էր դէպ ի կայսր Թէոդոսիոս կրասերը, դէպ ի Ատտանատուպոլսի Ատտիկոս պատրիարքը և Ինատոլիոս գլխաւորը: Այլև, Սահակ պարթեւացու անուամբ պահպանուած են մի քանի երդեր Հայոց Շարականոցի մէջ:

Ոչ Հային յայտնի չէ Մեսրոպ Մաշտոցի, հայկական նշանագրերի հանճարեղ հնարագործողի անունը. սա էր Գևորգայ մեծի միւս հայակապ աշակերտը, որպէս նորա վարքագիրը Կորիւնի նոյնպէս և Ղազար փարպեցու վկայութեամբ ծնած Հայկի գիւղը Տարօնի մէջ: Նորա ծնողի անունը Վարդան էր, որ սկզբնապէս մանկութենից դաստիարակել տուեց իւր որդին յունական ուսման մէջ: Մեսրոպը դիմեց թագաւոր Խոսրով երրորդի մօտ և պաշտօն յանձն առաւ արքայական դպիրների մէջ· այն միջոցին, Հայոց թագաւորների բոլոր հրամանները, հրովարտակները և դիւանական գործերը գրվում էին յունական, տասրի և պարսկական լեզուով: Մեսրոպը մի քանի տարի կատարելով գրի պաշտօն, գրատանվաճ է միշտ անպատուր իւր ծառայութեան մէջ: Բայց ինչպէս մի նաւ, ալեբնեերից տատանվաճ, շատրում, դէպ ի նաւահանգիստ, նոյնպէս շատրում էր նա դէպ ի տանձնութիւն, որ աշխարհի հոգսերից աղատ կրնէ իւր իմնայականութիւնը: Նա տեղափոխվեցաւ դէպ ի Գողթն գաւառը Արտասի մօտ, ուր տպրում էր միայնակեաց թեամբ և հին ժամանակներից այս տեղ մնացած, կամ թէ կրկին դէպ ի նահանի կրակապաշտութիւնը յօժարվաճ Հայերը գործում դէպ ի քրիստոնէական հաւատ: Հայոսի գործերով պարապած, տպրում էր Մեսրոպը երբեմն այս և երբեմն միւս գա-

սառամբ Հայաստանի, մինչև Կ. Պոլսի հաստատուիլ, Խոսրով երրորդի եղբօր Թագաւորութեան հինգերորդ տարին (397)։ Յետոյ Մեսրոպ գնաց Վրաստան հռաժարկութեան իւր միայնակեցութենից և գալիս է Սահակ կաթողիկոսի մօտ։

Թէ Մեսրոպ մաշթոցը ճանապարհորդելով և ապրելով Հայաստանի գաւառների մէջ ինչ դրութեան մէջ էր գտած Հայոց ուսանող մանուկները, և թէ քանի՛ քանի՛ պատճառք էր ստացել ցաւելու բոլոր հայկական ազգի վերայ որ իւր աղօթքը և եկեղեցական պաշտօնքը առիսլած էր կատարել օտար ասորի լեզուով, որ անհասկանալի էր նորան, և թէ նոյն իսկ հոգևոր պաշտօնեայքը ոչքան ատաւապանք սիրտ կրէին թէ ինչքանք հասկանալու սուրբ գիրքը ասորի լեզուով և թէ դորան մեկնելու ժողովրդին եկեղեցու մէջ — այս նիւթի վերայ խօսած ենք մի այլ տեղում, ուր խօսք կար Հայոց նշանագրերի գիւտի վերայ։ Եղանելի Մեսրոպը վաղուց սրտին յղացել էր իւր մէջ այն հոյակապ խորհուրդը հնարելու Հայոց համար իւր սեփական այբուբենք, կամ թէ արդէն ուրիշ լեզուների համար հայոնի եղած նշանագրերից բաղադրել մի այբուբենք որ յարմարաւոր էր Հայոց լեզուի ղանդաղան ձայներին։ Հետևեալ Սահակ պարթևացին դէպ ի նորնը ձգտելով, նոյն բանին ցանկալով ջերմեռանդ, յայտնեց Կ. Պոլսի Թագաւորին Մեսրոպի դիտաւորութիւնքը։ Մեսրոպեան տառերի գիւտը թէ ինչ խորհուրդ է ունեցել և ունի Հայերի թէ քաղաքական և թէ կրօնական դրութեան մասին, խօսել ենք նոյնպէս իւր տեղում։ տանք միայն այս տեղ, եթէ Մեսրոպը չվաստակած լինէր այլ վաստակներ Հայոց լուսաւորութեան հանդիսի մէջ, բայ ի հայկական տառերի գիւտը, և այնպէս արժանի է նա դասակից լինելու Հայոց աղգի ամենամեծ բարերարներին։ Պատճառ, եթէ Հայերը այն բոլոր փոթորիկների տակ, որ սկսեալ հինգերորդ դարուց եկել են փոքր Ասիայի և մանաւանդ թէ Հայաստանի վերայ, պահպանվել է որպես մի ինքնիշխան քրիստոնեայ ազգ, այդ բանը այս առանձին, ազգային լեզուին յարմարեցրած նշանագրերի պատուին է, և դորանով միայն հնարաւոր է դարձել մի հարուստ մատենագրութիւն և մի ազատ ինոցական կրթութիւն ազգի։ Մեսրոպը վեց տարի ժամանակ վարելով կաթողիկոսական պաշտօն, Սահակից յետոյ, մեռանում է 441 թուականին։

Ա. Ժամ Թող հանդէս գան Սահակ պարթևացու կենդանի վաս-

սակքը: Ասցա կարդում յառաջ բերինք նախ և յառաջ Նշնիկ Կողբացին, մինը նորա առաւել ականատես աշակերտներից և շատ հմուտ հայ, յունական, ասորի և պարսիկ լեզուներին: Վերագաւնալով մի ճանապարհորդութենից որ արել էր դէպ ի Ասորոց միջագետքը և դէպ ի Կոստանդնուպոլիս, սուրբ Էջմիածնի գլուաձքը ձեռք բերելու, սկսաւ նա թարգմանել նոցանից շատերը: Ասց ի դորանից շարադրել է նա այս սեփական գործերը. նախ, Նշանագիրս (հերքումն զանազան սաղմոսների), որ բաժանած է չորս գլխի, որոնցից առաջինը ուղղեցուցած է ընդդէմ հեթանոսներին, երկրորդը ընդդէմ կրակապաշտ Պարսիկներին, երրորդը ընդդէմ Յուդայեցի վիճաւոխանների, չորրորդը ընդդէմ Մարկիոնի հետևողներին և Մանիքեան աղանդաւորներին: Այս գլուաձի մէջ մեծահանճար Նշնիկ Կողբացին յայտնակութեամբ և ամենայն ստուգաբանական ճշդութեամբ խօսում ամենազգուարին ստուգաբանական խնդիրների վերայ, որպէս և Ասուծոյ ամենագիտութեան և մարդուս ազատ կամքի վերայ: Այդ գործի մէջ գտանվում են տեսակ տեսակ սակաւագիւտ առասպելական զրոյցք և տեղեկութիւնք Յարեղնացոց մնացորդաշտութեան, Պարսից կրօնի ուսման և Մարկիոնի հաւատոյաբանութեան մասին: Այս գործը տպագրութեամբ հրատարակվեցաւ առաջին անգամ Վենետիկում 1762 թուակ., յետոյ աւելի ճշդութեամբ և մաքրութեամբ վերստին մէջ 1826 ին: Նշնիկը շարադրել է նոյնպես Յարոյական խրատք որ տպած են նորա «Դէմ աղանդոց» գործի վերջում: Վերջինիս դերմանացին բառիկական թարգմանութեամբ հրատարակել է առաւել էական մասը Նշնիկ Կողբացու «Դէմ աղանդոց» գործի:

(Շարունակութիւնը յետոյ)

Ս. Պալեանց.

1. Հրատարակեալ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Նիւթական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոյա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր գանազան ֆիզիքական յայտնագործութեանների, հասարակաւոր Աստղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլոգիայի վերայ. այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութեանների մասին:

3. Նարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մտանշագրութեանից. այլև Արիթիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածներէ վերայ:

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «Сѣверное Сіяніе», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի Հասցեով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Печатать позволяется. С. Петербургъ, Марта 9-го, 1860 года.

Цензоръ В. Бекетовъ.